ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(76-րդ տարի) **Թիվ-1** (1659) Հունվար 2022

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Համախմբվել՝ միավորելով առավելությունները (էջ 1-2)

2- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան

Հայ-ռուսական հարաբերությունների բարդ թնջուկը (էջ 3-6)

3- Տարածաշրջանային

Վահե Սարգսյան

Տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորումը. 2021 թ. ՏԻՄ ընտրությունները Վրաստանում և դրանց ազդեցությունը Ջավախքի վրա (էջ 7-14)

4- Աշխարհաքաղաքական

Արմեն Պետրոսյան

Տարածաշրջանային զարգացումների ընդհանուր միտումները 2022 թվականին (էջ 15-19)

Լիանա Պետրոսյան

Ադրբեջանական իշխանությունների քաղաքականությունը թալիշների նկատմամբ (էջ 20-22)

Նարե Գևորգյան

Էթնիկ փոքրամասնությունների խնդիրը Թուրքիայում: Զազա-ալևիներ (էջ 23-26)

5- Պատմության լուսարձակ

Անի Մելքոնյան

Հայկական ռազմական ուժի պատմությունից (էջ 27-30) (մաս 1)

Մարիամ Հովսեփյան

Միլլի շարժումը Կ. Պոլսի «Ճակատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերի էջերում (1919-1920 թթ.) (մաս 2) (էջ 31-33)

6- Հասարակություն

Տիգրան Չանդոյան

Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի պաշտամունքի կառուցարկումը և հետմահու պաշտամունքը Թուրքիայի քաղաքական համակարգում (էջ 34-38) (հոդված 3)

7- Հարցազրույց

Հարցազրույց «Համազգային» հայ կրթական եւ մշակութային միութեան կեդրոնական վարչութեան ատենապետ Մկրտիչ Մկրտիչեանի հետ

Մշակութային ժառանգութեան տարրերը արդիականացնելով հաստատուն քայլերով ուղղուիլ դէպի երաշխաւորեալ ապագայ: (էջ 39-42)

8- Անմահները

(էջ 43-44)

Համախմբվել՝ միավորելով առավելությունները

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն 2022 թվականը հռչակել է Սփյուռքի տարի: Նկատի ունենալով Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից Արցախի դեմ սանձազերծված պատերազմն ու հայության կրած մարդկային, տարածքային և մշակութային ծանր կորուստները՝ Կիլիկիո կաթողիկոսը 2021 թվականը հռչակել էր Արցախի տարի: Հաջորդող 2022 թվականը Սփյուռքի տարի հռչակելը ենթադրել է տալիս հիմնահարցի լրջության մասին: Եվ իսկապես, կաթողիկոսական պատգամում, որը հրապարակվել է 2022 թ. հունվարի 1-ին, ասվում է. «….Հայ ժողովուրդն իր երեք թեւերով՝ Հայաստան, Արցախ եւ Սփիւռք, բազմաթիւ ու բազմազան մարտահրաւէրներ ու վտանգներ կը դիմագրաւէ, իսկ հայօրէն մաշումի ենթակայ Սփիւռքը՝ աւելի՛ն: Տեղ մը ան անորոշութեան ալիքներու մէջ կ՚օրօրուի, այլ տեղ փոթորիկներու դէմ կը պայքարի. տեղ մը նոր ինքնութեան փնտռտուքի մէջ է, այլ տեղ՝ տեղայնացումի արագ ընթացքին մէջ: Արդ, Սփիւռքի վերակազմակերպումն ու վերակենսաւորումը հրամայական անհրաժեշտութիւն է….»: Իսկ այս նախաձեռնությունը նշանակո՞ւմ է արդյոք, թե Սփյուռքը պետք է ինքնուրույն դիմագրավի առկա մարտահրավերներին՝ ինքն իր մեջ գտնելով սեփական հիմնահարցերի պատասխաններն ու հասնելով դրանց լուծմանը: Այս հարցադրման պատասխանը կարելի է գտնել նույն կաթողիկոսական պատգամում, մասնավորապես՝ հետևյալ տողերում. «….Սփիւռքը ինքնավախճան իրականութիւն մը չէ. ան իր տեսլականը պէտք է միշտ սեւեռած պահէ Հայաստանի ուղղութեամբ, որ ողնասիւնը կը կազմէ հայ ազգի ներկային ու երաշխիքը՝ անոր ապագային: Այս խոր գիտակցութեամբ Սփիւռքը կոչուած է ինքզինք վերակազմակերպելու….»:

Կարելի է ակնկալել, որ իր իրավունքների մեջ մտած 2022 թվականին, Հայաստանի ու Արցախի գլխին կախված կենսական հիմնահարցերին զուգահեռ, շահեկան և անկեղծ խոսակցություն կծավալվի Սփյուռքի ներկայի, ներքին մարտահրավերների և դրանց հաղթահարման ուղիների շուրջ, ինչը վաղուց տեղի չի ունեցել: Ավելին՝ ամենուր և մշտապես հնչող դատողությունները Հայաստանի ու Արցախի բազմաթիվ հիմնահարցերի վերաբերյալ կարծես թե տասնամյակներ շարունակ շղարշել են հայության մեծամասնությունը կազմող աշխարհասփյուռ համայնքների խնդիրներն ու հոգսերը, որոնք հայրենիքի երկու հատվածների անկախացումից հետո, թվում է, ոչ թե նվազել, այլ ավելացել են:

Իրականում այս թեմայի շուրջ այսօրվա խոսակցությունները սկսվել են արցախյան վերջին պատերազմում կրած պարտության ու դրան հետևած հայրենի մռայլ իրականության ծանր տպավորությունների մթնոլորտում: Եվ, հավանաբար, հենց նման տրամադրությունների ազդեցությունն են երբեմն կրում արվող հետևությունները: Մասնավորապես ձեռք թափ տալով տագնապալի ու ճակատագրական իրականության նկատմամբ ոչ համարժեք կեցվածք դրսևորող հայաստանցիների վրա՝ ոմանք եզրակացնում են, թե Հայաստանի հետ հույսեր կապելն անիմաստ է, և Սփյուռքը պետք է ինքն իր գլխի ճարը տեսնի: Մնում է երևակայել, որ եթե այսպես մտածողների ձայնին ականջալուր լինեն աշխարհասփյուռ զանգվածները, Սփյուռքը դուռը փակելու է Հայաստանի՞, ողջ աշխարհն իր մեջ ընկղմող համաշխարհային նոր իրողությունների՞, թե՞ նաև ինքն իր վրա: Անաչառ լինելու համար պետք է խոստովանել, որ անցած մեր ավելի քան երեսնամյա ընթացքի հաշվեքննությանը մղող քառասունչորսօրյա ձախող պատերազմը և պարտության կառավարության «խրոխտ» առաջնորդությամբ շարունակվող համազգային նահանջը բնականորեն մղում են եզրահանգումների և՛ Սփյուռքին, և՛ Սփյուռքի շուրջ ու ընդհանրապես:

Հայրենիք-Սփյուռք մերձեցումն իրական ընթացք առավ դեռևս 1988 թվականի երկրաշարժից հետո: Խորհրդային սահմանների փլուզումը, արցախյան ազատագրական պայքարն ու հայրենի երկու պետականությունների ձևավորումը լրջագույն խթան դարձան հայության երկու հատվածների միջև ամուր ու լայն կամուրջների կառուցման համար: Դժբախտաբար, այս անգամ ոչ թե արտաքին գործոնները, այլ ներքաղաքական հաշվարկները ստեղծեցին պատնեշներ այդ մերձեցման ճանապարհին: Անկախ Հայաստանի չորս ղեկավարներից առաջինն ու չորրորդը որդեգրեցին հայությունը սևի ու սպիտակի բաժանելու, հայաստանցու և արցախցու, Հայաստանի և Սփյուռքի միասնականացման ընթացքը պառակտելու և հատվածականությունը խորացնելու քաղաքական կուրս: Երկրորդ և երրորդ նախագահները փորձեցին մերձեցնել ժողովրդի երեք հատվածներին՝ վերացնելով Հայաստանն ու Սփյուռքը շաղկապող կամուրջներին ի հայտ եկած խոչընդոտները: Եթե անկախացմանը նախորդող ու հաջորդող առաջին տարիներին հայությանը միավորող գործոններ էին իր տագնապները, պայքարն ու ձեռքբերումները, ապա վերջին շրջանում միասնականացման գործոն են ծառայել պատերազմներն ու դժբախտությունները Սիրիայում, Լիբանանում, Արցախում ու Հայաստանում:

Չնայած երկրորդ ու երրորդ նախագահների օրոք հայրենիք-Սփյուռք մերձեցմանն ուղղված զանազան միջոցառումների՝ խորհրդաժողովների ու համաժողովների, փոխայցելությունների ու ծրագրերի պակաս չկար, այսօր կարծես այդ

ամենը չի էլ եղել: Երրորդ նախագահի օրոք անգամ Սփյուռքի նախարարություն ստեղծվեց, բայց կարծես թե բարի ցանկությունները ամրագրված չէին հայեցակարգերով, որոնք պետք է նախանշեին, թե ի վերջո ինչ է ուզածներս, հայրենիքն ու Սփյուռքը ինչպես են կառուցելու իրենց հարաբերությունները՝ ելնելով հստակեցված վերջնանպատակներից ու տեսլականներից: Անաչառությամբ առաջնորդվելով՝ արձանագրենք, նաև որ այդ գործընթացին թերևս խանգարել են մի շարք կեղծ պատկերացումներ ու կանխատեսումներ: Օրինակ՝ ի՞նչ իրական ներուժ է պարունակում Սփյուռքը, և ի՞նչ ենք ակնկալում նրանից՝ մեր ընդհանուր նպատակներին միտված գործը դերաբաշխելով: Սրանից ավելի կարևոր հարց է, թե ինչ պարտականություններ ու հանձնառություններ է պատկերացնում իր համար ազգային պետությունը սեփական Սփյուռքի նկատմամբ՝ ելնելով նրա գոյատևման հրամայականներից և համընդհանուր գործի համար ներուժի կուտակման ու համախմբման անհրաժեշտությունից: Փոխարենը շոուներ հիշեցնող ու կարգախոսային բնույթի զանազան հայտարարություններ են արվել, օրինակ, զանգվածային ներգաղթի կազմակերպման վերաբերյալ այն պարագայում, երբ տեղացի բնակչությունն անգամ մշտապես ունեցել է թե՛ կեցության, թե՛ աշխատանքի և թե՛ եղած աշխատանքով քիչ թե շատ բարեկեցիկ կյանք ապահովելու խնդիր: Զարմանալիորեն այդ անիրական պատկերացումները այն նույն իրականության վերաբերյալ, որում մեր հայրենակիցներն են ապրում, եղել են ու կան ոչ միայն հայրենիքում, այլև Սփյուռքում: Ինքնաբա՞վ է արդյոք Սփյուռքը, որպեսզի կարողանա, օրինակ, ինքն իր մեջ վերակազմակերպվելով ապահովել սեփական հեռանկարը և ազգային երազանքների համար համարժեք պայքարի կարողականությունը: Զանազան դատողություններ անելիս մեր մտապատկերո՞ւմ է արդյոք կացությունը Միջին ու Մերձավոր Արևելքում, հաշվվա՞ծ է արդյոք հայկական դպրոցների քանակը Եվրոպայում, Ռուսաստանում կամ այլ գաղութներում, նկատի՞ ենք ունենում արդյոք խառնամուսնությունների թիվը նույն այս երկրներում, Ամերիկայում և այլուր:

Այո՛, հայտնի են այն տագնապները, որոնք թուխպի պես ծանրացել են Սփյուռքի մթնոլորտում ողբերգական պատերազմից, մարդկային ու տարածքային կորուստներից հետո, երբ մանավանդ հայրենաբնակ ժողովուրդը չի ընդվզում ազգադավ իշխանության դեմ, կարծես անազգայության մեջ է այն կենդանու նման, որը պառկած դիտում է, թե ինչպես են իրեն հոշոտում: Ինչու է զոհաբերությունների պատրաստ երեկվա հերոսական ժողովուրդն այսօր այս վիճակում՝ այլ խոսակցության նյութ է: Հստակ է մի բան՝ սա մեր ժողովուրդն է, սա է մեր Սփյուռքը, և երկրորդ հայ ժողովուրդ, որով կարող ենք եղածին փոխարինել, գոյություն չունի: Այս պայմաններում մենք պետք է մտածենք ժողովրդին հույս ու ոգի ներշնչելու, մահաքնից դուրս բերելու, համընդհանուր պայքարի գաղափարի շուրջ համախմբելու և կրկին ոտքի հանելու մասին, իսկ նահանջի, սեփական պատյանի մեջ պարփակվելու մտայնությունները վտանգավոր ցեցեր են ազգային օրգանիզմի համար: Այդ վարակի տարածումը չպետք է թույլ տալ, մանավանդ երբ հայրենադավ ղեկավարը Հայաստանն ու Արցախը «հաջողությամբ» պառակտելուց հետո ձեռնամուխ է եղել պառակտիչ օջախների ձևավորմանը Սփյուռքում:

Չնայած Հայրենիքի և Սփյուռքի մերձեցմանը խոչընդոտող վերիվայրումներին ձևավորվել են մնայուն կապեր, որոնք լայն ցանց են կազմում, մասնավորապես՝ մարդկային հարաբերությունների ձևով: Չնայած Հայաստանի ներկա ծանր վիճակին ու չդադարող արտահոսքին՝ կա ներգաղթ, և նորանոր ընտանիքներ են խարիսխ նետում հայրենի ափերին: Աշխարհի տարբեր ծագերում հայ մարդիկ թերթերով, ռադիոյով ու հեռուստատեսությամբ ամենօրյա կենդանի կապ են պահում Հայաստան-Արցախի հետ՝ անկախ հեռավորությունից կիսելով հայրենիքում ապրող հայրենակիցների տագնապները, մտահոգությունները, ճակատագիրը: Ի վերջո ազգային պայքարը, թեկուզ թուլացած, շարունակվում է մեկ ճակատով՝ նույն նպատակների համար: Մենք այլևս պատմության այն հանգրվանում ենք, երբ չի կարող լինել սփյուռքահայության ու հայաստանցիների կամ արցախցիների պայքար առանձնաբար՝ տարբեր թիրախների և նպատակների համար: Օրվա ապազգային իշխանություններից առաջ Հայաստանի իշխանություններն արել են քայլեր, որոնցով եթե Հայ դատի ընդհանուր պայքարի առաջնորդողն էլ չեն դարձել, ապա մաս են կազմել այդ պայքարին:

Երբ գոյություն ունի հայոց պետություն, բնականորեն հայության պայքարը պետք է տարվի պետության ակտիվ դերակատարությամբ (թեկուզ որոշ դեպքերում՝ ոչ հրապարակայնորեն): Ընդհանուր պայքարն ու ընդհանուր նպատակները այն հիմնական գործոններն են, որոնք միավորում են և պետք է միավորեն հայրենիքն ու Սփյուռքը: Առանձնաբար մղվող պայքարները կամ մեկուսի գոյությունը կլինեն կործանարար առաջին հերթին սեփական երկրի կենսունակ միջավայրից կտրված զանգվածների համար:

Հայության արտագաղթն ունի երկու հազարամյակի պատմություն, սակայն ներկայիս Սփյուռքը բնորոշվում է որպես Հայոց ցեղասպանության հետևանք: Պատճառը շատ պարզ է. դրանից առաջ ձևավորված համայնքներն այլևս գոյություն չունեն, անգամ նրանք, որոնք հարյուր տարի առաջ դեռևս կենսունակ էին: Հայկական սփյուռքը կենսունակության և երկարակեցության մեկ աղբյուր ունի՝ հայրենիքը, իսկ հայրենիքի համար հավելյալ կենսունակության և ուժի մեկ աղբյուր գոյություն ունի՝ Սփյուռքը: Մենք բոլորս ճակատագրի նույն նավի մեջ ենք և պարտավոր ենք համախմբվել՝ միավորելով մեր առավելությունները, այլ ոչ թե հակառակը: ■

Հայ-ռուսական հարաբերությունների բարդ թնջուկը

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած հերթական պատերազմը կտրուկ մեծացրեց Ռուսաստանի մասնակցությունը մեր տարածաշրջանի քաղաքական, տնտեսական և անվտանգային գործընթացներին: Պատերազմի ավարտին՝ 2020 թ. նոյեմբերի 9-ին, Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի ղեկավարների ստորագրած հայտնի փաստաթղթում, ի թիվս ադրբեջանա-հայկական ռազմաքաղաքական օրակարգային խնդիրների, անդրադարձ կատարվեց նաև տարածաշրջանային կարևորության մի շարք այլ հարցերի, որոնցից էին տնտեսական կապերի ապաշրջափակումը, կոմունիկացիաների բացումը և այլն: Իսկ այն փաստը, որ Արցախում ռուսական խաղաղապահ զորքերի տեղակայումը պատերազմի հետևանքներից մեկն է, շատ փորձագետների և քաղաքական գործիչների առիթ տվեց խոսելու այն մասին, որ Հարավային Կովկասում Ռուսաստանի ներկայությունը սկսում է վճռորոշ դառնալ տարածաշրջանի բոլոր երկրների համար՝ սպառնալով անգամ նրանց սուվերենությանը:

Իհարկե, հասկանալի է, որ, լինելով մեր տարածաշրջանի աշխարհաքաղաքական հիմնական դերակատարներից մեկը, Ռուսաստանը հաճախ դառնում է նաև ուժային այս կամ այն կենտրոնի շահերը պաշտպանող շրջանակների հարձակումների, տարաբնույթ մեղադրանքների և քարոզչական թեզերի զոհ: Միևնույն ժամանակ պետք է արձանագրել այն փաստը, որ հայ հանրությունը լիարժեքորեն տեղեկացված չէ մեր տարածաշրջանում Ռուսաստանի նպատակների, առաջնահերթությունների, քաղաքական, տնտեսական, սոցիալական և անվտանգային ծրագրերի մասին: Այս երկու իրողությունները, հաճախ՝ նաև ռուսական կողմի հակասական մոտեցումներն ու վարքագիծը, որոշակի խնդիրներ են ստեղծում հայ-ռուսական հարաբերությունների հանրային ընկալումներում, որոնք, անկասկած, կարող են լուրջ ազդեցություն ունենալ երկու երկրների թե՛ տարածաշրջանային և թե՛ երկկողմ ուղղվածության քաղաքականության վրա:

Մեծ հաշվով, դա արդեն իրողություն է: Կարծում եմ՝ գաղտնիք բացած չեմ լինի, եթե պնդեմ, որ հայ ժողովրդի մի ստվար հատված 2020 թ. 44-օրյա պատերազմի հիմնական մեղավորների շարքում նշում է նաև Ռուսաստանի անունը: Մեր հայրենակիցների այդ հատվածն իրեն դավաճանված է զգում և այլևս որևէ հույս չի կապում հյուսիսային դաշնակցի հետ: Գրեթե նույնը կարելի է ասել նաև ռուս ժողովրդի զգալի հատվածի մասին: Նրանք էլ վստահ են, որ Հայաստանն ու հայ հանրությունն ըստ արժանվույն չեն գնահատում պատերազմը կանգնեցնելուն ուղղված Ռուսաստանի ջանքերը: Նրանց խոսքերը շատ կոպիտ ու վիրավորական են և հանգում են մոտավորապես հետևյալին. «Ռուսաստանը ոչ ոքի ոչինչ պարտք չէ: Գնացեք, թող թուրքերը կոտորեն ձեզ: Մենք ձեզ փրկեցինք, իսկ դուք նույնիսկ շնորհակալություն չեք հայտնում մեզ դրա համար»:

Նշված դիսկուրսը, որը, իհարկե, շատ տհաճ է, նոր չէ ներդրվել հայ և ռուս ժողովուրդների հանրային քննարկումների օրակարգում: Կասկածից վեր է՝ դա արվել է մեր երկու երկրների թշնամիների կողմից: Եվ նրանք հաջողել են այդ գործում: Այնքան են հաջողել, որ կարողացել են կործանարար այդ բանավեճի մեջ ներքաշել անգամ հայ և ռուս այն գործիչներին, որոնք մշտապես կանգնած են եղել իրենց երկրների ազգային շահերի պաշտպանության դիրքերում: Օրինակ՝ ռուս հայտնի գրող, հրապարակախոս Զախար Պրիլեպինը: Հիշում եմ, թե Պրիլեպինը որքան դիպուկ և խոր բնորոշում էր տվել 2016 թ. Ապրիլյան պատերազմի առնչությամբ Ռուսաստանի հինգերորդ շարասյան հնարավոր վարքագծին: Իր անձնական բլոգում այն ժամանակ նա գրել էր, որ եթե Թուրքիան աջակցում է Ադրբեջանին, Ռուսաստանի հարաբերություններն էլ Թուրքիայի հետ լարված են, ուրեմն երկրի «լավագույն մարդիկ» երկրպագելու են Ադրբեջանին: «Ինչպիսի անսխալ ընտրություն են կատարում լավագույն մարդիկ դեպքից դեպք: Եթե վաղը Ռուսաստանը պատերազմի երեքոտանի մարդակեր դեգեներատների ցեղերի դեմ, որոնք կտրում և տեղում խժռում են պարտվածների սեռական օրգանները, ես գիտեմ, թե ում կերկրպագեն նրանք: Գրողը տանի, ախր դրանք անսխալական մեքենաներ են: Ո՞վ է նրանց այդպես ծրագրավորել: Թեկուզ փոքրիկ խափանում նրանց համակարգում հնարավո՞ր է», - գրել էր Պրիլեպինը: Իսկ ահա 2020 թ. սեպտեմբերի 27-ին՝ 44-օրյա պատերազմի հենց առաջին օրը, նույն Պրիլեպինը սկսեց միանգամայն այլ երգ երգել: Այդ օրը նա մի գրառում արեց, թե Հայաստանը շատ շտապ պետք է Ռուսաստանին միանալու հանրաքվե անցկացնի, իսկ «բոլոր քաղաքական գործիչներին, բլոգերներին

ու ակտիվիստներին, որոնք կընդդիմանան դրան, փաթեթավորել և ծանրոցներով ուղարկել Թուրքիա»: Փոքր-ինչ ուշ Պրիլեպինը հանդես եկավ նման մեկ այլ գրառմամբ, իսկ երբ ես ակնարկեցի, որ այդպիսի գնահատականներն ու վերաբերմունքը չեն սազում իր պես մտավորականին, ստացա շատ կտրուկ պատասխան. «Այսինքն: Իբրև դաշնակից գալ և ռուս տղաներին թաղել Հայաստանի անկախության համար: Որպեսզի Հայաստանի հաջորդ նախագահը ՆԱՏՕ-ին անդամակցելու որոշում կայացնի»[1]:

Ներողություն եմ խնդրում ընթերցողից մասնավոր և այսչափ ծավալուն մեջբերումներ անելու համար, բայց կարծում եմ, որ Պրիլեպինն իսկապես այն գործիչներից է, որոնց մոտեցումները կարելի է որպես տվյալ խնդրի ոչ միայն առկայության, այլև խորության ցուցանիշ ընդունել: Այդ մոտեցումները թե՛ հայ և թե՛ ռուս մտավորականության շրջանում վաղուց արդեն համատարած են դարձել: Փոխադարձ մեղադրանքներն անսպառ են ու անցել են բարեվարքության բոլոր սահմանները՝ ազդելով երկու երկրների քաղաքական առաջնորդների կայացրած որոշումների որակի վրա: Համենայնդեպս, հիմա արդեն կարելի է փաստել, որ Հայաստանի ու Ռուսաստանի հարաբերություններում գերիշխող է դարձել ոչ թե քաղաքակրթական, կրոնական ու մշակութային գործոնների ազդեցությունը, երկու ժողովուրդների պատմական մտերմությունը, այլ, այսպես կոչված, պրագմատիկ շահը կամ այն, ինչն ընդունված է պրագմատիկ շահ անվանել: Որպես դրա հետևանք կարելի է մատնանշել նաև այն հանգամանքը, որ այդ «պրագմատիկ շահ» կոչվածն էլ հաճախ ընկնում է Հայաստանի և Ռուսաստանի հակառակորդների ու թշնամիների ազդեցության տակ՝ լրացուցիչ խնդիրներ ստեղծելով երկու դաշնակից պետությունների համար:

Անկախ այս ամենից՝ Ռուսաստանի հետ հարաբերությունները շարունակում են մնալ Հայաստանի կարևորագույն և ամենահեռանկարային խնդիրներից մեկը: Հետևաբար մեր երկրի արտաքին քաղաքականության օրակարգային թիվ մեկ հարցը պետք է լինի պաշտոնական Մոսկվայի հետ իրապես գործընկերային և կարևորը՝ վստահելի հարաբերությունների կառուցումը: Հակադրությունները, ոչնչով չհիմնավորված հավակնությունները, մրցակցությունը այդ խնդրի լուծման լավագույն տարբերակները չեն: Մանավանդ հիմա, երբ Հայաստանի ու Արցախի ֆիզիկական անվտանգությունն այդքան կախված է մեր տարածաշրջանում ռուսական զորքերի ներկայությունից: Իհարկե, նաև չի կարելի պնդել, որ Մոսկվայից հնչող ամեն խոսք վերջին ատյանի ճշմարտություն է, և մենք պարտավոր ենք հետևել նրանց ցուցումներին: Ամենևին ոչ: Խնդիրը հայ-ռուսական հարաբերությունների այնպիսի տրամաբանության կառուցումն է, որը հնարավորություն կտա կողմերին մեկտեղելու իրենց ջանքերը արտաքին սպառնալիքները չեզոքացնելու և երկկողմանի

Ռուս խաղաղապահները Արցախում

պոտենցիալը լիարժեքորեն օգտագործելու հարցում: 2019 թ. ապրիլին Սուրբ Աթոռում ՀՀ նախկին դեսպան Միքայել Մինասյանը հայ-ռուսական հարաբերությունների համար առաջարկել էր «Երկու պետություն՝ մեկ նպատակ» բանաձևը[2]: Սակայն այն ժամանակների իրողությունները, ինչպես նաև արդեն հիշատակված արտաքին ազդեցությունները թույլ չտվեցին, որ հայ դիվանագետի առաջարկը լսելի լինի Հայաստանի ու Ռուսաստանի իշխանությունների համար: Իսկ այժմ մեր երկիրը, ցավոք, իր համար կենսական նշանակություն ունեցող այդ խնդիրը լուծելու ռեսուրս գրեթե չունի:

Իսկ ինչ է այժմ կատարվում հայ-ռուսական հարաբերություններում: Եթե լսելու լինենք երկու երկրների ղեկավարների ու բարձր պաշտոնյաների հայտարարությունները, ապա ամեն ինչ լավ է. քաղաքական կապերն ակտիվ են, ապրանքաշրջանառությունը մեծանում է, առևտուրը՝ զարգանում, սոցիալական խնդիրները՝ լուծվում և այլն: Բայց ակնհայտ է, որ, չնայած այս ամենին, հայ-ռուսական հարաբերությունները հեռու են իրապես դաշնակցային մակարդակի լինելուց. չկան ընդհանուր նպատակներ: Բոլոր այն հարցերը, որոնք քննարկվում են Հայաստանի և Ռուսաստանի ղեկավարների կողմից, հիմնականում տեխնիկական բնույթի են և բնորոշ ցանկացած երկու երկրների հարաբերություններին: Պարզ է, որ հաղորդակցության նման մակարդակն այն չէ, ինչը կարող էր բավարարել Հայաստանի ու Ռուսաստանի իրական շահերը: Այս հարցում խնդիրներ շատ կան, որոնց հաղթահարման համար, սակայն, միանգամայն այլ իրողություններ են անհրաժեշտ: Նվազագույնը՝ Հայաստանի ու Արցախի քաղաքական շահի համար կռիվ տվող իշխանություն Երևանում: Բայց սա թերևս հետագա քննարկումների հարց է:

Վերադառնանք Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականության հիմնական ուղղություններին և հայկական ազգային շահին դրանց առնչությանը: Ինչպես հայտնի է, 2021 թ. քաղաքական տարին

մեկնարկեց հունվարի 11-ին Մոսկվայում կայացած Պուտին-Փաշինյան-Ալիև եռակողմ հանդիպմամբ, որի արդյունքներով կողմերը որոշեցին երեք երկրների փոխվարչապետերի մակարդակով ստեղծել աշխատանքային խումբ, որը կզբաղվեր տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերն ապաշրջափակելու մասին 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության համապատասխան դրույթը կյանքի կոչելու գործով[3]: Սա ռուսական կողմի առաջարկն էր, որը հնարավորինս շուտ իրագործելու համար սույն հայտարարության 4-րդ կետում կոնկրետ ժամկետներ էին նշված: Այսպես՝ ՀՀ, ԱՀ և ՌԴ փոխվարչապետերից կազմված աշխատանքային խումբը պետք է արդեն 2021 թ. մարտի 1-ին երեք երկրների ղեկավարների հաստատմանը ներկայացներ Ադրբեջանի և Հայաստանի տարածքներով միջազգային փոխադրումների կազմակերպման, իրականացման և անվտանգության ապահովման համար անհրաժեշտ տրանսպորտային նոր ենթակառուցվածքների օբյեկտների վերականգնման և կառուցման միջոցառումների ցանկն ու իրականացման ժամանակացույցը: Սակայն այս գործընթացը բավական ձգձգվեց և մինչ այս պահը մնում է անավարտ:

Հունվարի 11-ի հանդիպման ընթացքում պաշտոնական Մոսկվան փաստորեն ընդգծեց նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության իր համար ամենակարևոր դրույթը՝ տարածաշրջանի տնտեսական և տրանսպորտային կապերի ապաշրջափակումը: Վստահ եմ՝ քաղաքական զարգացումներին հետևող ընթերցողը նկատել է, որ ամբողջ տարվա ընթացքում ռուս քաղաքական գործիչները հենց այս խնդիրն էին հիմնականում շեշտադրում: Սակայն այս հարցն ունի մի շարք խութեր և խոչընդոտներ, որոնք ակնհայտորեն խանգարում են թե՛ ռուսական և թե՛ հայկական կողմերին: Խոսքը առաջին հերթին թուրք-ադրբեջանական դաշինքի՝ ՀՀ տարածքով անցնող և որևէ կերպ վերահսկողության չենթարկվող, այսպես կոչված, Զանգեզուրի միջանցք ստեղծելու պահանջի մասին է: Այս հարցի առնչությամբ ռուս պաշտոնյաների հայտարարությունները հիմնականում համընկնում են այն դիրքորոշման հետ, որը բարձրաձայնվում է պաշտոնական Երևանի կողմից, այն է՝ ապաշրջափակվող ճանապարհները պետք է մնան այն երկրների իրավասության ներքո, որոնց տարածքներով անցնում են: Միևնույն ժամանակ ռուսական մամուլն ու իշխանամերձ փորձագիտական շրջանակները նշում են նաև, որ այդ միջանցքը կարող է վերահսկվել Ռուսաստանի համապատասխան ծառայությունների կողմից: Ավելորդ չէ հիշեցնել, որ նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 9-րդ կետում հստակ նշված է, որ ՀՀ տարածքով անցնող՝ Ադրբեջանը Նախիջևանի հետ կապող «տրանսպորտային հաղորդակցության հսկողությունն իրականացնում են ՌԴ ԱԴԾ Սահմանապահ ծառայության մարմինները»[4]:

Ելնելով այս ամենից՝ կարելի է պնդել, որ Ռուսաստանը կողմ է մեր տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային կապերի ապաշրջափակմանը պայմանով, որ դրանց հսկողությունն իրականացվի հենց իր կողմից: Եվ սա Հարավային Կովկասում ՌԴ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական կարևոր առաջնահերթություններից մեկն է:

Երկրորդ կարևոր հարցը, որ փորձում է լուծել Ռուսաստանը, մեր տարածաշրջանում իր ռազմական ներկայությանը սպառնացող վտանգների չեզոքացումն է: 2021 թ. ողջ ընթացքում մենք եղել ենք ականատեսն այն բանի, թե ինչպես են Ռուսաստանի ռազմաքաղաքական իշխանությունները մեծացնում իրենց զորամիավորումների կարողությունները Հայաստանում և Արցախում: Ամբողջ տարվա ընթացքում շարունակ հայտարարություններ են հնչել այն մասին, որ ռուսական զորքը, ինչպես նաև Արցախում տեղակայված խաղաղապահ ուժերը դեռ երկար կմնան տարածաշրջանում: Ավելին՝ ռուսական զորքերն ընդլայնել են Հայաստանում իրենց ներկայության աշխարհագրությունը և այժմ արդեն ապահովում են նաև հայ-ադրբեջանական սահմանի զգալի հատվածի անվտանգությունը: Սա կարևոր ուղերձ է, որը խոսում է Ռուսաստանի մտադրությունների լրջության մասին:

ՌԴ տարածաշրջանային քաղաքականության երրորդ կարևոր ուղղությունը Հարավային Կովկասում այլ տերությունների հնարավորությունների սահմանափակումն է: Այս հարցում Ռուսաստանը մրցակցում է և՛ Թուրքիայի, և՛ Իրանի, և՛ Արևմուտքի հետ: 2021 թ. նոյեմբերի 19-ին, ելույթ ունենալով դիվանագիտական կորպուսի առջև, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը պահանջել է իր արտաքին գերատեսչությունից անվտանգության երաշխիքներ ստանալու համար բանակցություններ սկսել ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի անդամ երկրների հետ[5]: Այդ երաշխիքների թվում են նաև ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության բացառումը և Ատլանտյան դաշինքի զորքերի ու ռազմական

Ռուս զինվորականները Սյունիքում

համակարգերի տեղակայումը Ռուսաստանին հարող և Ռուսաստանի համար սպառնալիք ներկայացնող տարածաշրջաններում: Եթե հաշվի առնենք այն փաստը, որ 44-օրյա պատերազմի հետևանքով մեր տարածաշրջանում ավելացել է նաև ՆԱՏՕ-ի անդամ մեկ այլ երկրի՝ Թուրքիայի ռազմական ներկայությունը, ապա կարելի է ենթադրել, որ այս իրողությունը նույնպես պիտի առաջացնի Մոսկվայի հակազդեցությունը: Իհարկե, արցախյան վերջին պատերազմից հետո Ռուսաստանն ու Թուրքիան մի շարք հարցերում կարծես բավական լավ փոխըմբռնում ունեն, բայց նաև նկատելի է, որ երկու կողմերի հարաբերությունները սրընթաց անկում են ապրում: Համենայնդեպս, Անկարային ու Մոսկվային այլևս չի հաջողվում կոծկել մի շարք կարևոր հարցերում կողմերի հակասությունները: Ավելին՝ ուկրաինական ճգնաժամի առնչությամբ Թուրքիայի և Ռուսաստանի պաշտոնատար անձինք վաղուց արդեն անցել են բաց սպառնալիքների լեզվին:

Ամենից կարևոր և հեռանկարային խնդիրը, սակայն, որ Ռուսաստանը փորձում է լուծել մեր տարածաշրջանում, Հարավային Կովկասի ամբողջական ինտեգրումն է ռուսական առաջնորդությամբ գործող կառույցներում: Մյուս բոլոր առաջնահերթությունները ծառայում են հենց այս՝ ամենագլխավոր նպատակին: Պաշտոնական Մոսկվան ցանկանում է տեսնել Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը ԵԱՏՄ և ՀԱՊԿ կազմում, իսկ հետագայում՝ նաև միութենական պետությունների կարգավիճակում: Բայց ահա այս հարցում ի հայտ են գալիս Ռուսաստանի ամենամեծ խնդիրները՝ թուրք-ադրբեջանական, վրաց-արևմտյան, իրանական, չինական և այլ հակազդեցությունները: Չնայած մեր պետության աղետալի վիճակին՝ ռուսական այդ ծրագրերի առումով խնդիրներ կան նաև Հայաստանում: Դրանց մի մասին արդեն անդրադարձել ենք մեր հոդվածի սկզբում: Բայց դա ամենը չէ: Իրական խնդիրն այն է, որ ռուսական ինտեգրացիոն ծրագրերը Հայաստանում հիմնականում ընկալվում են որպես երկրի գաղութացման գործընթաց: Սխալվո՞ւմ են արդյոք այդպես մտածող շրջանակները: Իրողությունն այն է, որ Ռուսաստանից ստացվող ազդակներն այլ ենթադրություններ անելու քիչ հնարավորություններ են թողնում հայկական քաղաքական վերնախավին: Այս հարցում էլ ամեն ինչ այնքան միանշանակ չէ, որքան կարող է թվալ առաջին հայացքից: Բանն այն է, որ հայ քաղաքական միտքն էլ ըստ արժանվույն չի ուսումնասիրել Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականության նպատակներն ու տրամաբանությունը և չի տվել մի շարք կարևոր հարցերի պատասխաններ: Օրինակ՝ աջակցե՞լ Ռուսաստանին մեր տարածաշրջանում մղվող աշխարհաքաղաքական պայքարում, թե՞ ոչ: Աջակցե՞լ նրա ռազմական պոտենցիալի մեծացմանը Հարավային Կովկասում: Ի՞նչ կարմիր գծեր սահմանել ռուսական առաջնորդությամբ իրականացվող ինտեգրացիոն ծրագրերի համար և այլն: Հարցերն իրականում շատ են: Բայց դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ Հայաստանը պետք է ունենա մշակված քաղաքականություն ու գիտակցված որոշումներ կայացնելու մեխանիզմներ: Հակառակ պարագայում նույնիսկ Ռուսաստանի օգտին արված մեր քայլերը ընկալվելու են ոչ թե որպես դաշնակցին մատուցված ծառայություն, այլ պարտադրված որոշում, որի այլընտրանքը թուրքական յաթաղանն է: Իրականում սա մեծ խնդիր է Հայաստանի համար. մեծերի հետ դժվար է ոչ միայն մրցակցել, այլև գործակցել: Բայց այդ խնդրին լուծում տալու համար նախ և առաջ պետք է հստակ գիտակցել սեփական ազգային շահը: Հակառակ պարագայում երկիրը կվերածվի արտաքին ազդեցություններին տրված մի պետության, որը, վերջին հաշվով, բոլորի համար կվերածվի անլուրջ և անվստահելի մի երևույթի: Իսկ այդ դեպքում պետությունները պարզապես դատապարտված են կործանման: Ցավոք, Հայաստանը ներկայումս ընթանում է հենց այդ ուղով: Եվ այդ ընթացքի կասեցման առաջին քայլը շարունակում է մնալ նույնը՝ կապիտուլյանտ իշխանությունների հեռացումն ու ազգային ղեկավարության հաստատումը: ■

Պուտինի, Փաշինյանի և Ալիևի հանդիպումը Մոսկվայում՝ 2021 թ. հունվարի 11-ին

Հղումներ

1- Զահար Պրիլեպին, ֆեյսբուքյան գրառում, 27.09.2020թ., https://www.facebook.com/zaharprilepin/posts/3609654519078843:

2- Տես Микаэл Минасян, «Два государства – одна цель». Необходима новая архитектура армяно-российского союзничества, 20.04.2019г., https://www.ng.ru/cis/2019-04-20/100_173218042019.html:

3- Տես Նիկոլ Փաշինյանի, Վլադիմիր Պուտինի և Իլհամ Ալիևի հանդիպման արդյունքներով ընդունվել է համատեղ հայտարարություն, 11.01.2021թ., https://www.primeminister.am/hy/press-release/item/2021/01/11/Nikol-Pashinyan-Moscow-meeting-Announcement/:

4- Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը, 10.11.2020թ., https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/:

5- Տես Путин поручил МИД РФ начать переговоры о создании системы гарантий безопасности, 19.11.2021г., https://tass.ru/politika/12971059:

Տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորումը.
2021 թ. ՏԻՄ ընտրությունները Վրաստանում և դրանց ազդեցությունը Ջավախքի վրա

Վահե Սարգսյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու

Պրեֆեկտուրայի ինստիտուտի ներդնումը Վրաստանում

Անկախացման գործընթացին զուգահեռ՝ 1991 թ. հունվարի 29-ի հերթական նիստում Վրաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց տեղական ինքնակառավարման մասին օրենք: Այդ օրենքի համաձայն՝ հանրապետական ենթակայության քաղաքներում և շրջաններում այդուհետ կառավարման գործառույթներն իրականացնելու էր **պրեֆեկտը**: Պրեֆեկտը կենսագործելու էր վերադաս մարմինների որոշումները: Նա նշանակվելու էր չորս տարի ժամկետով, Գերագույն խորհրդի նախագահի ներկայացմամբ, ազատվելու էր Գերագույն խորհրդի նախագահության կողմից և հաշվետու էր լինելու Գերագույն խորհրդին, նրա նախագահությանն ու Նախարարների խորհրդին:

Պրեֆեկտը նշանակում և ազատում էր ինչպես պրեֆեկտուրայի ստորաբաժանումների, այնպես էլ տեղական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին: Նա իրավունք ուներ վերացնելու տեղական իշխանության մարմիններ հանդիսացող ժողովների այն ակտերը, որոնք չէին համապատասխանում Վրաստանի Հանրապետության օրենսդրությանը, թույլատրում էր տնտեսական գործունեություն, իրականացնում մի շարք այլ գործառույթներ: Ինչպես տեսնում ենք, այս պաշտոնային օժտել էին մի շարք լուրջ իրավունքներով, որոնց կիրարկմամբ նա կարող էր ազդել տվյալ շրջանի ինչպես տնտեսական, այնպես էլ ներքաղաքական կյանքի վրա[1]:

1991 թ. մարտի 31-ին՝ ԽՍՀՄ պահպանման հանրաքվեի օրը, Վրաստանում առաջին անգամ անցկացվեցին տեղական ինքնակառավարման մարմինների՝ տեղական ժողովների (սակրեբուլոների) ընտրություններ: 1992 թ. իշխանափոխությունից հետո պրեֆեկտուրայի ինստիտուտը վերացվեց, և տեղերում ողջ իշխանությունը փոխանցվեց շրջանային վարչությունների նախագահներին: 1993 թ. հոկտեմբերից սկսվեց պետության ղեկավարների լիազորների և երկրամասային վարչությունների ինստիտուտի ձևավորումը: 1993-1995 թթ. ստեղծվեցին *1-ին մակարդակի վարչական միավորները*. երկիրը բաժանվեց 9 տարածաշրջանի, 2 ինքնավար հանրապետության (Աբխազիա, Աջարիա) և մայրաքաղաք Թբիլիսիի: Յուրաքանչյուր տարածաշրջանում նշանակվեց պետության ղեկավարի (հետագայում՝ նախագահի) լիազոր-ներկայացուցիչ

(նահանգապետ)[2]:

Տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման հետագա ընթացքը Վրաստանում և դրա ազդեցությունը Ջավախքի վրա

Ի տարբերություն ՀՀ-ի՝ Վրաստանում չլուծարվեցին նախկին խորհրդային շրջանները, որոնք (շուրջ 7 տասնյակ)՝ որպես տեղական ինքնակառավարման *2-րդ մակարդակի միավորներ*, առանձին շրջանների (քաղաքապետարաններ, մունիցիպալիտետներ) տեսքով ներառվեցին նորաստեղծ նահանգների մեջ: Երկու ինքնավար հանրապետություններում՝ Աջարիայում և Աբխազիայում[3] ևս պահպանվեցին նախկին խորհրդային շրջանները, փոխարենը հարավօսեթական ինքնավար մարզի լուծարման և դրա տարածքի՝ 4 նորաստեղծ նահանգների մեջ բաշխման հետ մեկտեղ լուծարվեցին նաև դրա 4 շրջանները[4]:

Է. Շևարդնաձեի 1994 թ. հուլիսի 31-ի հրամանագրով կազմավորվեց նաև Սամցխե-Ջավախքի նահանգը: Սամցխե (Ադիգենի, Ախալցխայի և Ասպինձայի շրջաններ) և Ջավախք (Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններ) պատմական գավառների հետ այս նահանգի մեջ ներառվեց նաև գերակշիռ մասով վրացաբնակ Բորժոմի շրջանը, սակայն նահանգից դուրս մնաց հիմնականում հայերով և հույներով բնակեցված մեկ այլ շրջան՝ Ծալկայի շրջանը (պատմական Թռեղք գավառը): Արհեստական այս վարչաբաժանումը նպատակ ուներ նահանգում

նվազեցնելու հայության տեսակարար կշիռը չնայած որ հայերը դարձյալ շարունակեցին մեծամասնություն կազմել:

1995 թ. օգոստոսի 24-ին ընդունվեց Վրաստանի Սահմանադրությունը: Եվ քանի որ դեռևս կարգավորված չէին Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հետ հարաբերությունները (վերջիններս փաստացի անկախ էին), Սահմանադրության մեջ երկրի տարածքային կարգավորման հարցը բաց մնաց: Սահմանադրության 2-րդ հոդվածի 3-րդ կետում նշված էր, որ *«Վրաստանի պետական-տարածքային կառուցվածքը սահմանվելու է սահմանադրական օրենքով՝ երկրի ամբողջ տարածքի վրա Վրաստանի իրավասության վերականգնումից հետո լիազորությունների սահմանափակման սկզբունքի հիման վրա»*[5]: Հետևաբար փաստացի գոյություն ունեցող երկրամասային բաժանումը իրավաբանական ձևակերպում չստացավ: Այս հարցը նույն պատճառներով կարգավորված չէ առ այսօր:

1997 թ. վերջին մշակվեց և 1998 թ. հունիսի 25-ին Վրաստանի նախագահի կողմից ստորագրվեց Վրաստանի *«Տեղական ներկայացուցչական մարմինների՝ ժողովների ընտրությունների մասին»* օրենքը: Նշված օրենքով (Վրաստանի Սահմանադրության 2-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան) մինչև Վրաստանի տարածքային-պետական կառուցվածքի մասին սահմանադրական օրենքի ընդունումը (որը, ինչպես բազմիցս նշել ենք, առ այսօր ընդունված չէ) սահմանվում էին տեղական ինքնակառավարման և կառավարման մարմինների ստեղծման և գործունեության հիմունքները: 1998 թ. նոյեմբերի 16-ին ՏԻՄ ընտրություններն անցկացվեցին այս օրենքով: Նշենք նաև, որ մինչ այս ընտրությունները՝ սկսած 1995 թ. Սահմանադրության ընդունումից, երկրամասում փաստացի դադարեցված էին 1991 թ.՝ Զվիադ Գամսախուրդիայի օրոք ընդունված *«Վրաստանի Հանրապետության տեղական իշխանությունների մարմինների՝ ժողովների ընտրությունների մասին»* օրենքի լիազորությունները (իրավաբանորեն 1991 թ. ընդունված այս օրենքն ուժը կորցրած ճանաչվեց միայն 1998 թ. հունիսի 25-ի օրենքով), իսկ նոր օրենքի ընդունման ձգձգման պատճառով մի քանի տարի տեղում կարգավորված չէր ժողովրդական լայն զանգվածների՝ տեղական ներկայացուցչական մարմինների մաս կազմելու գործընթացը, ինչի հետևանքով երկրամասում ստեղծվել էր բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտ:

Իսկ ինչ էր նախատեսվում 1998 թ. վերոնշյալ օրենքով: Տեսնենք դա ըստ հոդվածների. *«Բազմամանդատային ընտրական շրջաններում տեղական ներկայացուցչական մարմինների՝ ժողովների ընտրություններն անցկացվում են* ***համամասնական*** *ընտրակարգով, եթե համապատասխան ժողովի տարածքում ընտրողների թիվը գերազանցում է 2000-ը»: «Բազմամանդատային ընտրական շրջաններում տեղական ներկայացուցչական մարմինների՝ ժողովների ընտրություններն անցկացվում են* ***մեծամասնական*** *ընտրակարգով, եթե համապատասխան ժողովի տարածքում ընտրողների թիվը չի գերազանցում 2000-ը»:*



Վրաստանի վարչատարածքային քարտեզ

Ինչ է ստացվում: Փաստորեն, եթե տվյալ բնակավայրում ընտրողների թիվը անցնում էր 2000-ից, և այդ տարածքում առաջադրվող թեկնածուն չէր պատկանում որևէ կուսակցության, իրավունք չուներ առաջադրվելու: Այստեղ կա քաղաքացու՝ և՛ ընտրելու, և՛ ընտրվելու իրավունքի խախտում: Սա՝ մի կողմից: Մյուս կողմից՝ սույն օրենքով խախտվում էր արդարությունը Սամցխե-Ջավախք-Ծալկայի հայաբնակ շրջաններում: Բանն այն էր, որ նախ և առաջ այս շրջաններում գրանցված չէր հայկական ոչ մի կուսակցություն, և ընտրությունների ժամանակ իրենց գործն էին տեսնելու վրացական կուսակցությունները (հատկանշական է, որ 1998 թ. նոյեմբերի ընտրություններին Նինոծմինդայի շրջանում տեղական ինքնակառավարման մարմինների 123 պատգամավորական տեղերի համար պայքարող 338 թեկնածուներից 224-ը ներկայացնում էին Վրաստանի քաղաքացիների միությունը, 94-ը՝ վրացական «Լեմի» քաղաքական կազմակերպությունը, և միայն 12-ն էին անկախ թեկնածուներ), իսկ մեծամասնական ընտրակարգով ընտրելու և ընտրվելու հնարավորությունից օգտվելիս առաջ էր գալիս ևս մեկ օրինախախտում, որը պարզապես անհնար էր դարձնում մեծամասնական ընտրակարգով ընտրելը և ընտրվելը: Դա կապված էր այն բանի հետ, որ այս շրջաններում տեղական ժողովները ձևավորվել էին մի քանի գյուղերից, ինչն էլ իր հերթին *«ապահովում էր»* ձայների 2000-ից ավելի լինելը, իսկ մեկ ժողովը համարվում էր մեկ ընտրատարածք:

Այս ամենին զուգահեռ՝ երկրի ղեկավար Է. Շևարդնաձեն իրեն վերապահեց շրջանային վարչության նախագահին նշանակելու իրավունքը: Եվ եթե Զ. Գամսախուրդիայի իշխանության օրոք համընդհանուր քաոսի պայմաններում դա հասկանալի էր, ապա այս դեպքում դա կարելի էր դիտել որպես հակաժողովրդական քայլ:

2001 թ. օգոստոսի 2-ին նախագահ Է. Շևարդնաձեն ստորագրեց Վրաստանի նոր ընտրական օրենսգիրքը[6], որով ուժը կորցրած ճանաչվեցին Վրաստանի

«Տեղական ներկայացուցչական մարմինների՝ ժողովների ընտրությունների մասին» օրենքը (1998 թ.), *«Վրաստանի խորհրդարանի ընտրությունների մասին»* (1995 թ.) և «Վրաստանի նախագահի ընտրությունների մասին» (1995 թ.) օրգանական օրենքները: Սույն օրենքի հիման վրա 2002 թ. Վրաստանում անցկացվեցին ՏԻՄ ընտրություններ (ընդհանուր առմամբ՝ 3-րդ), որոնք կրկին վեր հանեցին Ջավախքի շրջանների՝ ազգաբաշխական պատկերին անհամահունչ շրջանային ժողովների ձևավորմանն առնչվող խնդիրները[7]: Այսպես՝ Ախալքալաքի շրջանում վրացաբնակ բոլոր գյուղերը (օրինակ՝ Հոկամ՝ 443 ընտրող, Չունչխա՝ 243, Պրտենա՝ 216, Գոգաշեն՝ 299, Կոթելիա՝ 315 և այլն) ունեին առանձին գյուղական ժողովներ, այն դեպքում, երբ հայաբնակ գյուղերի պարագայում ժողովները ձևավորվում էին մի քանի գյուղերից: Փաստենք նաև, որ հայաբնակ այդ գյուղերից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, ավելի շատ ընտրող ուներ, քան նշված վրացական գյուղերը: Այս անարդարությունը հանգեցրել էր նրան, որ, օրինակ, Ախալքալաքի շրջանային ժողովում հավասար ձայներով էին ներկայացված 10.000 բնակիչ ունեցող Ախալքալաք քաղաքը, 6.000 բնակիչ ունեցող Կարտիկամի գյուղական ժողովը և 400 բնակիչ ունեցող վրացական Չունչխա գյուղը: Հետևանքն այն էր, որ 96 %-ով հայերով բնակեցված Ախալքալաքի շրջանային ժողովի 22 մեծամասնական տեղերից 5-ը ազգությամբ վրացիներ էին զբաղեցնում, մինչդեռ, ըստ համամասնության, Ախալքալաքի շրջանի վրացական համայնքը շրջանային ժողովում պետք է ունենար 1 ներկայացուցիչ:

Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիային Վրաստանի միանալով *(Վրաստանը Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիան (1985 թ. հոկտեմբերի 15, Ստրասբուրգ) ստորագրել է 2002 թ., վավերացրել 2004 թ.: Այն երկրի տարածքում ուժի մեջ մտավ 2005 թ. ապրիլի 1-ից)*[8] նոր իրավիճակ ստեղծվեց երկրում: Պայմանավորված այդ իրողությամբ՝ մշակվեց և 2005 թ. վերջին Վրաստանի խորհրդարանի կողմից ընդունվեց ՏԻՄ նոր օրենքը[9], որի հիման վրա 2006 թ. աշնանը Վրաստանում տեղի ունեցան տեղական ինքնակառավարման նոր (4-րդ) ընտրություններ:

Նոր օրենքն արմատապես փոխեց երկրում գործող ինքնակառավարման համակարգը: Տեղի ունեցավ գոյություն ունեցող ինքնակառավարվող միավորների խոշորացում, և մինչ այդ գործող ինքնակառավարման 3-րդ մակարդակի 1004 միավորի (նախկին խորհրդային գյուղական խորհուրդները հիմնականում դարձել էին տեղական ինքնակառավարման առանձին միավորներ՝ ժողովներ) փոխարեն ձևավորվեցին ընդամենը 68-ը: Ձևավորվեցին միայն շրջանային ընդհանուր ինքնակառավարման մարմիններ, այսինքն՝ շրջանային ժողովներ (սակրեբուլոներ), իսկ դրանց հենքի վրա՝ շրջանային վարչություն (գործադիր մարմին): Շրջանային ժողովը, փաստորեն, դարձավ մի յուրօրինակ խորհրդարան: Շրջանային վարչությունը շրջանի կազմի մեջ մտնող բնակավայրերում կամ բնակավայրերի խմբում նշանակեց լիազորներ, այսինքն՝ իր գործառույթներն իրականացնող անձանց: Սակրեբուլոն՝ շրջանային ժողովը, ձևավորվեց հետևյալ սկզբունքով. շրջաններում համամասնական ընտրակարգով ընտրվեց 10 անդամ, իսկ շրջանի կազմի մեջ մտնող նախկին սակրեբուլոներից (գյուղական, թեմական ժողովներ) մեծամասնական ընտրակարգով՝ մեկական անդամներ: Մեծ քաղաքների ինքնակառավարվող սակրեբուլոյում ընտրվեցին համամասնական ընտրակարգով 10 և մեծամասնական ընտրակարգով 5 անդամ:

Օրինակ՝ Ախալքալաքի շրջանում ձևավորվեց մեկ ժողով, որում ընդգրկվեցին կուսակցական ցուցակներով (համամասնական ընտրակարգ) ընտրված 10 և Ախալքալաքի շրջանի կազմի մեջ մտնող ինքնակառավարվող միավորների (դրանք 22-ն են)՝ մեծամասնական ընտրակարգով ընտրված մեկական պատգամավորներ, այսինքն՝ շրջանային ժողովի պատգամավորների ընդհանուր թիվը կազմեց 32: Գյուղական հիմնախնդիրները, ըստ օրենքի, կարգավորվում էին ինչպես ընտրված պատգամավորների, այնպես էլ գործադիրի (որը շրջանային ժողովի կողմից, ըստ օրենքի, օժտված էր լինելու տեղում ծառայություններ իրականացնելու լիազորություններով) միջոցով:

Ինքնակառավարման մարմնի գործադիր օրգանը վարչությունն էր: Նոր օրենքով վարչության նախագահին (քաղաքապետին) ընտրում էր շրջանային ժողովը, այսինքն՝ ընտրությունը դարձավ անուղղակի:

Ջավախքի պարագայում, կարելի է ասել, որ նոր օրենքը իրադրության վրա էական ազդեցություն չունեցավ: Չնայած գյուղական շրջաններում ժողովները շատ աղքատ էին, բայց, փոխանակ դրանք հզորացվեին, ընդհանրապես վերացվեցին, և ինքնակառավարման մարմինն էլ ավելի հեռացավ ժողովրդից, չնայած, ըստ եվրոպական խարտիայի, որքան ինքնակառավարումը մոտ է ժողովրդին, այնքան այն ավելի բարձր մակարդակի է:

Շրջանային ժողովներում ազգային կազմի անարդարացիության առումով հարաբերակցությունը դարձյալ մնաց նույնը: Օրինակ՝ Ախալքալաքի շրջանի սակրեբուլոյի 32 անդամից 10-ը, ըստ օրենքի, կուսակցությունների հայեցողությամբ ներկայացված անձինք էին, 5-ը՝ ազգությամբ վրացի, և միայն 17-ը՝ հայազգի: Նույն պատկերը ձևավորվեց նաև 2010 թ. տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունների (5-րդ) արդյունքներով:

2011 թ. վերջին Վրաստանում ընդունվեց ընտրական[10], 2014 թ.՝ տեղական ինքնակառավարման մասին նոր օրենսգրքերը[11], որոնք, ենթարկվելով մի շարք փոփոխությունների, գործում են առ այսօր: Այս օրենքների հիման վրա 2014, 2017 և 2021 թվականներին անցկացվեցին տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխանաբար 6-րդ, 7-րդ և

8-րդ ընտրությունները Վրաստանում:

Սկսած 2014 թվականից, բացի շրջանային ժողովներից, ընտրվի դարձան նաև Վրաստանի շրջանների (քաղաքապետարաններ, մունիցիպալիտետներ) ղեկավարները: Միաժամանակ 7-ով ավելացվեց ինքնավար կարգավիճակ ունեցող քաղաքների թիվը (Վրաստանի «Տեղական ինքնակառավարման մասին» 2005 թվականի օրգանական օրենքով այդպիսիք **էին Թբիլիսին, Ռուսթավը, Քութայիսը, Փոթին և Բաթումը)**. ՏԻՄ նոր օրենքով ինքնակառավարվող քաղաքի կարգավիճակ ստացան նաև **Թելավը, Օզուրգեթը, Զուգդիդը, Գորին, Ամբրոլաուրը, Մցխեթան և Ախալցխան:** Այդուհանդերձ, հետագա փոփոխություններով վերստին ինքնակառավարվող քաղաքներ մնացին միայն առաջին խմբի 5 քաղաքները՝ Թբիլիսին, Ռուսթավը, Քութայիսը, Փոթին և Բաթումը (հոդված 151, 152):

ՏԻՄ ընտրությունները Վրաստանում 2021 թ.

Տեղական ինքնակառավարման մարմինների վերջին (8-րդ) ընտրությունները Վրաստանում տեղի ունեցան 2021 թ. հոկտեմբերի 2-ին, որոնց մասնակցեց 48 ուժ: Մինչ այդ՝ 2020 թ. հոկտեմբերի 31-ին կայացած խորհրդարանական ընտրություններում երրորդ անգամ անընդմեջ (2012 թ. սկսած) հաղթեց Բիձինա Իվանիշվիլու հիմնադրած «Վրացական երազանք» կուսակցությունը: Ընդդիմադիր ուժերը, որոնց առանցքում Մ. Սահակաշվիլու հիմնադրած «Ազգային միացյալ շարժում» կուսակցությունն էր, վիճարկեցին ընտրությունների արդյունքները, հրաժարվեցին մանդատներից և պահանջեցին անցկացնել խորհրդարանական նոր ընտրություններ:

Վրաստանում սկսված քաղաքական ճգնաժամի հաղթահարման փորձ էր 2021 թ. ապրիլի 19-ին «Վրացական երազանքի» և ընդդիմադիր կուսակցությունների միջև ստորագրված համաձայնագիրն[12] այն մասին, որ եթե 2021 թ. հոկտեմբերին Վրաստանում տեղական ինքնավարության մարմինների ընտրություններում «Վրացական երազանքը» ստանա 43 %-ից պակաս ձայն, ապա 2022 թ. պետք է տեղի ունենան արտահերթ ընտրություններ: Արտահերթ ընտրություններ անցկացնելու հարցի վերաբերյալ սույն համաձայնագիրը ներկայացվեց Եվրոպայի խորհրդի նախագահ Շառլ Միշելի առաջարկով[13]: Այդուհանդերձ, 2021 թ. հուլիսի 28-ին *«Վրացական երազանքի» նախագահ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ կուսակցությունը դուրս է գալիս ապրիլի 19-ի համաձայնագրից, քանի որ, ըստ նրա, համաձայնագրի ստորագրումից նույնիսկ 100 օր անց ընդդիմադիր պատգամավորների կեսից ավելին այն չեն ստորագրել: «Ակնհայտ է, որ այն սպառել է իրեն, ուստի և այն չեղյալ է հայտարարվել: Համաձայնագրին միակողմանի հավատարմությունը վիրավորական է մեր կուսակցության համար, և մեր ընտրողները չեն ների մեզ»*,- հայտարարել է Ի. Կոբախիձեն[14]:

Ջավախքի քարտեզը

2021 թ. աշնանը ՏԻՄ ընտրությունները տեղի ունեցան երկու փուլով: Հոկտեմբերի 2-ին կայացած 1-ին փուլի արդյունքներով՝ «Վրացական երազանք - Դեմոկրատական Վրաստան» իշխող ուժը ստացավ 824.755 ձայն կամ ձայների 46.747 %-ը[15]: Ընտրությունից մի քանի օր անց՝ հոկտեմբերի 6-ին, Եվրախորհրդարանի պատգամավորները համատեղ հայտարարություն հրապարակեցին, համաձայն որի՝ ընդունում են Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) հրապարակած տվյալները, ըստ որոնց՝ «Վրացական երազանքի» թեկնածուները ստացել են ձայների ավելի քան 46 %-ը և հաղթահարել ընտրաշեմը (43 %), որը սահմանված էր ապրիլի 19-ի Շառլ Միշելի պայմանագրով[16]:

1-ին փուլի արդյունքներով՝ 2-րդ տեղում նախկին նախագահ Մ. Սահակաշվիլու «Միացյալ ազգային շարժում» (ՄԱՇ) ընդդիմադիր կուսակցությունն էր, որը ստացել էր ձայների 30.7 %-ը: Երկրի նախկին վարչապետ Գիորգի Գախարիայի «Գախարիա – Վրաստանի համար» կուսակցությունը ստացել էր ձայների 7.8 %-ը, 4-րդ տեղում էր «Լելո» կուսակցությունը ձայների 2.71 %-ով:

Հոկտեմբերի 30-ին Վրաստանում տեղի ունեցավ ՏԻՄ ընտրությունների 2-րդ փուլը: Քաղաքացիներն ընտրեցին 15 շրջանների (մունիցիպալիտետներ կամ քաղաքապետարաններ) և 5 ինքնակառավարվող քաղաքների՝ Թբիլիսիի, Բաթումի, Քութայիսի, Փոթիի և Ռուսթավի քաղաքապետերին, քանի որ նշված տեղերում թեկնածուներից ոչ մեկը 1-ին փուլում բավարար ձայներ (5 %-ից ավելի) չէր ստացել: (Փաստենք, որ հենց 1-ին փուլում 44 շրջանների ղեկավարների ընտրություններում հաղթել էին իշխող թիմի թեկնածուները): 2-րդ փուլում Վրաստանի 24 ընտրատարածքներում մեծամասնական ընտրակարգով տեղի ունեցան նաև 42 պատգամավորների (շրջանային ժողովների անդամների) ընտրություններ (դրանք չեղյալ էին ճանաչվել տարբեր պատճառներով):

2-րդ փուլում երկու հիմնական մրցակից ուժերն էին իշխող «Վրացական երազանքը» և ընդդիմադիր ՄԱՇ-ը: Բոլոր 5 ինքնակառավարվող քաղաքներում հաղթեց իշխող ուժը. մայրաքաղաքում՝ Կախա

Կալաձեն (55.6 %), Ռուսթավում՝ Նինո Լացաբիձեն (53.7 %), Քութայիսում՝ Իոսեբ Խախալեիշվիլին (51.7 %), Փոթիում՝ Բեքա Վաճառաձեն (57.3 %), Բաթումում՝ Արչիլ Չիքովանին (51 %)[17]:

2-րդ փուլում 15 շրջաններում ևս հիմնական մրցակից ուժերը իշխող «Վրացական երազանքը» և ընդդիմադիր ՄԱՇ-ն էին: Այս դեպքում ևս հաղթանակը գրեթե ամբողջությամբ իշխող ուժինն էր. 1. Թելավում՝ 56.9 %, 2. Թիանեթում՝ 54.8 %, 3. Քարելում՝ 56.7 %, 4. Խաշուրում՝ 59.1 %, 5. Ցագերում՝ 63.5 %, 6. Բաղդաթում՝ 60.7 %, 7. Ծղալտուբոյում՝ 57.1 %, 8. Օզուրգեթում՝ 55.4 %, 9. Սենակում՝ 53.1 %, 10. Մարտվիլիում՝ 51.8 %, 11. Խոբիում՝ 56.8 %, 12. Զուգդիդում՝ 51.6 %, 13. Չխորոծղուում՝ 50.9 %, 14. Խելվաչաուրիում՝ 55 %[18], և միայն Ծալենջիխայի շրջանի ղեկավարն է ընտրվել ՄԱՇ-ից՝ 51.1 %-ով պարտության մատնելով «Վրացական երազանքի» թեկնածուին (վերջինս ստացել էր 48.9 % քվե)[19]:

Այսպիսով՝ **Վրաստանի 59 ինքնակառավարվող շրջաններից** (համայնք, մունիցիպալիտետ կամ քաղաքապետարան)[20] 58-ի, 5 խոշոր քաղաքների (այդ թվում՝ մայրաքաղաքի) ղեկավարներ ընտրվեցին իշխող ուժի թեկնածուները, 1-ում՝ ընդդիմադիր «Միացյալ ազգային շարժում» ուժի թեկնածուն: Վրաստանի 59 ինքնակառավարվող շրջաններից 58-ի, 5 ինքնակառավարվող քաղաքներից 4-ի (այդ թվում՝ մայրաքաղաքի)՝ համամասնական և մեծամասնական կարգերով ձևավորված ժողովներում նույն կերպ գերակշիռ (50+) դիրք զբաղեցրեց իշխող «Վրացական երազանքը». ընդդիմադիր ՄԱՇ-ը առավելություն ունեցավ միայն Զուգդիդի շրջանային ժողովում և ինքնակառավարվող Բաթումի քաղաքային ժողովում:

Զավախքը 2021 թ. ՏԻՄ ընտրությունների նախօրյակին

2021 թ. հոկտեմբերին կայացած ՏԻՄ ընտրությունների նախօրեին հերթական անգամ փոփոխության ենթարկվեց Վրաստանի ընտրական օրենսգիրքը, և փոփոխություններից մեկով բազմաթիվ տեղերում միավորվեցին շրջանների (մունիցիպալիտետների)՝ 3-րդ մակարդակի ինքնակառավարվող միավորների հենքի վրա ձևավորված մեծամասնական ընտրատարածքները, ինչի հետևանքով էլ, օրինակ, Ախալքալաքի շրջանային ժողովում նվազեց մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների թիվը՝ 24-ից դառնալով 14: Փոխարենը՝ Ախալքալաքի շրջանային ժողովի պատգամավորների թիվը 38-ից դարձավ 42՝ համամասնական կարգով ընտրված պատգամավորների թվի ավելացման հաշվին, որը 14-ի փոխարեն դարձավ 28[21]:

Մեծամասնական ընտրատարածքների միավորումը դրական ազդեցություն ունեցավ Ախալքալաքի շրջանում, և մեծամասնական կարգով ընտրված հայ և վրացի պատգամավորների 13/1 հարաբերակցությունն ինչ-որ տեղ արտացոլեց շրջանի ազգաբաշխական պատկերը (2014 թ. դրությամբ՝ շուրջ 42.000 հայ և 3.000 վրացի)[22]: Այդուհանդերձ, միավորման նույն գործընթացը բացասական էական ազդեցություն թողեց Զավախքի մեկ այլ՝ Ախալցխայի շրջանի վրա, որի շրջանային ժողովում մեծամասնական ընտրակարգով ընտրվող 13 պատգամավորից ընդամենը 3-ն են ազգությամբ հայ (1-ը՝ Ախալցխա քաղաքից, 2-ը՝ գյուղերից), ինչն այնքան էլ չի արտացոլում Ախալցխայի շրջանի ազգաբաշխական պատկերը. 2014 թ. մարդահամարի արդյունքներով՝ 26.400 վրացի և 12.000 հայ ազգաբնակչություն ունեցող Ախալցխայի շրջանում հարկ էր, որ մեծամասնական կարգով ընտրվեր առնվազն 4 հայ:

Ինքնակառավարվող համայնքներում տեղական մեծամասնական ընտրատարածքների միավորման հետևանքով մեկով նվազել է նաև Սամցխե-Զավախք նահանգի Բորժոմի շրջանային ժողովում մեծամասնական կարգով ընդգրկվող հայերի թիվը (Տաբաձղուրի, Մոլիթ, Չխարոլա և Բալանթա գյուղերի հենքի վրա ձևավորված նախկին 2 ընտրատարածքների փոխարեն այժմ 1-ն է), քանի որ Բորժոմում այլ միավորումներ չեն եղել: Ասպինձայում 1 (Դամալա գյուղ) ընտրատարածքը, հետևաբար 1 հայազգի պատգամավորի տեղը պահպանվել է, փոխարենը միավորվել են վրացաբնակ գյուղերի առանձին ընտրատարածքներ: Նինոծմինդայի պարագայում փոփոխություն տեղի չի ունեցել, իսկ Ծալկայի շրջանում միավորվել են թե՛ հայաբնակ

Վրաստանի խորհրդարանի շենքը

գյուղերով կազմված նախկին ընտրատարածքները (հայաբնակ բոլոր 13 գյուղերն այժմ կազմում են 4 ընտրատարածք), թե՛ նախկինում հունաբնակ, այժմ աջարներով և սվաններով բնակեցված գյուղախմբերով կազմված ընտրատարածքները:

Ջավախքի Ախալքալաքի շրջանում ՏԻՄ ընտրություններին մասնակցեց 12 ուժ՝ 1. «Երրորդ ուժ», 2. «Եվրոպական Վրաստան. Շարժում հանուն ազատության», 3. «Միասնական ազգային շարժում», 4. «Եվրոպական դեմոկրատներ», 5. «Դավիթ Թարխան-Մուրավի, Իրմա Ինաշվիլի. Վրաստանի հայրենասերների դաշինք», 6. «Լեյոն հանուն Վրաստանի», 7. «Շալվա Նաթելաշվիլի – Վրաստանի լեյբորիստական կուսակցություն», 8. «Եվրոպական սոցիալիստներ», 9. «Գիորգի Գախարիա – Վրաստանի համար», 10. «Գիրչի», 11. «Ազատ Վրաստան» (Ջազա Խատիաշվիլի, Կախա Կուկավա, Գրիգոլ Ջոջուա), 12. «Վրացական երազանք – ժողովրդավարական Վրաստան»[23]:

Ջավախքի մեկ այլ՝ Նինոծմինդայի շրջանում ՏԻՄ ընտրություններին մասնակցեցին 9 կուսակցություն և մեկ նախաձեռնող խումբ՝ 1. «Երրորդ ուժ», 2. «Եվրոպական Վրաստան. Շարժում հանուն ազատության», 3. «Միասնական ազգային շարժում», 4. «Եվրոպական դեմոկրատներ», 5. «Դավիթ Թարխան-Մուրավի, Իրմա Ինաշվիլի. Վրաստանի հայրենասերների դաշինք», 6. «Շալվա Նաթելաշվիլի – Վրաստանի լեյբորիստական կուսակցություն», 7. «Գիորգի Գախարիա – Վրաստանի համար», 8. «Ազատ Վրաստան» (Ջազա Խատիաշվիլի, Կախա Կուկավա, Գրիգոլ Ջոջուա), 9. «Վրացական երազանք – ժողովրդավարական Վրաստան»: Սուրեն Մոսոյանը քաղաքապետի թեկնածու էր առաջադրվել նախաձեռնող խմբի կողմից[24]:

Ախալքալաքում և Նինոծմինդայում շրջանի ղեկավարի (քաղաքապետի) թեկնածուներ էին առաջադրել միայն 3 կուսակցություններ՝ «Վրացական երազանք – ժողովրդավարական Վրաստան»-ը (Ախալքալաք, Նինոծմինդա), «Եվրոպական Վրաստանը» (Ախալքալաք) և «Միասնական ազգային շարժումը» (Ախալքալաք, Նինոծմինդա):

Ջավախքի մյուս շրջաններում՝ Ախալցխայում, Ասպինձայում, Ադիգենում և Բորժոմում, պայքարել է 15 քաղաքական ուժ: Այս շրջաններում համամասնական ցուցակներով առաջադրված 1.012 թեկնածուներից միայն 58-ն էին ազգությամբ հայեր, որոնցից 25-ը՝ Ախալցխայում, 5-ը՝ Ադիգենում, 8-ը՝ Ասպինձայում, 20-ը՝ Բորժոմում: Իսկ մեծամասնական ընտրակարգով առաջադրված 137 թեկնածուներից հայ էին միայն 12-ը, որոնցից 7-ը՝ Ախալցխայում, 1-ը՝ Ասպինձայում, 4-ը՝ Բորժոմում[25]: Եվ մեծամասնական, և՛ համամասնական ընտրակարգերով թեկնածուներ էին առաջադրել ինչպես երկու հիմնական մրցակից կուսակցությունները՝ «Վրացական երազանք – ժողովրդավարական Վրաստան»-ը և ՄԱԾ-ը, այնպես էլ «Գիորգի Գախարիա – Վրաստանի համար» նորաստեղծ կուսակցությունը և մի շարք այլ ուժեր: Կուսակցությունների ցուցակներում առաջադրված հայ թեկնածուների զբաղեցրած տեղերը խիստ տարբեր էին, ինչից ելնելով էլ՝ շատ դեպքերում զրոյական էր հավանականությունը, որ նրանք տեղ կգրաղեցնեին այս կամ այն շրջանի ՏԻՄ-ում:

Փոխարենը բոլորովին այլ պատկեր էր Ախալքալաքում և Նինոծմինդայում ազգությամբ վրացիների առաջադրման առումով: Այս շրջաններում 12 քաղաքական ուժերի՝ համամասնական ցուցակներով առաջադրած 524 թեկնածուներից 107-ը ազգությամբ վրացի էին. Ախալքալաքում տարբեր ուժերի կողմից առաջադրված 346 թեկնածուներից ազգությամբ վրացի էին 79-ը, իսկ Նինոծմինդայում 178 թեկնածուներից՝ 28-ը[26]: Չափազանց հետաքրքրական է որոշ քաղաքական ուժերի կազմած համամասնական ցուցակների ազգային կազմը: «Գիրչի» կուսակցությունը (№ 36) Ախալքալաքում համամասնական կարգով առաջադրել էր 31 թեկնածուի, որոնց գրեթե կեսը (14-ը)՝ ազգությամբ վրացի (վերջիններս հանդես են եկել 1, 2, 4, 5, 6, 7, 8, 16, 17, 18, 19, 22, 24 և 30 համարների ներքո): Երկրի նախկին վարչապետ Գիորգի Գախարիայի «Գիորգի Գախարիա – Վրաստանի համար» կուսակցությունը (№ 25) Ախալքալաքում համամասնական կարգով առաջադրել էր 40 թեկնածուի, որոնցից 39-ն ազգությամբ վրացի էին (հանդես են եկել 2-40 համարների ներքո): Պատկերը նույնն էր «Եվրոպական դեմոկրատներ» (№ 6) կուսակցության պարագայում. առաջադրված 28 թեկնածուներից ընդամենը 1-ն էր ազգությամբ հայ, այն էլ՝ 26 համարի ներքո: Իսկ ահա «Շալվա Նաթելաշվիլի – Վրաստանի լեյբորիստական» կուսակցությունը (№ 10) Ախալքալաքում համամասնական կարգով առաջադրել էր 32 թեկնածուի, որոնք բոլորն ազգությամբ վրացի էին: «Շալվա Նաթելաշվիլի – Վրաստանի լեյբորիստական կուսակցություն» և «Գիորգի Գախարիա –Վրաստանի համար» կուսակցությունների համամասնական ցուցակների պարագայում ազգաբաշխական նույն պատկերն էր նաև Նինոծմինդայում . համապատասխանաբար 20 թեկնածուներից 19-ը (հանդես են եկել 2-20 համարների ներքո) և 28 թեկնածուներից 27-ն ազգությամբ վրացի էին (միակ հայը հանդես է եկել 5 համարի ներքո)[28]:

2021 թ. ՏԻՄ ընտրությունների արդյունքները Ջավախքում[29]

Փաստենք, որ Ջավախքի բոլոր 7 շրջաններում, ներառյալ գերազանցապես ադրբեջանաբնակ Քվեմո Քարթլի նահանգի մեջ ներառված Ծալկայի շրջանը, հենց 1-ին փուլով թե՛ շրջանի ղեկավարի, թե՛ շրջանային ժողովի՝ մեծամասնական և համամասնական կարգերով ընտրվող պատգամավորների պարագայում ջախջախիչ հաղթանակ է տարել իշխող «Վրացական երազանք – ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունը: Նշված շրջաններում

ընտրությունների՝ հոկտեմբերի 30-ին անցկացված 2-րդ փուլում որևէ կարգով սահմանված ընտրություն տեղի չի ունեցել[30]: Որպես արդյունք՝ բոլոր շրջանների շրջանային ժողովներում 50 %-ից ավելի առավելություն է ստացել նույն ուժը, իսկ շրջանների ղեկավարներ (մունիցիպալիտետի ղեկավար կամ քաղաքապետ) ընտրվել են «Վրացական երազանքի» առաջադրած թեկնածուները. Ծալկայում՝ Իլիա Սաբաձեն (55.9 %), Նինոծմինդայում՝ Անիվարդ Մոսոյանը (82.5 %), Ախալքալաքում՝ Մելքոն Մակարյանը (82 %), Ասպինձայում՝ Ռոստոմ Մագրաքվելիձեն (68.2 %), Ախալցխայում՝ Իրակլի Լազարաշվիլին (56.7 %), Բորժոմում՝ Օթար Արբոլիշվիլին (68.4 %), Ադիգենում՝ Գոչա Քիմաձեն (63.1 %)[31]:

Նշված շրջանների շրջանային ժողովներում ազգաբաշխական կազմը, սակայն, վերստին մեծ մասամբ չի արտացոլում ազգաբնակչության ազգաբաշխական պատկերը: Պատճառը և՛ մեծամասնական ընտրատարածքները, և՛ կուսակցությունների համամասնական ցուցակների անցողիկ տեղերը շրջանների ազգային կազմին համահունչ չձևավորելն է: Որպես արդյունք՝ ունենք հետևյալ պատկերը.

1. **Ծալկայի շրջանային ժողով** – 30 պատգամավոր (*10-ը՝ մեծամասնական, 20-ը՝ համամասնական ընտրակարգով)*, որոնցից 7-ը՝ ազգությամբ հայ *(4-ը՝ մեծամասնական, 3-ը՝ համամասնական ընտրակարգով, բոլորը՝ իշխող «Վրացական երազանքից»)*: 2014 թ. մարդահամարի տվյալներով՝ վրացի՝ 8.800 (46.7 %), հայ՝ 7.300 (38.7 %): Անհամաչափությունն ակնհայտ է. պետք է լիներ 11-12 հայազգի պատգամավոր:

2. **Նինոծմինդայի շրջանային ժողով** – 30 պատգամավոր *(10-ը՝ մեծամասնական, 20-ը՝ համամասնական ընտրակարգով)*, որոնցից 29-ը՝ ազգությամբ հայ *(10-ը՝ մեծամասնական, 19-ը՝ համամասնական ընտրակարգով, նշված 19-ից 1-ը՝ «Եվրոպական Վրաստան», 1-ը՝ «Միացյալ ազգային շարժում», 1-ը՝ «Գիորգի Գախարիա – Վրաստանի համար», 16-ը՝ իշխող «Վրացական երազանք» ուժերից)*: 2014 թ. մարդահամարի տվյալներով՝ վրացի՝ 1.000 (4.1 %), հայ՝ 23.300 (95.1 %): Անհամաչափություն չկա:

3. **Ախալքալաքի շրջանային ժողով** – 42 պատգամավոր *(14-ը՝ մեծամասնական, 28-ը՝ համամասնական ընտրակարգով)*, որոնցից 35-ը՝ ազգությամբ հայ *(13-ը՝ մեծամասնական, 22-ը՝ համամասնական ընտրակարգով, նշված 22-ից 1-ը՝ «Լելո», 2-ը՝ «Եվրոպական Վրաստան», 2-ը՝ «Միացյալ ազգային շարժում», 17-ը՝ իշխող «Վրացական երազանք» ուժերից)*[33]: 2014 թ. մարդահամարի տվյալներով՝ վրացի՝ 3.100 (6.9 %), հայ՝ 41.900 (93 %): Անհամաչափությունն ակնհայտ է. պետք է լիներ առնվազն 39 հայազգի պատգամավոր:

4. **Ասպինձայի շրջանային ժողով** – 30 պատգամավոր *(10-ը՝ մեծամասնական, 20-ը՝ համամասնական ընտրակարգով)*, որոնցից 2-ը՝ ազգությամբ հայ (1-ը՝ մեծամասնական, 1-ը՝ համամասնական ընտրակարգով, բոլորը՝ իշխող «Վրացական երազանքից»): 2014 թ. մարդահամարի տվյալներով՝ վրացի՝ 9.000 (86.8 %), հայ՝ 1.400 (13.5 %): Անհամաչափությունն ակնհայտ է. պետք է լիներ առնվազն 4 հայազգի պատգամավոր:

5. **Ախալցխայի շրջանային ժողով** – 39 պատգամավոր *(13-ը՝ մեծամասնական, 26-ը՝ համամասնական ընտրակարգով)*, որոնցից 5-ը՝ ազգությամբ հայ *(3-ը՝ մեծամասնական, 2-ը՝ համամասնական ընտրակարգով, բոլորը՝ իշխող «Վրացական երազանքից»)*: 2014 թ. մարդահամարի տվյալներով՝ վրացի՝ 26.400 (67.9 %), հայ՝ 12.000 (30.9 %): Անհամաչափությունն ակնհայտ է. պետք է լիներ 12-13 հայազգի պատգամավոր:

6. **Բորժոմի շրջանային ժողով** – 33 պատգամավոր (11-ը՝ մեծամասնական, 22-ը՝ համամասնական ընտրակարգով), որոնցից 2-ը՝ ազգությամբ հայ *(2-ն էլ՝ մեծամասնական ընտրակարգով, 1-ը՝ իշխող «Վրացական երազանքից», 1-ը՝ ընդդիմադիր ՄԱԾ-ից)*: 2014 թ. մարդահամարի տվյալներով՝ վրացի՝ 22.000 (87.3 %), հայ՝ 2.200 (8.7 %): Անհամաչափությունն ակնհայտ է. պետք է լիներ առնվազն 3 հայազգի պատգամավոր:

7. **Ադիգենի շրջանային ժողով** – 33 պատգամավոր (11-ը՝ մեծամասնական, 22-ը՝ համամասնական ընտրակարգով): Ժողովում հայ պատգամավոր չկա: 2014 թ. մարդահամարի տվյալներով՝ վրացի՝ 16.000 (97.2 %), հայ՝ 400 (2.4 %): Պետք է գոնե 1 հայազգի պատգամավոր լիներ:

Ասպինձայի և Ախալցխայի շրջանային ժողովներում նախագահի տեղակալ են ընտրվել հայազգի պատգամավորները, ինչը պետք է արձանագրել որպես դրական փաստ:

2021 թ. Վրաստանի ՏԻՄ ընտրությունների պաստառ

Հղումներ

1- Պրեֆեկտուրայի ինստիտուտի ձևավորումը մեծապես անդրադառնալու էր Ջավախքի ներքաղաքական կյանքի վրա. այլազգի (հույն, վրացի) պրեֆեկտների նշանակումը 1991 թ. ողջ ընթացքում (մինչ նոյեմբերի 11-ին ջավախահայության պահանջների բավարարումը և հայազգի պրեֆեկտի նշանակումը [տես «Ասպնջակ», 04.12.1991, թիվ 12]) մեծ հուզումներ առաջացրեց հայաբնակ Ջավախքում: Չընդունելով պրեֆեկտուրայի իշխանությունը՝ 1991 թ. մարտին Ջավախքում ձևավորվեց մի յուրօրինակ «ժամանակավոր կառավարություն»՝ Ժողովրդական լիագործների խորհուրդ անվամբ (տես Սարգսյան Վ., Սամցխե-Ջավախք-Թոռեղբը հայ-վրացական հարաբերությունների հոլովույթում (1980-ական թթ. վերջ – 1990-ական թթ.), Եր., 2006, էջ 88-98):

2- Վրաստանի վարչատարածքային նոր բաժանմամբ Հարավային Օսեթիայի նախկին ինքնավար մարզի տարածքները ներառվեցին 4 նորաստեղծ նահանգների մեջ. արևելյան հատվածը ներառվեց Մցխեթա-Մթիանեթի, կենտրոնական հիմնական հատվածը՝ Շիդա Քարթլիի, արևմտյան մի փոքր հատված՝ Իմերեթի, և վերջապես՝ հյուսիսարևելյան ևս մի փոքր հատված՝ Ռաջա-Լեչխումի և Քվեմո Սվանեթիի նահանգների մեջ:

3- Վրաստանի «դե յուրե» փաստաթղթերով Աբխազիայում պահպանվել են խորհրդային 6 շրջանները՝ Գագրայի, Գուդաութի, Սուխումի, Գուլրիպշի, Օչամչիրայի և Գալիի: 1994 թվականին Օչամչիրայի և Գալիի որոշ տարածքների միավորմամբ Աբխազիայում ձևավորվեց 7-րդ՝ Տղվարչելի շրջանը: Աբխազիայի այս նոր վարչաբաժանումը չի ճանաչվել Վրաստանի կողմից:

4- 1. Ցխինվալի շրջանը ներառվեց Գորիի նորաստեղծ շրջանի մեջ (Շիդա Քարթլի նահանգ), այդուհանդերձ, Գորիի նորաստեղծ շրջանը Վրաստանի ԿԸՀ քարտեզում Գորիի և Ցխինվալի նախկին խորհրդային շրջանների հենքի վրա համապատասխանաբար բաժանված է երկու մեծամասնական ընտրական տարածքի՝ Գորիի և Լիախվիի), 2. Ձնաուրի շրջանը՝ Քարեղի շրջանի (Շիդա Քարթլի նահանգ), 3. Ձաուի (Ջավա) շրջանի մի մասի վրա ձևավորվեց Ջավայի շրջանը (Շիդա Քարթլի նահանգ), որոշ հատված ներառվեց Օսի շրջանի մեջ (Ռաջա-Լեչխումի և Քվեմո Սվանեթիի նահանգ), մեկ այլ հատված՝ Սաչխերի շրջանի (Իմերեթի նահանգ), 4. Լենինգորի շրջանը, վերանվանվելով Ախալգորի, որպես առանձին շրջան ներառվեց Մցխեթա-Մթիանեթի նահանգի մեջ: Բնականաբար, միայն Աջարիայի ԻՀ-ն է ենթարկվում պաշտոնական Թբիլիսիին. Աբխազիան և Հարավային Օսեթիան 2008 թվականից մասամբ ճանաչված անկախ պետություններ են, և Վրաստանի վերոնկարագրյալ վարչական բաժանումները միայն թղթի վրա են ու չեն կենսագործվել:

5- 2018 թ. մարտի 23-ին ստորագրված Վրաստանի N 2071 սահմանադրական օրենքով վերախմբագրված նոր Սահմանադրության մեջ նշված ձևակերպումը տեղափոխվել է 7-րդ հոդվածի 3-րդ կետ և ստացել հետևյալ տեսքը. «Վրաստանի պետական-տարածքային կառուցվածքը վերանայվելու է Վրաստանի սահմանադրական օրենքով՝ երկրի ամբողջ տարածքի վրա Վրաստանի իրավասության լիակատար վերականգնումից հետո լիազորությունների սահմանափակման սկզբունքի հիման վրա»:

6- Տես Սվրաթվելոսկ Սարհիշեմ կոդեքսիս, տբիլիսի, 2001 թվականի 2 օգոստոսի, № 1047-ին (Վրաստանի ընտրական օրենսգիրք, Թբիլիսի, 2001 թ. օգոստոսի 2, № 1047-ՌՍ), https://matsne.gov.ge/ka/document/view/15622?publication=50&fbclid=IwAR-14LF6KzW1lGyW_ahaIjXQIKip-6qknVVsnE8TAvx3ABYAHNit-eX3RD2E:

7- Տես Ստեփանեան Խ., Ջաւախքը մէկ տարում, «Դրօշակ», 2002, թիւ 4, էջ 47-56:

8- Հայաստանը Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիան վավերացրել է 2002 թվականին:

9- Տես Սվրաթվելոսկ Սարհիշեմ կոդեքսիս ադգոլոմբրոզո տոմոմմարտվելոբոսի შესახებ, տբիլիսի, 2005 թվականի 16 դեկտեմբերի, № 2304-ին (Տեղական ինքնակառավարման մասին Վրաստանի օրգանական օրենք, Թբիլիսի, 2005 թ. դեկտեմբերի 16, № 2304-ՌՍ), https://matsne.gov.ge/ka/document/view/27802?publication=36&fbclid=IwAR-1soOSrEBXrMkocIuiA85aMZAcj0d6oFO8yh0iclmKkSThr5rVUUHCQw-fo%23part_14#!:

10- Տե՛ս Սվրաթվելոսկ Սարհիշեմ կոդեքսիս, տբիլիսի, 2011 թվականի 27 դեկտեմբերի, № 5636 –ին (Վրաստանի ընտրական օրենսգիրք, Թբիլիսի, 2011 թ. դեկտեմբերի 27, № 5636-ՌՍ), https://matsne.gov.ge/ka/document/view/1557168?publication=70#!:

11- Տես Սվրաթվելոսկ Սարհիշեմ կանոնի, ադգոլոմբրոզո տոմոմմարտվելոբոսի կոդեքսիս, ქუთაისი, 5 տեբերվալի 2014 թ., N 1958-IIს (Վրաստանի օրգանական օրենք, Տեղական ինքնակառավարման օրենսգիրք, Թբիլիսի, 2014 թ. փետրվարի 5, № 1958-IIՍ), https://matsne.gov.ge/ka/document/view/2244429?publication=59&fbclid=IwAR14NNEUJXpx66kE86Ormy5NxDXKqbTbWJ_E9uPzAumZawiin7F9qsiO-BiE:

12- Համաձայնագրի տեքստը տես https://eeas.europa.eu/sites/default/files/mediacia_samomavlo_gza_sakartvelostvis.pdf:

13- Տես Новое предложение Евросоюза по преодолению политического кризиса в Грузии, https://civil.ge/ru/archives/413928:

14- Грузинская мечта выходит из Соглашения от 19 апреля, http://civil.ge/ru/archives/434279.

15- Տես մունիցիպալիտետի որգանոտա 2021 թվականի 2 ոչտոմբրոսի արհիշեմբեր, https://results.cec.gov.ge/#/ka-ge/election_45/dashboard:

16- Տես Եվրախորհրդարանը ճանաչել է Վրաստանում կայացած ընտրությունների արդյունքները, https://jnews.ge/am/?p=64965:

17- Տես մունիցիպալիտետի որգանոտա 2021 թվականի 30 ոչտոմբրոսի արհիշեմբեր - II տուրը, տոմոմմարտվելոբոսի ქალაქის մերը, https://results.cec.gov.ge/#/ka-ge/election_46/dashboard:

18- 15 շրջաններից 3-ում իշխող «Վրացական երազանքը» մրցել է այլ ուժերի հետ (Թիանեթում՝ «Թամազ Մեչիաուրին՝ հանուն միասնական Վրաստանի», Ցագերում՝ «Գախարիա – Վրաստանի համար», Օզուրգեթում՝ անկախ թեկնածուի հետ): Մնացյալ 12-ում «Վրացական երազանքը» մրցել է «Միացյալ ազգային շարժման» հետ:

19- Տես մունիցիպալիտետի որգանոտա 2021 թվականի 30 ոչտոմբրոսի արհիշեմբեր - II տուրը, տոմոմմարտվելոբոսի տոմոմի մերը, https://results.cec.gov.ge/#/ka-ge/election_46/dashboard:

20- 2005 թ. ընդունված օրենսդրության համաձայն, ինչպես վերը նշեցինք, Վրաստանում ձևավորվեցին 68 ինքնակառավարվող միավորներ: Այդուհանդերձ, Աբխազիայի (Վրաստանի 6 ինքնակառավարվող շրջան) և Հարավային Օսեթիայի (Վրաստանի 3 ինքնակառավարվող շրջան) տարածքներում, բնականաբար, ՏԻՄ ընտրություններ տեղի չեն ունեցել:

21- Տես Սվրաթվելոսկ Որգանոսկո կանոնո Սվրաթվելոսկ Որգանուլ կանոնշի „Սվրաթվելոսկ Սարհիշեմ կոդեքսիս“ ցվլոլեբեսի մեթանոսի մեսախեբ, տբիլիսի, 28 ոչեսիս 2021 թ., N 703-Vრს-Xმ3 (Վրաստանի օրգանական օրենքը «Վրաստանի ընտրական օրենսգիրք» օրգանական օրենքում փոփոխություններ կատարելու մասին, Թբիլիսի, 2021 թ. հունիսի 28, № 703-VՌU-XՄՊ), https://matsne.gov.ge/ka/document/view/5200931?publication=0#DOCUMENT:1:

22- Տես Նահատակյան Վ., Ջավախքի հիմնահարցերը (մաս 1), «Դրօշակ», հունվար, 2020, թիվ 1, էջ 13:

23- Տես Ախալքալաքում ՏԻՄ ընտրություններին մասնակցում է 12 կուսակցություն, https://jnews.ge/am/?p=63556:

24- Տես Նինոծմինդայում ՏԻՄ ընտրություններին մասնակցում է 9 կուսակցություն և նախաձեռնող խումբ, https://jnews.ge/am/?p=63560:

25- Տես Հայեր, որոնք Ախալցխայում մասնակցում են ՏԻՄ ընտրություններին, https://jnews.ge/am/?p=63965:

26- Մեծամասնական ընտրակարգով առաջադրված 79 թեկնածուներից միայն 6-ն էին ազգությամբ վրացի (4-ը՝ Ախալքալաքում, 2-ը՝ Նինոծմինդայում), քանի որ համապատասխանաբար 93 և 95.1 %-ով հայաբնակ Ախալքալաքի և Նինոծմինդայի ընդամենը մի քանի վրացաբնակ գյուղերը հայաբնակ գյուղախմբերի հետ մեկ ընտրատարածքի մեջ ներառելու պարագան նվազեցնում էր ազգությամբ վրացիների ընտրվելու հնարավորությունը:

27- Փաստենք, որ քաղաքական որոշ ոչ իշխանական ուժերի համամասնական ցուցակների ազգաբաշխական սույն պատկերը կապված էր նաև Վրաստանի ուժային կառույցների ձեռնարկած միջոցառումների հետ, որոնց հետևանքով ազգությամբ հայ տեղացիները շատ դեպքերում չեն ցանկացել ՏԻՄ ընտրություններին մասնակցել նշված ուժերի հետ և խուսափել են ավելորդ գլխացավանքներից: Եվ նշված ուժերը փորձել են ամեն կերպ լրացնել ցուցակները (թեկուզ գերակշիռ մասով ազգությամբ վրացիներով, ինչի հետևանքով հայաբնակ շրջաններում էապես նվազում էր ձայների քանակը)՝ ցույց տալու, որ ՏԻՄ ընտրություններին մասնակցում են երկրի բոլոր շրջաններում:

28- Տես Վրացիներ, որոնք Ջավախքում մասնակցում են ՏԻՄ ընտրություններին, https://jnews.ge/am/?p=64221:

29- Վրաստանի այլ նահանգների (այդ թվում՝ մայրաքաղաքի) ՏԻՄ-երում հայության ներգրավվածության խնդրին կանդրադառնանք լրացուցիչ: Մինչ այդ փաստենք, որ բազմազգ Թբիլիսիի՝ 2021 թ. ձևավորված նոր քաղաքային ժողովում (սակրեբուլոյում), որտեղ, 2014 թ. Վրաստանի պաշտոնական մարդահամարի տվյալների համաձայն, ապրում է շուրջ 53.000 հայ, չկա որևէ հայազգի պատգամավոր (տես տբիլիսոսկ սակրեբուլո գովրեբա 2021, սակրեբուլոսկ ֆոյվրեբը, http://tbsakrebulo.gov.ge/index.php?m=338&faction_id=184&fbclid=IwAR1RSEdV8cqL9IXOcS0x99YMMXd-MAFTgQWqkEMhdYR_V4TCApCnoAHADps0):

30- Չնայած որ շրջաններում օրենքով սահմանված է բավական ցածր ընտրաշեմ (3 %), այդուհանդերձ, Վրաստանի ՏԻՄ ընտրությունների ժամանակ Ջավախքի շրջաններում ևս հիմնական մրցակցությունն ընթացավ իշխող «Վրացական երազանքի» և հիմնական ընդդիմադիր ՄԱՇ-ի միջև, և շատ քիչ թվով այլ ուժեր ընդգրկվեցին շրջանային ժողովներում, իսկ ընդգրկման դեպքում ընդամենը 1-2 պատգամավոր ունեցան այնտեղ: Այլ ուժերի՝ «խաղից դուրս» վիճակը խոսում է պետության կողմից հավասար մրցակցության ոչ լիարժեք ապահովման և միակուսակցական մթնոլորտի առկայության մասին:

31- Տես մունիցիպալիտետի որգանոտա 2021 թվականի 2 ոչտոմբրոսի արհիշեմբեր, տոմոմմարտվելոբոսի տոմոմի մերը, https://results.cec.gov.ge/#/ka-ge/election_45/dashboard:

32- Տես Ո՞վ կմտնի Նինոծմինդայի Սակրեբուլո, https://jnews.ge/am/?p=64898:

33- Տես Ո՞վ կմտնի Ախալքալաքի Սակրեբուլո, https://jnews.ge/am/?p=64846:

Տարածաշրջանային զարգացումների ընդհանուր միտումները 2022 թվականին

Արմեն Պետրոսյան
Արևելագետ, տարածաշրջանային հարցերով փորձագետ

2020 թ. ավարտին և 2021 թ. ողջ ընթացքում Մերձավոր Արևելքում արմատական գործընթացներ են ծավալվել, որոնց հետևանքով աստիճանական վերափոխումներ են գրանցվում հատկապես վերջին տասնամյակի ընթացքում բյուրեղացած տարածաշրջանի առանցքային դերակատարների միջև՝ երկկողմ հարաբերությունների տիրույթում, ինչպես նաև ամբողջ տարածաշրջանի անվտանգային միջավայրի համապատկերում: Մասնավորապես, հարաբերությունների մինչ այս առավել տարածված հակամարտային մակարդակից աստիճանաբար անցում է կատարվում համագործակցայինի: Ասել է թե՝ տարածաշրջանում տևական ժամանակ շարունակվող և համեմատաբար նոր ծագած հիմնախնդիրներում արձանագրված տարբեր մասշտաբի և մակարդակի սրացումներից հետո կարծես որոշակի «թայմ-աուտ» է գրանցվում, քանի որ առանցքային դերակատարների միջև խորքային խնդիրները շարունակում են չլուծված մնալ, պարզապես փոխվում է մոտեցումը դրանց սառեցման հարցում, հատկապես տնտեսական լրջագույնս սրված պատճառների և աշխարհաքաղաքական վերափոխումների ազդեցությամբ: Ըստ այդմ՝ էական փոփոխություններ են արձանագրվել արաբա-իսրայելական, Կատարի, սիրիական, Իրան-Սաուդյան Արաբիա հիմնախնդիրներում, Թուրքիա-ԱՄԷ, Թուրքիա-Եգիպտոս, Թուրքիա-Իսրայել հարաբերություններում: Կարևոր գործընթացներ են ծավալվում Իրանի միջուկային ծրագրի շուրջ և այլն:

«Աբրահամյան համաձայնագրերի» գործընթացը

Մերձավորարևելյան տարածաշրջանի համար առանձնակի կարևորություն ունի ԱՄՆ-ի նախորդ նախագահ Դ. Թրամփի վարչակազմի կառավարման վերջին շրջանում հատկապես նախագահի դստեր ամուսին և ավագ խորհրդական Ջարեդ Քուշների գործուն ջանքերով Իսրայելի և մի շարք կարևոր արաբական երկրների միջև դեռևս 2020 թ. սեպտեմբերից մեկնարկած, այսպես կոչված, «Աբրահամյան համաձայնագրերի» ստորագրման պատմական գործընթացը (մինչ այդ արաբական երկրներից Իսրայելի հետ խաղաղության պայմանագրեր ստորագրել էին միայն Եգիպտոսը 1979 թ. և Հորդանանը 1994 թ.): Բովանդակային առումով այն լրիվ տեղավորվում էր ամերիկյան մերձավորարևելյան քաղաքական ուղեգծի տրամաբանության մեջ և կազմում էր դրա առանձին բաղադրատարրերից մեկը՝ միտված ռազմավարական դաշնակցի՝ Իսրայելի անվտանգության մակարդակի բարձրացմանը: Գործընթացի հետևանքով սեպտեմբերի 15-ին Վաշինգտոնում ստորագրվեցին նախ Իսրայել-ԱՄԷ,

Իսրայել-Բահրեյն խաղաղության պայմանագրերը, իսկ ավելի ուշ՝ հոկտեմբերի 23-ին, Թրամփը հայտարարեց Իսրայել-Սուդան, դեկտեմբերի 10-ին՝ Իսրայել-Մարոկկո հարաբերությունների կարգավորման մասին: Նշված փաստաթղթերի ստորագրումը ոչ միայն նպաստեց դրանց մասնակից դերակատարների միջև երկկողմ հարաբերությունների բարելավմանը, այլև սկզբունքային փոփոխություն մտցրեց տարածաշրջանի ամենաարյունալի և պայթյունավտանգ արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման տրամաբանության մեջ:

Մինչև վերոնշյալ գործընթացը պաղեստինյան հիմնախնդրի կարգավորման համատեքստում արաբական երկրների դիրքորոշումը համապատասխանում էր դեռևս 2002 թ. Արաբական պետությունների լիգայի հեղինակած «Արաբական խաղաղ նախաձեռնության» կոնցեպտին: Դրա առանցքում բոլոր արաբական երկրների և Իսրայելի միջև հարաբերությունների համապարփակ կարգավորման առաջարկն էր՝ զուգորդված պաղեստինյան հիմնախնդրի վերջնական կարգավորման զուգահեռ գործընթացով՝ հիմք ունենալով մինչև 1967 թ. հունիսի 4-ը եղած սահմանները (Իսրայելի նահանջ մինչև հարևան արաբական երկրների դեմ վեցօրյա պատերազմը եղած սահմանագիծը), Հորդանան գետի արևմտյան ափում և Գազայի հատվածում Պաղեստին պետության ստեղծման պայմանը: Մինչդեռ «Աբրահամյան համաձայնագրերի» միջոցով վերագործարկվեց Իսրայելի հետ սեպարատ խաղաղության համաձայնագրի ստորագրման գործընթացը: Դրան մասնակից դարձած արաբական երկրներն իրենց մոտեցումը հիմնավորում էին այն պնդմամբ, թե տասնամյակներ շարունակ Իսրայելի հետ հարաբերությունների հակամարտային բնույթը ոչ միայն չի հանգեցրել հիմնախնդրի հանգուցալուծմանը, այլև հակառակը՝ անգամ ավելի է խորացրել հակամարտ կողմերի միջև թշնամանքը և նվազեցրել կար-

գավորման հնարավորությունը: Հետևաբար անհրաժեշտ է փոխել դիրքորոշման սկզբունքը, մասնավորապես՝ փորձել համագործակցային միջավայրում Իսրայելի կախվածության աճի հաշվին հարկադրել նրան գնալ զիջումների:

Հարկ է նշել, որ «Աբրահամյան համաձայնագրերի» գործընթացը միանշանակորեն չընդունվեց բազմաթիվ արաբական և մուսուլմանական երկրների կողմից: Դրանց քննադատությամբ հանդես եկան Սաուդյան Արաբիան (Ռիադի դիրքորոշումը միանշանակ չէ. եթե թագավոր Սալմանը դեմ է գործընթացին, ապա միապետության փաստացի առաջնորդ թագաժառանգ արքայազն Մուհամմադ բին Սալմանը դրա ջատագովներից է), Թուրքիան, Իրանը և այլն: Նշված գործընթացը դրական միտումներ արձանագրեց 2021 թ. ողջ ընթացքում՝ նպաստելով Իսրայելի և արդեն գործընկեր արաբական երկրների միջև տարբեր ոլորտներում հարաբերությունների հաստատմանն ու զարգացմանը: Դրա յուրօրինակ բարձրակետը դարձան 2021 թ. սկզբին դեսպանատների բացումից հետո՝ դեկտեմբերի 12-ին, Իսրայելի վարչապետ Նեֆթալի Բենեթի առաջին «պատմական» այցն Աբու Դաբի, հանդիպումն ԱՄԷ թագաժառանգ արքայազն Մուհամմադ բին Զաիդ Ալ Նահայանի հետ և մի քանի ուղղություններով ձեռք բերված պայմանավորվածությունները:

Կատարի հիմնախնդրի կարգավորումը

Տարածաշրջանի անվտանգային պատկերի բարելավման ընթացքի վրա դրական ազդեցություն ունեցավ նաև ԱՄՆ-ի նախորդ վարչակազմի և Քուվեյթի ակտիվ միջնորդությամբ նախաձեռնված կատարյան հիմնախնդրի հանգուցալուծման գործընթացը: Դրա շրջանակներում զգալիորեն բարելավվեցին Սաուդյան Արաբիայի գլխավորած ոչ ֆորմալ դաշինքի (ԱՄԷ, Բահրեյն, Եգիպտոս, Եմեն, Լիբիա և այլն) և Կատարի միջև հարաբերությունները, որոնք սրվել էին 2017 թ. հունիսին՝ այն բանից հետո, երբ նշված արաբական երկրներն ահաբեկչությանն ու անջատողականությանն աջակցելու, արաբական երկրների ներքին գործերին միջամտելու, Իրանի հետ համագործակցելու մեղադրանքներով խզեցին դիվանագիտական հարաբերությունները Դոհայի հետ, փորձեցին քաղաքական և տնտեսական առումներով շրջափակել Կատարը և հասնել իշխանափոխության: «Արաբական քառյակը» 13-կետանոց վերջնագիր ներկայացրեց Կատարին՝ սահմանելով դրա կատարման 10-օրյա ժամկետ: Սակայն Կատարի շրջափակման ծրագիրը ձախողվեց Իրանի, բայց հատկապես Թուրքիայի՝ այդ երկրին ցուցաբերած ռազմաքաղաքական, տնտեսական և լոգիստիկ համակողմանի աջակցության պատճառով:

2021 թ. հունվարի 5-ին՝ Կատարում կայանալիք ֆուտբոլային համաարաբական և համաշխարհային իրադարձություններին ընդառաջ, Սաուդյան Արաբիայի Ալ-Ուլա քաղաքում տեղի ունեցած՝ Պարսից ծոցի արաբական միապետությունների

Աբրահամյան համաձայնագրեր

համագործակցության խորհրդի 41-րդ գագաթնաժողովին «միավորվել ընդդեմ Իրանի» քարոզչական բնույթի կարգախոսի ներքո ստորագրվեց Կատարի հետ բոլոր տարաձայնությունների հանգուցալուծման, դիվանագիտական հարաբերությունների լիարժեք վերականգնման և ապաշրջափակման վերաբերյալ փաստաթուղթ: Եգիպտոսի անունից փաստաթուղթը ստորագրել է այդ երկրի ԱԳ նախարար Սամեհ Շուքրին: Այս կարևորագույն միջոցառմանը ևս մասնակցում էր գործընթացի առանցքային միջնորդ Ջ. Քուշները: Հարաբերությունների կարգավորման գործընթացը խթանվեց դեսպանատների փոխադարձ վերաբացմամբ ամբողջ տարվա ընթացքում, ինչպես նաև տեղի ունեցած բարձրաստիճան փոխայցելությունների և բանակցությունների միջոցով: Այսպես՝ Կատարի Էմիր Թամիմ բին Համադ Ալ Թանին Ալ-Ռիադ է այցելել նաև մայիսին, իսկ սաուդյան գահաժառանգ արքայազն Մուհամմադ բին Սալմանը Դոհա՝ դեկտեմբերին:

Սիրիական հակամարտությունում արձանագրված տեղաշարժերը

Տարածաշրջանային մրցակցության տեսանկյունից էական փոփոխություններ են արձանագրվում նաև սիրիական հակամարտության համատեքստում: Մասնավորապես, Սիրիայում իրենց տարածաշրջանային մրցակիցներ Թուրքիային և Իրանին զգալիորեն զիջած արաբական երկրները կարծես փոխում են իրենց ձախողված մարտավարությունը՝ փորձելով վերականգնել Սիրիայում իշխող վարչակազմի հետ անցած 10 տարվա ընթացքում առնվազն սառեցված հարաբերությունները: Հարկ է նշել, որ արաբական երկրներից այս գործընթացը ևս առաջնորդում է տարածաշրջանային տարբեր նախաձեռնություններում ներկայումս առաջին ջութակի դերակատարում ստանձնած ԱՄԷ-ն: Տարբեր ոլորտներում (մարդասիրական, տնտեսական, շինարարական, քաղաքական և այլն) աջակցության առաջարկներով փորձեր են նախաձեռնվում՝ վերականգնելու հարաբերությունները հակամարտության շրջանակներում գոնե առայժմ անհամեմատ բարենպաստ դիրքեր ունեցող Բաշար ալ-Ասադի

վարչակազմի հետ: Այս գործընթացում բավականաչափ կարևոր քայլ էր նոյեմբերի սկզբներին ԱՄԷ ԱԳ նախարար Աբդալլահ բին Զահիդ Ալ Նահայանի այցը Դամասկոս և Ալ-Ասադի հետ վարած բարձր մակարդակի բանակցությունները, որոնց հրապարակային մասում Ալ Նահայանն իր աջակցությունն է հայտնել Սիրիայում պատերազմի դադարեցմանն ուղղված բոլոր ջանքերին, կայունության հաստատմանը և սիրիացի ժողովրդի ակնկալիքների բավարարմանը: Հարկ է նշել, որ 2012 թ. փետրվարին Դամասկոսի հետ հարաբերությունների խզումից հետո միայն 2018 թ. դեկտեմբերին է ԱՄԷ-ն վերաբացել Սիրիայում իր դեսպանատունը և 2021 թ. մարտին հանդես է եկել ԱՊԼ-ում Սիրիայի անդամակցության վերականգնման օգտին: Զուգահեռաբար նույն դիրքորոշումն էին արտահայտել նաև Հորդանանը, Եգիպտոսն ու Սաուդյան Արաբիան:

Իրանի միջուկային համաձայնագրի վերականգնման փորձը

Ակտիվ փորձեր են կատարվում տարածաշրջանային մեկ այլ կարևոր հիմնախնդրի՝ Իրանի միջուկային ծրագրի վերագործարկման ուղղությամբ: 2021 թ. ապրիլից Վիեննայում մեկնարկել էին մի կողմից «4+1» (ՄԱԿ-ի ԱԽ անդամները՝ բացի ԱՄՆ-ից, և Գերմանիան)-Իրան, մյուս կողմից՝ ԱՄՆ-ի հետ անուղղակի բանակցությունները: Բանակցությունների առաջին 6 շրջափուլի ընթացքում որևէ էական արդյունքի բացակայության պատճառով դրանք ընդհատվել էին 2021 թ. հունիսին՝ Իրանում նախագահական ընտրությունների պատճառով և վերսկսվել նույն թվականի նոյեմբերի վերջին: Բավականաչափ ծանր և խրթին գործընթացը բանակցությունների 7-րդ և 8-րդ փուլերի ընթացքում կարծես որոշակի հաջողություն է արձանագրել քննարկվող տեքստում սկզբունքների փոխհամաձայնեցման առումով: Բանակցություններին զուգահեռ՝ դրանց դեմ քաղաքական, քարոզչական բավականաչափ լայնամասշտաբ արշավ է իրականացվում Իսրայելի կողմից: Թել Ավիվը պարբերաբար հայտարարում է, որ «վատ համաձայնագրի» ստորագրման պարագայում Իսրայելն իրեն իրավունք է վերապահելու ինքնուրույն գործելու և Իրանի միջուկային ծրագիրը ռազմական եղանակով լուծելու հարցում:

Կատարի էմիրի պատմական այցը Սաուդյան Արաբիա

Հարկ է հիշեցնել, որ Իրանի միջուկային համաձայնագրի գործողությունը զգալիորեն սահմանափակվել էր Դոնալդ Թրամփի վարչակարգի՝ 2018 թ. փաստաթղթի դրույթներից միակողմանի հրաժարումից և Իրանի դեմ տնտեսական և քաղաքական համակողմանի պատժամիջոցների սահմանումից հետո: ԱՄՆ-Իրան հարաբերությունները հավելյալ սրվել էին նաև 2020 թ. հունվարին ԱՄՆ-ի հատուկ ծառայությունների կողմից՝ անմիջապես նախագահ Թրամփի հրամանով, Բաղդադում ԻՀՊԿ «Ղոդս» ստորաբաժանման հայտնի հրամանատար Ղասեմ Սոլեյմանիի և իրաքյան ժողովրդական աշխարհազորի՝ շիայական «Հաշդ ալ-Շաաբի» խմբավորման փոխհրամանատար Աբու Մահդի ալ Մուհանդիսի դեմ հաջողված մահափորձից հետո: Թեհրան-Վաշինգտոն լարվածությունը պարբերաբար դրսևորվում է ոչ միայն Իրաքի, Սիրիայի և Լիբանանի տարածքներում, այլև Պարսից ծոցի ջրերում՝ պարբերաբար նկատվող «տանկերային հակամարտության» շրջանակներում:

Իրան-Սաուդյան Արաբիա հարաբերությունների կարգավորումը

Տարածաշրջանի անվտանգային միջավայրի բարելավման գործընթացում ոչ պակաս կարևոր նշանակություն ունի 2016 թ. հունվարից ծայրաստիճան սրված Իրան-Սաուդյան Արաբիա հարաբերությունների կարգավորման գործընթացը, ինչի պայմանական մեկնարկը համընկավ ԱՄՆ-ի՝ Իրանի միջուկային համաձայնագրին վերադառնալու քաղաքական ուղեգծի գործարկման ժամանակահատվածին: Անցյալ տասնամյակի ընթացքում հատկապես Եմենի տարածքում ռազմական, իսկ Լիբանանում, Սիրիայում ու Իրաքում քաղաքական և տնտեսական հարթություններում մրցակցող այս դերակատարների միջև հարաբերությունների՝ 2021 թ. ապրիլից Իրաքի վարչապետ Մուստաֆա Քազեմիի անմիջական միջնորդությամբ կարգավորմանը միտված բանակցություններն արդեն 4 փուլ են անցել: Բաղդադից բացի՝ շփման համար կողմերն օգտագործել են նաև ՄԱԿ-ի ԳԱ հարթակը: Սակայն հարկ է նշել, որ կողմերի շփումներն առայժմ բավականաչափ ցածր մակարդակում են և շոշափելի արդյունք չեն արձանագրել. ցայժմ կողմերին չի հաջողվել պայմանավորվածություն ձեռք բերել անգամ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման շուրջ: Առայժմ ձեռք բերված միակ առարկայական պայմանավորվածությունը 2016 թ.-ից ի վեր Զիդդա իրանցի 3 դիվանագետների մուտքի արտոնումն է՝ ԻՀԿ ներկայացուցչությունում աշխատելու նպատակով: Բայց և այնպես, Թեհրան-Ռիադ գործընթացն արդեն բավականաչափ կարևոր

հանգամանք է միաժամանակ տարածաշրջանային մի քանի հակամարտություններում լարվածության թուլացման տեսանկյունից:

Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության վերանայումը

Դեռևս 2020 թ. տարեվերջից տարածաշրջանային մրցակիցների և հակառակորդների հետ երկար ժամանակ շարունակվող լարվածությունը թուլացնելու ակտիվ փորձեր են նախաձեռնվել Թուրքիայի կողմից: Մի կողմից՝ տևական հակամարտություններում Անկարայի հյուծվածությունը, մյուս կողմից՝ տնտեսական լրջագույն խնդիրները, ինչպես նաև ԱՄՆ-ի գործող վարչակազմի հետ խորացած հակասությունները դրդեցին Էրդողանի վարչակարգին ոչ միայն դիմելու հարաբերությունների կարգավորման, այլև փորձելու ֆինանսական միջոցներ ներգրավել հատկապես արաբական մի շարք կարևոր դերակատարներից՝ երկրում խորացող ֆինանսատնտեսական ճգնաժամը մեղմելու նպատակով: Այս տեսանկյունից հիշատակման են արժանի հատկապես Թուրքիա-ԱՄԷ, Թուրքիա-Եգիպտոս, Թուրքիա-Սաուդյան Արաբիա, Թուրքիա-Իսրայել հարաբերությունների կարգավորման փորձերը, որոնք պայմանավորված են հատկապես Անկարայի նախաձեռնողական քաղաքականությամբ:

Վերոնշյալ արաբական երկրների հետ Թուրքիայի հարաբերությունները ծայրաստիճան սրվել էին «արաբական գարնան» ընթացքում, մասնավորապես՝ Եգիպտոսում և Սիրիայում տեղ գտած զարգացումների համատեքստում, իսկ լարվածությունն իր գագաթնակետին հասավ 2019-2020 թթ. լիբիական հակամարտության շրջանակներում: Վերջին դեպքում անգամ արձանագրվեց ծայրաստիճան վտանգավոր պրոքսի հակամարտություն, երբ Թուրքիան ու Կատարն աջակցում էին Տրիպոլիում գործող՝ ՄԱԿ-ի կողմից ճանաչված Լիբիայի ազգային համաձայնության կառավարությանը, իսկ ԱՄԷ-ն, Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ միասին՝ երկրի արևելյան շրջանները վերահսկող Լիբիական ազգային բանակին՝ Խալիֆա Հաֆթարի հրամանատարությամբ:

Թուրքիա-ԱՄԷ հարաբերությունների կարգավորման գործընթացի բարձրակետ կարելի է համարել շուրջ տասնամյա ընդմիջումից հետո՝ 2021 թ. նոյեմբերին, ԱՄԷ թագաժառանգ արքայազն Մուհամմադ բին Զաիդ Ալ Նահայանի այցը Անկարա, անցկացված բարձր մակարդակի բանակցությունները և տրանսպորտային նոր նախագծերի ու Թուրքիայում 10 մլրդ դոլարի ներդրման վերաբերյալ համաձայնագրերի ստորագրումը: Դեկտեմբերի կեսերին տեղի ունեցավ Թուրքիայի ԱԳ նախարար Մ. Չավուշօղլուի պատասխան այցն ԱՄԷ: Բացի այդ՝ հայտնի է, որ արդեն ընթացիկ տարվա փետրվարին ծրագրված են Էրդողանի այցերը Միացյալ Էմիրություններ և, որ ոչ պակաս կարևոր է, Սաուդյան Արաբիա: Ռիադի հետ հարաբերությունները լարվածության

Ալ-Ասադ Ալ Նահայան հանդիպումը

գագաթնակետին էին հասել դեռևս 2018 թ. հոկտեմբերին՝ Ստամբուլում սաուդցի այլախոհ լրագրող Ջամալ Խաշոկջիի սպանությունից հետո, ինչի կազմակերպման մեջ մեղադրվում է սաուդյան թագաժառանգ արքայազն Մուհամմադ բին Սալմանը: Նրա հասցեին Էրդողանի հնչեցրած մեղադրանքները ծայրաստիճան սրել էին երկկողմ բարդ հարաբերությունները: Լարվածության պատճառով Ռիադն անգամ տնտեսական ոչ պաշտոնական բոյկոտ էր հայտարարել Անկարային՝ լրջագույն խնդիրներ ստեղծելով թուրք գործարարների համար:

Առայժմ բավականաչափ բարդ և դանդաղ է ընթանում Թուրքիա-Եգիպտոս հարաբերությունների կարգավորումը, ինչի պայմանական մեկնարկ կարելի է համարել Թուրքիայի ԱԳ նախարար Մևլութ Չավուշօղլուի և Եգիպտոսի նրա պաշտոնակցի՝ Սամիհ Շուքրիի 2021 թ. ապրիլի հեռախոսազրույցը: Ընդհանուր առմամբ անցյալ տարվա ընթացքում կայացել է Թուրքիա-Եգիպտոս քաղաքական խորհրդակցությունների երկու փուլ՝ դիվանագիտական և հատուկ ծառայությունների ղեկավարների ներկայացուցիչների մակարդակով: Մայիսին երկօրյա այցով Կահիրե է մեկնել Թուրքիայի փոխարտգործնախարար Սեդաթ Օնալի գլխավորած պատվիրակությունը, իսկ սեպտեմբերին Թուրքիա է այցելել եգիպտական պատվիրակությունը՝ ԱԳ փոխնախարար Համդի Սանադ Լոզայի գլխավորությամբ:

Հարկ է հիշեցնել, որ երկու երկրների միջև հարաբերությունները ծայրաստիճան սրվել էին 2013 թ. հուլիսին Եգիպտոսում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո, ինչի հետևանքով իշխանությունից հեռացվել և արգելափակվել էր Թուրքիայում իշխող ԱԶԿ գաղափարակից «Մուսուլման եղբայրներ» խմբավորումը՝ իր առաջնորդ պաշտոնանկ նախագահ Մուհամմադ Մուրսիի գլխավորությամբ:

Թուրքիա-Իսրայել հարաբերությունների կարգավորման առաջին փորձերն արձանագրվեցին 2021 թ. նոյեմբերին, երբ Թուրքիայի իշխանությունների կողմից Էրդողանի նստավայրը լուսանկարելու համար ձերբակալված իսրայելցի ամուսիններն ազատ արձակվեցին: Որպես միջադեպի կարգավորման արդյունք՝ շուրջ ութնամյա դադարից հետո Թել Ավիվի նախաձեռնությամբ հեռախոսազրույցներ են տեղի ունեցել մի կողմից՝ Իսրայելի նախագահի և վարչապետի, մյուս կողմից՝ Թուրքիայի նախագահի

միջև: Բանակցությունների ընթացքում երկու երկրների ղեկավարները գնահատել են հումանիտար խնդիրների կարգավորման և ճգնաժամային պայմաններում արտակարգ կապուղիների գործարկման կարևորությունը: Բացի այդ՝ երկու երկրների հարաբերությունների նշանակությունը փոխադարձաբար ընդգծվել է նաև տարածաշրջանի խաղաղության, կայունության և անվտանգության ապահովման տեսանկյունից:

Հարկ է նշել, որ Թուրքիայի՝ տարբեր ուղղություններում լարվածության թուլացմանը միտված նպատակային քաղաքականությունը չի շրջանցել նաև այսրկովկասյան տարածաշրջանը: Այս համատեքստում հատկապես կարևոր է Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացի խթանումը, ինչն իրականացվում է զուգահեռաբար երկու ուղղություններով՝ երկկողմ հարաբերությունների հարթությունում և «3+3» ձևաչափի շրջանակում:

Դեռևս 2021 թ. երկրորդ կեսից Երևանից և Անկարայից հնչող՝ բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարություններում երկու կողմերից «դրական ուղերձներ» էին առանձնացվել: Իսկ ահա դեկտեմբերին Թուրքիայի արտգործնախարար Մևլութ Չավուշօղլուն հայտարարեց, որ Թուրքիան և Հայաստանը հարաբերությունների կարգավորման համար հատուկ ներկայացուցիչներ են նշանակելու, վերաբացվելու է օդային հաղորդակցությունը: «Առանց նախապայմանների» կարգավորման գործընթացում թուրքական կողմը ներկայացնելու է փորձառու դիվանագետ, ԱՄՆ-ում ԹՀ նախկին դեսպան Սերդար Քըլըչը, իսկ Հայաստանը՝ ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը: Ըստ Չավուշօղլուի՝ հատուկ ներկայացուցիչների առաջին հանդիպումը հնա-րավոր է, որ տեղի ունենա 2022 թ. հունվարին՝ Մոսկվայում: Պետք է ընդգծել այն հանգամանքը, որ թուրքական կողմի՝ բոլոր մակարդակների հայտարարություններում շեշտադրվում է, որ Անկարան այս գործընթացի բոլոր փուլերում գործելու է Բաքվի հետ սերտ համագործակցությամբ:

Ինչ վերաբերում է «6-յակ»-ի հարթակին, ապա արդեն 2021 թ. դեկտեմբերին Մոսկվայում տեղի ունեցավ դրա առաջին հանդիպումը, որին հրաժարվեց մասնակցել Վրաստանը: Պետք է հիշեցնել, որ Այսրկովկասի երեք երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի և տարածաշրջանին հարևան տերությունների՝ Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի մաս-նակցությամբ այս ձևաչափի նախաձեռնման գաղափարը առաջադրել է թուրք-ադրբեջանական տանդեմը՝ 44-օրյա պատերազմի հետևանքով ունեցած ձեռքբերումները զարգացնելու և հաղթանակի էֆեկտը հնարավորինս կապիտալիզացնելու նպատակով:

Ռուսաստանը «3+3» ձևաչափը գնահատում է որպես խորհրդատվական հարթակ, Վրաստանն առայժմ հրաժարվում է մասնակցել դրա աշխատանքներին՝ Մոսկվայի անդամակցության պատճառով, իսկ Թեհրանը հարթակը դիտարկում է որպես տարածաշրջանում իր կորցրած դիրքերը վերականգնելու հնարավորություն:

Փաստացի, առաջ մղելով այս ձևաչափը, Անկարան և Բաքուն նպատակ են հետապնդում տնտեսական, ապա նաև քաղաքական հիմքով նոր հարթակի ձևավորմամբ ստեղծելու այլընտրանք մինչ այդ արցախյան հիմնախնդրի կարգավորման հարցում առանցքային դերակատարություն ունեցած ԵԱՀԿ ՄԽ համանախագահության և «Նոյեմբերի 9»-ի ձևաչափերին, որոնցում ուղղակիորեն բացակայում էր Թուրքիան: Վերոնշյալից բացի՝ ձևաչափը թուրքական կողմից դիտարկվում է նաև Հայաստանի հետ առայժմ չկարգավորված՝ թուրք-ադրբեջանական տեսանկյունից ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակություն ունեցող տարածաշրջանային կապուղիների ապաշրջափակման գործընթացը սեփական շահերին համապատասխան՝ միջանցքային տրամաբանությամբ կարգավորելու նպատակով:

Ամփոփելով նշենք, որ, չնայած մեր տարածաշրջանում առայժմ գերիշխող դրական և պրագմատիկ մթնոլորտին, ընդհանուր մարտահրավերներին միահամուռ կերպով դիմագրավելու նախատրամադրվածությանը, այնուամենայնիվ, որևէ կերպ հնարավոր չէ բացառել լարվածության նոր դրսևորումները հիմնական առանցքային դերակատարների միջև ինչպես տարածաշրջանային չկարգավորված հակամարտությունների, այնպես էլ նոր՝ անակնկալ զարգացումների դեպքում՝ ճիշտ ղազախստանյան զարգացումների օրինակով, որոնց շրջանակներում հավելյալ լարվածություն առաջացավ Անկարա-Մոսկվա հարաբերություններում: Եվ չի բացառվում, որ նման դեպքերը որոշակի ազդեցություն ունենան նաև մերձավորարևելյան և այլ տարածաշրջաններում ձևավորվող դրական մթնոլորտի վրա, քանի որ ներկայումս ակտիվ մի քանի հիմնախնդիրներում իրենց շահերն ունեցող առանցքային դերակատարները տարբեր ձևաչափերով ներգրավված են նաև նշված տարածաշրջանի հակամարտություններում:

Վիեննա, Իրանի միջուկային բանակցությունները

Ադրբեջանական իշխանությունների քաղաքականությունը թալիշների նկատմամբ

Լիանա Պետրոսյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Թալիշները հարավկովկասյան տարածաշրջանի տեղաբնիկ ժողովուրդներից են, որոնց բնակության վայրերը հնում ընդգրկել են ընդարձակ տարածքներ: Այսօր թալիշները բնակվում են Իրանի հյուսիսարևմտյան շրջաններում, մասնավորապես՝ արևմուտքում գտնվող Գիլան (Աստարա, Թալեշ, Մասալ, Ռեզվանշահր, Ֆումանսարա, Շաֆաթ քաղաքներում) և Արդեբիլ նահանգներում: Թալիշ երկրամասը՝ որպես առանձին վարչաքաղաքական շրջան, «Թալիշ» կամ «Վելայաթ-է Թալիշ» անվանումներով հանդիպում է Ռաշիդ ադ-դին Ֆազուլլահի 13-րդ դարի վկայություններում[1]: Թալիշների մյուս հատվածը բնակվում է ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունում:

Թեպետ ոմանք համարում են, որ Իրանի Իսլամական Հանրապետությունում էթնիկ խմբերը տարրալուծվում են, սակայն իրականում երկրում տիրում է լիակատար հանդուրժողականություն էթնիկ խմբերի նկատմամբ: Իրանում թալիշները քաղաքական և հասարակական հետապնդումների չեն ենթարկվում, պետությունը նրանց մշակույթին և լեզվին հարգանքով է վերաբերվում, ինչը չի կարելի ասել Ադրբեջանի Հանրապետությունում բնակվող թալիշների մասին, որոնք սոցիալ-քաղաքական և մշակութային ճնշումներին զուգահեռ զրկված են սեփական լեզվով հաղորդակցվելու և կրթվելու տարրական իրավունքից: Իրանում բավականաչափ թալիշական մշակութային և հասարակական կազմակերպություններ կան, տպագրվում է թալիշական գրականություն, մինչդեռ Ադրբեջանի Հանրապետությունում պետական մասշտաբով հետապնդման է ենթարկվում նմանատիպ կազմակերպությունների ստեղծման ցանկացած փորձ, արգելափակվում են թալիշներին առնչվող հեռուստաալիքները, ռադիոհաղորդումները, նրանց հարցերին անդրադարձող հեռուստաալիքները և համացանցային կայքերը: Բավական է ընդգծել, որ «ժողովրդավարական Ադրբեջանում» թալիշները զրկված են ինքնորոշման իրավունքից. պաշտոնական փաստաթղթերում և մարդահամարի ընթացքում նրանք պարտավոր են իրենց դասել ադրբեջանցիների շարքը:

Այսօր Ադրբեջանում թալիշների խնդիրները ոչ միայն ազգային, այլև քաղաքական բնույթ են կրում: Դեռևս 1993 թ. գնդապետ Ալաքրամ Հումմատովը հռչակեց Թալիշ-Մուղանյան Ինքնավար Հանրապետությունը, որն ընդգրկում էր թալիշներով բնակեցված՝ Ադրբեջանի 7 շրջանները: Սակայն Ադրբեջանի իշխանությունները չճանաչեցին այս ինքնավարությունը, և նրա ղեկավարները

հալածվեցին. ինքը՝ Հումմատովը, բանտարկվեց և դատապարտվեց մահապատժի, իսկ ավելի ուշ Եվրախորհրդի ճնշմամբ վտարվեց երկրից և զրկվեց քաղաքացիությունից: Այս շրջանում է, որ Բաքվում հակաթալիշական ալիքից հետո Թալիշ-Մուղանյան վտարանդի կառավարությունը հրապարակային կոչերով դիմեց միջազգային իրավապաշտպան կազմակերպություններին թալիշ ժողովրդի նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների խտրական և անմարդկային վերաբերմունքի առնչությամբ:

Թալիշական ազգային շարժման գոյության 10 տարիների ընթացքում նրա ղեկավարները բազմիցս խոսել են իրենց գործունեության խաղաղ բնույթի մասին, ինչը չի ենթադրում զինված պայքար: Միաժամանակ պետք է փաստել, որ ԱՀ տարածքում երկու իրադարձություն է տեղի ունեցել, որոնք լայն արձագանք են գտել ՋԼՄ-ներում և կապված են թալիշ հասարակական-քաղաքական ակտիվիստների նկատմամբ ճնշումների, մասնավորապես՝ 2007 թ. «Թալիշի ձայն» թալիշական թերթի խմբագիր Ն. Մամեդովի և 2013 թ. սեպտեմբերին դատապարտված Գ. Մամեդովի ձերբակալության հետ: Այս իրադարձություններից հետո թալիշական շարժումը կարծես թե նոր փուլ է թևակոխում: Արդեն 2009 թ. Ռուսաստանի տարածքում ստեղծվեց «Շարժում հանուն թալիշների վերածնունդի» քաղաքական կազմակերպությունը, որի ղեկավարը թալիշ ակտիվիստ Ֆ. Աբոսզոդան էր: 2013 թ. Արցախի Հանրապետության Շուշի քաղաքից հեռարձակվում էր «Թալիշստանի ձայնը» ռադիոկայանը, իսկ 2014 թ. դեկտեմբերից՝ Թալիշստանի ազգային հեռուստատեսությունը

(ԹԱԹ), որոնց գործունեությունն ուղղված էր թալիշների ինքնագիտակցության բարձրացմանը և նրանց հոգևոր ներուժի զարգացմանը:

Թալիշների և Ադրբեջանի մյուս ազգային փոքրամասնությունների բնակության առանձնահատկությունն այն է, որ նրանք ապրում են ավտորիտար պետությունում, որի գավառներում իշխանությունը կենտրոնացված է շրջանային վարչակազմերի ղեկավարների ձեռքում, որոնք նշանակվում են նախագահի առաջադրմամբ: Միևնույն ժամանակ տեղական քաղաքապետարաններն էական դեր չեն խաղում հասարակական կյանքում: Հատկանշական է նաև, որ թալիշական շրջաններում բարձրագույն օղակը, որպես կանոն, նշանակվում է ազգությամբ ոչ թալիշների շրջանից, ինչը երբեմն հիշեցնում է կառավարման խորհրդային համակարգը: Իսկ վերջին տարիներին Ադրբեջանի Հանրապետության ներքին քաղաքականության մեջ կարևոր տեղ էին զբաղեցնում ազգային նույնականացմանն առնչվող խնդիրները, հետևաբար ներքին դրությունը բնութագրվում էր էմոցիոնալ լարվածության բարձր աստիճանով:

Ըստ էության, ԱՀ անկախացումից հետո թալիշաբնակ տարածքներում վարվում է ծրագրված հակաթալիշական քաղաքականություն, և տարվում աշխարհաքաղաքական պայքար թալիշների և թալիշերենի վերացման ուղղությամբ: Թալիշների հարցը ցավոտ թեմա է Ադրբեջանի համար, իսկ վերջին շրջանում Բաքվում կրկին ակտիվացել է թալիշների դեմ շարժումը: Ինչո՞վ է սա պայմանավորված: Իշխանությունները մտավախություն ունեն, որ Իրանի, Հայաստանի և Ռուսաստանի աջակցությամբ այնտեղ կկրկնվի «արցախյան սցենարը»: Բաքվի իշխանությունները պնդում են, որ թալիշների անջատողական տրամադրությունները սնվում են հատկապես Հայաստանից՝ հիմնվելով այն փաստի վրա, որ Հայաստանում անցկացվում են բազմաթիվ գիտաժողովներ ու սեմինարներ իրանագիտության վերաբերյալ՝ թալիշների՝ որպես էթնոսի գոյությունը պահպանելու նպատակով:

Թալիշաֆոբիայի պոռթկումները, որոնք պարբերաբար տեղի են ունենում Բաքվում, կարելի է շատ պարզ կերպով բացատրել: Նախ, Բաքուն մեծ զայրույթով ընդունեց թալիշագիտական երրորդ միջազգային գիտաժողովը, որը մի քանի տարի առաջ տեղի ունեցավ Երևանում: Դրան մասնակցեց Իրանից ժամանած թալիշ գիտնականների ու հասարակական գործիչների մեծ պատվիրակություն, ինչը նշանակալից իրադարձություն էր ողջ թալիշ ժողովրդի համար, միևնույն ժամանակ ցույց էր տալիս Իրանի վերաբերմունքը թալիշական խնդրի նկատմամբ:

Այսօր էլ պաշտոնական ադրբեջանական մամուլում խոսվում է թալիշական տարածքների տարանջատման փորձի մասին: Թալիշական տարածքներ ասելով նկատի են առնվում Ռուսաստանի նախկին պրոտեկտորատ և դաշնակից Թալիշական խանության տարածքները, որոնք գոյություն են ունեցել մինչև 1840 թվականը: Ադրբեջանական իշխանությունները մտավախություն ունեն, որ ՌԴ-ի աջակցությամբ թալիշները կփորձեն այդ տարածքներում ստեղծել թալիշական պետություն կամ առանձին վարչատարածքային միավոր:

Բաքուն, չգիտես ինչու, օրինական է համարում Նախիջևանի ինքնավարությունը, արցախահայերին առաջարկում է ինքնավարություն՝ ամենալայն իմաստով, իսկ թալիշներին զրկում ցանկացած կարգավիճակից: Ոչ ոք չի կարող հստակ բացատրել, թե ինչով է պայմանավորված նման երկակի դիրքորոշումը: Բանն այն է, որ թալիշները որևէ էական, նույնիսկ երկրորդական դիրք չեն զբաղեցնում սեփական էթնիկ հողերում: Ալիևի վարչակազմը չի ցանկանում, որ որևէ թալիշ դառնա իր ժողովրդի մեջ հեղինակավոր և կշիռ ունեցող գործիչ: Մինչ այժմ Ադրբեջանի բուհերից և ոչ մեկում չկա թալիշերենի ֆակուլտետ, որը կպատրաստի արհեստավարժ ուսուցիչներ՝ դպրոցներում թալիշերեն ու թալիշական պատմություն դասավանդելու համար: Իսկ ադրբեջանական պաշտոնական աղբյուրների տեղեկությունները այն դպրոցների մասին, որոնցում իբր դասավանդվում է թալիշերեն, չեն համապատասխանում իրականությանը: Ըստ էության, Ադրբեջանում տեղի է ունենում թալիշերենի դանդաղ ոչնչացում. թալիշաբնակ շրջաններում նույնիսկ չկան թալիշական հեռուստատեսություն, ռադիո, թատրոն, գրադարաններ, լրատվամիջոցներ, որոնք կֆինանսավորվեին ադրբեջանական իշխանությունների կողմից:

Ասվածի համատեքստում ակնհայտ է, որ Ադրբեջանում ապրող թալիշների վիճակը շարունակում է մնալ ծայրահեղ ծանր. նրանց սպառնում է ոչ միայն սեփական մշակույթից ու պատմությունից օտարումը, այլև ֆիզիկական ոչնչացումը: Ազգային-ազատագրական պայքարի բոլոր մասնակիցները տարաբնույթ ճնշումների են ենթարկվում, նրանց նույնիսկ ֆիզիկական ոչնչացման վտանգ է սպառնում: Այս ամենի հիմնական պատճառներից մեկը Ադրբեջանում թալիշների թվաքանակն է: Դեռևս 1999-2001 թթ. ամերիկյան



Թալիշական կայքերում տարածված ծաղրանկար այն մասին թե ադրբեջանցիներն ինչպես են իրականացնում ձուլման քաղաքականությունը: Նկարի տեքստը հետևյալն է.«Դու թուրք ես. մեզ մոտ այլ ժողովուրդ չկա»

սոցիոլոգիական կազմակերպության անդամները սոցիալեզվաբանական հետազոտություններ են կատարել Ադրբեջանում բոլոր տարիքային խմբերում: Նրանց հաշվարկներով՝ միայն Լերիկի շրջանում 62 հազար թալիշ կար, Աստարայում՝ 81 հազար, իսկ Լենքորանում ապրում էր ավելի քան 200 հազար մարդ, որոնց 90 %-ը թալիշներ էին: Նրանց տվյալների հիման վրա հետագայում հաշվարկվել էր, որ իրենց թալիշ ճանաչողներից 500 հազարը կոմպակտ ապրում էին Ադրբեջանի հարավային միայն 5 շրջանների տարածքում: Ավելի ուշ արդեն, Իրանի պաշտոնական կառավարական աղբյուրների համաձայն, Ադրբեջանում բնակչության 25 %-ը թալիշներ էին (մոտ 2,5 միլիոն մարդ): Սակայն ադրբեջանական պաշտոնական մարդահամարի անցկացման ընթացքում տեղի են ունենում զգալի խախտումներ:

Նախ՝ երկրի պատկան մարմինները նախօրոք և պատշաճ մակարդակով քարոզարշավ չեն իրականացրել՝ ընդգծելու բնակչության թիվը: Երկրորդ՝ թալիշ բնակչության թվաքանակի ճշտման հարցում առկա են տոտալ կեղծարարության փաստեր: Բազմաթիվ են դեպքերը, երբ ընդհանրապես ոչ ոք չի գնացել բնակիչների մոտ, որոշ դեպքերում էլ հարցաթերթիկները նախապես լրացվել են համաձայն կառավարության հրահանգների: Իսկ երբ Ադրբեջանի վիճակագրական կոմիտեի աշխատակիցները այնուամենայնիվ գնացել են համապատասխան հասցեներով, հարցման ժամանակ նույնիսկ չեն ճշտել հարցվածների ազգությունը և թալիշներին գրանցել են որպես ադրբեջանցիներ: Շատ դեպքերում ազգության արկղը դատարկ է մնացել կամ լրացվել է մատիտով, որպեսզի հետագայում ուղղվի կամ լրացվի հրահանգների համաձայն: Եղել են դեպքեր, երբ թալիշները պնդել են, որ իրենց ազգությունը ճիշտ գրանցվի, սակայն աշխատակիցները տարհամոզել են նրանց և նույնիսկ շանտաժի են ենթարկել՝ պատճառաբանելով, որ նրանք՝ որպես թալիշ, հետագայում ոչ մի տեղ աշխատանքի չեն ընդունվի:

Բնականաբար, այս կերպ ադրբեջանական իշխանությունները փորձում են շարունակել տարիներով արմատացած ձուլման քաղաքականությունը և կանխել երկրի ներսում տեղաբնիկ ժողովուրդների հնարավոր ընդվզումները: Բանն այն է, որ Արցախյան երկրորդ պատերազմը թալիշների ինքնագիտակցության վրա կարևոր ազդեցություն ունեցավ: Պատերազմի առաջին իսկ օրերից, երբ ակնհայտ դարձավ, որ ադրբեջանական իշխանությունները առաջնագիծ են ուղարկում հիմնականում տեղաբնիկ ժողովուրդների՝ թալիշների, լեզգիների, թաթերի և այլոց ներկայացուցիչների, որոնք դարձան ալիևական վարչախմբի մսաղացի զոհերը, երկրի թալիշ բնակչության շրջանում ակտիվացան հակաալիևական տրամադրությունները: Թալիշները կարծես թե պատրաստ էին լուրջ քայլերի դիմելու՝ պատմական արդարությունը վերականգնելու համար, սակայն 2021 թ. նոյեմբերի 9-ի տխրահռչակ

Թալիշստան

փաստաթղթի ստորագրումից հետո կշեռքի նժարը հակառակ կողմ թեքվեց: Արցախյան ճակատում տարած հաղթանակից հետո Ի. Ալիևի վարչախումբը լծվեց երկրի ներսում թալիշների ճնշմանը և նրանց նկատմամբ տարաբնույթ սահմանափակումների կիրառմանը:

Թալիշական ազգային շարժումն այժմ, ըստ էության, անցնում է զարգացման հաջորդ փուլ: Թալիշները շարունակում են պայքարել իրենց ազգային իրավունքների համար բոլոր մակարդակներում և փորձում են օգտվել օրենքով թույլատրված բոլոր հնարավորություններից: Թալիշական շարժման անդամներ կան տարբեր երկրներում: Կարելի է ասել, որ թալիշական շարժումը բաղկացած է տարբեր ճյուղերից, որոնք գործում են Ռուսաստանում, Եվրոպայում, Ադրբեջանում և այլուր: Ռուսաստանի Դաշնությունում թալիշները հանդես են գալիս տեղական և տարածաշրջանային մշակութային ինքնավարություններով, թալիշական կազմակերպություններով:

Թալիշ գործիչների ակտիվացման պայմաններում Ադրբեջանի ներսում հաճախ սկսեցին պնդումներ հնչել, թե թյուրքալեզու ադրբեջանցիներն ու թալիշները եղբայրական ժողովուրդներ են: Սակայն եղբայրական հարաբերությունները հնարավոր են միայն, եթե հիմնված են փոխըմբռնման ու հարգանքի վրա, իսկ Ադրբեջանում իշխանությունը կտրված է տեղաբնիկ ժողովուրդներից և վարում է ձուլման քաղաքականություն:

Հղումներ

1- Տես Маркарян С. М., Смбатян Р. С., Тальши в XIII-XIX вв., Введение в историю и культуру талышского народа, под ред. Асатрян Г. С., Ер., Кавказский центр иранистики, 2011, էջ 43:

Էթնիկ փոքրամասնությունների խնդիրը Թուրքիայում: Զազա-ալևիներ

Նարե Գևորգյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

4-6 միլիոն կազմող զազաները կուրմանջիով խոսող քրդերից հետո Թուրքիայի երկրորդ ամենամեծ էթնիկ փոքրամասնությունն են: Նրանք ունեն իրենց լեզուն, մշակույթը և բանահյուսությունը: Զազայերենը երրորդն է Թուրքիայում ամենաշատ խոսվող լեզուների թվում:

Թուրքիայի Հանրապետության վիճակագրության պետական ինստիտուտի կողմից 1962 թ. անցկացված ընդհանուր մարդահամարը փաստում է զազաների՝ ճանաչված էթնիկ խումբ լինելը: Այն նաև պարզում է, որ զազաների կեսը ալևի մուսուլմաններ են, իսկ մյուս կեսը՝ սուննի:

Ցավոք, զազա համայնքի մասին միջազգայնորեն քիչ բան է հայտնի: Զազաները մշտապես եղել են անտեսված և գրեթե մոռացված: Զազա համայնքից դուրս որոշ շովինիստական շրջանակներ նույնիսկ հերքում են զազայի՝ որպես առանձին էթնիկ խմբի գոյությունը:

Զազաները շուրջ չորս հազարամյակ ապրել են Անատոլիայի, Իրանի և Միջագետքի աշխարհագրական շրջաններում, ինչի մասին վկայում են շումերերեն, խեթերեն, աքքադերեն, ասորերեն, բաբելոներեն, պարսկերեն, արաբերեն, եբրայերեն, ուրարտերեն սեպագիր արձանագրությունները: Տվյալ աղբյուրները նաև փաստում են, որ այդ շրջաններում կիրառվել են զազա և զազանազ անվանումները:

Զազաները ներկայումս բնակվում են Թուրքիայի Հանրապետության արևելյան և հարավարևելյան շրջաններում՝ Տիգրիս և Եփրատ գետերի երկու կողմերում: Նրանց բնակության ընդհանուր տարածքը կազմում է մոտավորապես 72,00 քառ. կմ: Զազաները հիմնականում կենտրոնացած են եղել Բինգյոլի, Թունջելի (Դերսիմ), Դիարբեքիրի, Էլազիգի (Խարբերդ) և Երզնկայի շրջաններում: Այդ տարածքներում ապրող մարդկանց մեծամասնությունը զազա է, սակայն կան այլ քաղաքներ և գյուղեր, որտեղ միայն զազաներ են բնակվում: Այդպիսի քաղաքներից են Սիվերեկը (Ուրֆա), Գերգերը (Ադիյաման), Վարտոն (Մուշ), Մութկին (Բիթլիս), Էրզրումը, Իմրանլին, Ղանղալը, Ուլաշը, Զարան (Սիվաս):

1925 թ. Բինգյոլում, Էլազիգում, Դիարբեքիրում և 1937 թ. Դերսիմում Թուրքիայի Հանրապետության կառավարությունը քաղաքական նկատառումներով ռազմական ուժով զազաներին աքսորեց իրենց քաղաքներից և գյուղերից: Հազարավոր մարդիկ ուղարկվեցին Անատոլիա, Կորումի կենտրոնական և արևմտյան շրջաններ, Թոքաթ, Քըրշեհիր, Կայսերի, Աքսարայ, Այդընի, Իզմիր և այլուր: Ավելի ուշ որոշ զազա ընտանիքներ վերադարձան իրենց հին բնակավայրեր, մինչդեռ զազա համայնքի այլ ներկայացուցիչներ մնացին այն քաղաքներում, ուր

տեղափոխվել էին: Վերջին 40-50 տարվա ընթացքում տնտեսական և սոցիալական մի շարք պատճառներով զազա բնակչության մի մասը հաստատվել է մեծ քաղաքներում, ինչպիսիք են Ստամբուլը, Անկարան, Իզմիրը, Բուրսան, Ադանան, Մերսինը և այլն: Զգալի թվով զազաներ էլ նույն նկատառումներով գաղթել և հաստատվել են Եվրոպայի մի շարք երկրներում: Առավել լայն իմաստով կարելի է փաստել, որ զազաների համայնքը ավելի շատ կենտրոնացած է ոչ թե Արևելյան Անատոլիայի հյուսիսարևմտյան հատվածում, այլ Գերմանիայում և Նիդեռլանդներում. այս երկրներում զազաների համայնքը զբաղեցնում է շուրջ 40 հզ. քառ. կմ տարածք: Իսկ Թուրքիայի 81 նահանգներից միայն 11-ում կա զազա բնակչություն: Այսպիսով՝ Թուրքիայի տարածքի 5 տոկոսը բնակեցված է զազաներով:

Այսպիսի մեծածավալ արտագաղթը բացասական ազդեցություն է ունեցել զազաների ազգային ինքնության պահպանման և նրանց որպես առանձին էթնիկ խումբ դիտարկելու անհրաժեշտության վրա:

Մինչև 2006 թ. Թուրքիայում տրված վիճակագրությունը կասկածելի է թուրքական քաղաքականության պատճառով: Այդպիսի սոցիալական տվյալները քննելիս պետք է հաշվի առնել, որ փոքրամասնությունների մասին տվյալները չեն հրապարակվում (վերջին մարդահամարը 1962 թ. է անցկացվել), իսկ ժողովրդագրական փոփոխությունները շատ են:

Վերջին տվյալներով (2006 թ. մայիս)՝ Թուրքիայում հաշվվում է մոտավորապես 11 միլիոն քուրդ բնակչություն, որի մեկ երրորդը զազաներ են: Ավելի քան 1.5 միլիոն զազա բնակվում է իր պատմական հայրենիքում, մոտ 1 միլիոնն էլ՝ Թուրքիայի արևմտյան շրջաններում: Բացի այդ՝ ենթադրվում է, որ 6 միլիոն զազաներից 700 հազարն էլ բնակվում է Սփյուռքում: Հաշվի առնելով այս թվերն ու վիճակագրությունը՝ որոշ չափով տրամաբանական է դառնում, թե ինչու

թուրքական իշխանությունները չեն ճանաչում և հրապարակայնորեն չեն խոսում այսպիսի մեծաթիվ համայնքի գոյության մասին: Կարելի է ենթադրել, որ նման մոտեցման գլխավոր պատճառներից մեկը զազաների ու քրդերի ազգայնական շարժումներից խուսափելն է:

Այսպիսով՝ Թուրքիայի զազաների մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ գործ ունենք պաշտոնապես չճանաչված էթնիկ խմբի հետ, որը չի դիտարկվում որպես ազգային կամ կրոնական փոքրամասնություն՝ ներկայացված որևէ ղեկավար իշխանության կողմից: Դա էլ ավելի զարմանալի է, երբ նկատի ենք ունենում, որ զազաների մեծամասնությունը հարում է իսլամական ալևիների աղանդին: Նույնիսկ նրանց դավանանքը՝ ալևիզմը, պաշտոնապես չի ճանաչվում «աշխարհիկ» սահմանադրություն ունեցող թուրքական պետության կողմից: Ավելին՝ Թուրքիայում ալևիների հետապնդումն օրինական է. Թուրքիայի հիմնադիր կառավարության՝ «Ժողովրդահանրապետական կուսակցության» 1925 թ. ընդունած օրենքը, որն այսօր էլ գործում է Թուրքիայում, արգելում էր ալևիների կրոնական կենտրոնների գոյությունը, այդ թվում՝ աղոթատների, որոնք հայտնի են նաև որպես գերեզմանատներ:

Մինչև 1970-80-ական թթ. Թուրքիայում բնակվող փոքրամասնություններն իրենց անվանում էին թուրք՝ վախենալով էթնիկ փոքրամասնության պիտակավորում ստանալուց, ինչը պայմանավորված էր նաև թուրքական իշխանությունների որդեգրած հետադիմական և միատարրության ձգտող քաղաքականությամբ: Արդեն 1970-ականներին քուրդ ազգայնականները սկսեցին վիճարկել այս տեսակետը: Այսպես՝ 1979 թ. Թուրքիայի հանրային աշխատանքների գծով նախարար Շերաֆֆեթթին Էլչին հրապարակայնորեն հայտարարեց, որ Թուրքիայում բազմաթիվ քրդեր են բնակվում, և ինքն էլ նրանցից մեկն է: 1980 թ. սեպտեմբերի ռազմական հեղաշրջումից հետո սկսված քաղաքական հետապնդումների հետևանքով վերջինս նույնպես ձերբակալվեց: 1980-1983 թթ. ռազմական վարչակարգի ռեպրեսիվ միջոցառումները, որոնք ուղղված էին լռեցնելու այն քրդերին, որոնք ցանկանում էին տարբերվել, հակառակ ազդեցությունն ունեցան և հանգեցրին անջատողական «Քրդստանի աշխատավորական կուսակցության» (PKK) նկատմամբ զանգվածային համակրանքի մեծացմանը: Դա իշխանությունների համար առիթ դարձավ թույլատրելու և նույնիսկ խթանելու ալևիզմի զարգացումը որպես այլընտրանքային «էթնիկ» ինքնություն: 1990-ականների սկզբին պետությունը սկսեց հրապարակայնորեն աջակցել ալևիզմին: Թուրքական կառավարությունը հասկացավ, որ միանմանություն պարտադրելու հետագա փորձերը հավանաբար անարդյունավետ կլինեն, դեռ ավելին՝ կխոչընդոտեն Եվրոպայի հետ ավելի սերտ հարաբերությունների հաստատումը, որտեղ փոքրամասնությունների մշակույթների պաշտպանությունը դարձել է քաղաքական կարևոր խնդիր: Քաղաքականության հանկարծակի փոփոխության հետևանքով կառավարությունը 1991 թ. չեղյալ հայտարարեց օրենքը, որն արգելում էր հրատարակություններում թուրքերենից բացի այլ լեզուների օգտագործումը: Զազայերենի համար ստեղծվեց առանձին լատիներեն այբուբեն, որը քրդերի կողմից ընկալվեց որպես թուրքական անվտանգության համակարգերի՝ իրենց դիրքերը թուլացնող և ներքին երկպառակություններ հրահրող գործիք:



Հենց այս ժամանակահատվածն էլ կարելի է համարել Թուրքիայում բնակվող էթնիկ-կրոնական փոքրամասնությունների ազգայնական շարժումների զարթոնքի շրջան, որից անմասն չմնացին նաև ալևի-զազաները: Ուշագրավ է, որ նրանց ինքնության ճանաչման գործընթացը խրախուսվում էր և՛ թուրքական իշխանությունների, և՛ քրդական ազգայնական շարժման կողմից, ինչը պայմանավորված էր սունիի պահպանողական հոսանքների նկատմամբ նրանց ատելությամբ: Պետք է նկատի ունենալ, որ մինչև 1980-ական թթ. ալևիզմը դիտարկվում էր զուտ որպես սոցիալական շարժման գաղափարախոսություն, որը զերծ էր կրոնական ենթատեքստից: Հետագայում այն արդեն կրոնական երանգավորում ստացավ:

Որպես զազաների ազգայնական շարժման ընդդիմություն կարելի է դիտարկել նաև այն զազաներին, որոնք իրենց համարում են քուրդ: Հետաքրքիր է, որ Թուրքիայում բնակվող մի շարք զազաների անգամ խորթ է այն տեսակետը, որ իրենք առանձին էթնոս են: Տարեց զազաներն անգամ զազայերենը չեն ընդունում առանձին լեզու, այլ այն քրդերենի անբաժան մաս են համարում: Նրանք այս հայտարարությունները ուղղակիորեն կապում են թուրքական կառավարության քարոզչամեքենայի հետ և նաև նշում, թե ինչի կարող է հասնել Թուրքիան այդ քարոզչությամբ: Մասնավորապես, նրանք նշում են, որ երկար տարիներ իրենց համոզել են, որ քրդեր գոյություն չունեն, հետո՝ ասել, որ իրենք լեռնային քրդեր են, իսկ այժմ, պայմանավորված Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցությամբ, թուրքական

իշխանությունները հայտարարում են, որ քրդերը գոյություն ունեն ու ապրում են իրենց երկրում:

Զազաների ազգայնականությունը հիմնականում դրսևորվում է Թուրքիայի զազա խոսվածքով և հենց զազայերենով խոսող մարդկանց շրջանում: Նրանցից ոմանք անգամ պահանջում են անկախ Զազաստանի ստեղծում, ինչը կարող է թուլացնել PKK-ի դիրքերը զազայերենով խոսողների շրջանում: Թուրք ազգայնականները ևս պաշտպանում են զազաների՝ քրդերից անկախ էթնոս լինելու փաստը, որը, նրանց կարծիքով, ավելի կարագացնի քրդերի ձուլումն ու դիմադրության շարժման թուլացումը:

Զազաների ազգային շարժման մասին խոսելիս պետք է ընդգծել Էբաբեքիր Փամուկչուի անունը, ով համարվում է զազայական նացիոնալիստական շարժման հիմնադիրը: Որոշ քրդական շրջանակներ առաջ են քաշել այն տեսակետը, որ Է. Փամուկչուն, որը սուննիզմին էր հարում, գաղտնի համագործակցության մեջ է եղել թուրքական հետախուզական կազմակերպությունների հետ և գործուն աջակցություն ցուցաբերել նրանց քրդերին պառակտելու գործում: Թե որքանով են այս մեղադրանքները համապատասխանում իրականությանը, կարելի է միայն որոշ եզրակացություններ անել: Մասնավորապես, զազաների ազգայնական շարժումը խրախուսվել և ֆինանսական աջակցություն է ստացել թուրքական հետախուզական մի շարք շրջանակների կողմից, ինչն էլ Փամուկչուին մեղադրելու հիմնական պատճառն ու հիմնավորումն է: Քուրդ ազգայնական և զազայերենի գիտակ Մեհմեթ Մալմիսանիջն իր հարցազրույցներից մեկի ժամանակ նշել է, որ զազաներին պատկանող հրատարակչություններից մեկը ևս ֆինանսավորվում էր թուրքական հետախուզության կողմից: Նա կարծում էր, որ զազաները պետության հետ համաձայնեցված էին գործում: PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանը ևս պնդում էր, որ Թուրքիայի ազգային հետախուզական կազմակերպությունը (Milli Istihbarat Teskilati–MIT) կանգնած է զազաների՝ Թուրքիայում աճող քաղաքական և մշակութային գործունեության հետևում:

Հետագայում՝ արդեն 2000-ական թթ., Թուրքիայում չէին խուսափում զազա էթնոնիմը քաղաքական նկատառումներով օգտագործելուց, ինչի նպատակն էր ցույց տալ, որ Թուրքիայում այլևս խնդիր չեն քուրդ կամ զազա լինելը և այդ մասին բարձրաձայնելը: Քաղաքական որոշ գործիչներ անգամ սկսեցին ելույթ ունենալ քրդերենով և զազայերենով: Արդեն 2007 թ. «Կոնդա» սոցիարցման միջոցով տարբերակում դրվեց քրդերի և զազաների միջև: Թերթերում սկսեցին պարբերաբար գրել, որ Թուրքիայում բնակվում են քրդեր, զազաներ, լազեր և այլ էթնիկ փոքրամասնություններ, որոնք իրենց չեն տարբերում եղբայրական թուրք ժողովրդից, և նրանց խնդիրները մշտապես Թուրքիայի իշխանությունների ուշադրության կենտրոնում են:



Էբաբեքիր Փամուկչու

Արդեն 2008 թ. քուրդ-զազա տարբերակումը տվեց նաև Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Դա պետական ամենաբարձր մակարդակով հայտարարություն էր, ինչը նույնպես գրգռեց քրդերի թշնամանքը զազա ազգայնականների նկատմամբ:

Հարկ է նշել, որ հենց այս ժամանակահատվածում, երբ Թուրքիայում սոցիալ-տնտեսական լուրջ զարգացումներ էին ընթանում, ալևիական համայնքը սկսեց ակտիվանալ նաև Գերմանիայում, ինչի վառ դրսևորումներից էր ալևիական մի շարք կազմակերպությունների ստեղծումը: Դրանցից էր նաև «Գերմանիայի Դաշնության ալևիներ» (AABF) կազմակերպությունը, որը «ընդդիմադիր սփյուռքի» վառ օրինակ էր: AABF-ի ընդդիմությունը Թուրքիայի՝ ալևիների նկատմամբ վարած ներկայիս քաղաքականությանը բխում է 1970-80-ական թթ. Թուրքիայից վտարված ձախերի քաղաքականությունը մասամբ ներկայացնող կազմակերպություններից: Բացի այդ՝ AABF-ում ընդգրկված են բազմաթիվ քրդախոս ալևիներ: AABF-ն բավականին ամուր դիրքեր ունի, այն պաշտոնապես ճանաչված է և՛ որպես գրանցված ասոցիացիա, և՛ որպես կրոնական համայնք, որն իրավասու է Գերմանիայի հանրակրթական դպրոցներում կազմակերպելու կրոնական կրթության դասընթացներ՝ չնայած այն փաստին, որ նրա ուղղվածությունն ու ալևիականության ընկալումները երբեմն վիճարկվում են այլ՝ ավելի պահպանողական և կրոնական ուղղվածություն ունեցող կազմակերպությունների կողմից, բայց արտոնյալ կարգավիճակը, այն է՝ գրանցված լինելը, AABF-ն առանձնացնում է նմանատիպ այլ կազմակերպություններից:

Նշենք նաև, որ Թուրքիայի բոլոր ալևիներին զազա անվանելը սխալ է, որովհետև ոչ բոլորն են զազա, և հակառակը՝ զազաներից ոչ բոլորն են ալևի. ոմանք հարում են նաև սուննիզմին, մի մասն էլ զրադաշտական է: Ըստ տարբեր աղբյուրների՝ Թուրքիայի ալևի համայնքի միայն մի մասն են երկրի բնակչության մոտ 15-20 %-ը կազմող զազաները.

մնացածը թուրքեր են, քրդեր կամ հայկական ծագում ունեցող մարդիկ: Ալևիզմը նույնպես հստակ սահմանում չունի: Փորձագետների մեծ մասը կարծում է, որ այն շիա իսլամի մի ճյուղ է, որը, սակայն, մեծապես տարբերվում է շիականությունից: Մինչդեռ որոշ ալևիներ վստահեցնում են, որ ալևիզմը կրոն է (կամ կրոնական ուղղություն), որը սկզբունքորեն տարբերվում է իսլամի թե՛ շիաների, թե՛ սուննիների ընկալումներից՝ հաշվի առնելով նրանց մշակութային, սոցիալական և առօրյա կյանքի առանձնահատկությունները: Կարևոր է նաև ալևիներին չշփոթել սիրիական ալավիների հետ:

Ուշագրավ է, որ քրդական ազգայնական աշխատավորական կուսակցությունը բազմիցս նշել է, որ ալևիական կրոնը ավելի շատ իրանական (զրադաշտական) ծագում ունի, քան թուրքական, և նույնիսկ թուրք-ալևիները առնչություն ունեն քրդերի հետ: Այս փաստը նրանք օգտագործում են ի շահ իրենց՝ փորձելով զազա-ալևիներին վերագրել քրդական ծագում և համարել իրենցից մեկը: Բնականաբար, քրդական այս տեսակետը ձեռնտու է նաև պետական իշխանություններին, որոնք տարբերակում չեն դնում քրդերի և ալևի-զազաների միջև՝ այդպիսով խուսափելով իրենց որդեգրած միատարրության դոկտրինի խախտման հավանականությունից:

1993 թվականից սկսած՝ թուրքական իշխանությունները սկսում են զանգվածային բռնաճնշումներ գործադրել ալևիների նկատմամբ, որոնք ուղեկցվում են բազմաթիվ զոհերով, թաղամասերում ալևի երիտասարդ ցուցարարների և ոստիկանական ուժերի միջև բախումներով: Հատկապես հայտնի են Սիվասի և Գազի թաղամասերի դեպքերը, որոնց հետևանքով ավերվեցին մի շարք տներ ու ալևիներին պատկանող կառույցներ: Իշխանության բռնաճնշումները հասան այնտեղ, որ զազաներով բնակեցված մի շարք քաղաքներ և գյուղեր դատարկվեցին: Այս դեպքերի առնչությամբ բողոքի ցույցեր ծավալվեցին Ստամբուլի Ումրանիե թաղամասում: Անվտանգության ուժերի կողմից հինգ ալևիներ սպանվեցին: ՄԻԵԴ-ը վճռել է, որ Գազիի և Ումրանիեի դեպքերի ժամանակ Թուրքիան խախտել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ (կյանքի իրավունք) և 13-րդ հոդվածները (արդյունավետ պաշտպանության իրավունք): Այս դեպքերի ժամանակ Թուրքիայի վարչապետն էր Թանսու Չիլլերը (1996-1997), որը DYP-ի (The Right Way) առաջնորդներից էր: DYP-ը ծայրահեղ ազգայնամոլական գաղափարախոսությամբ թուրքական կուսակցություն է, որի գործունեությունն ուղղված է հիմնականում քրդերի դեմ, այն անգամ ժխտում է քրդերի գոյությունն ընդհանրապես:

Զազա-ալևիների նկատմամբ թուրքական կառավարության բռնաճնշումներն ու հետապնդումները այն աստիճանի են եղել, որ եթե հիմա նրանց հարցնեն, թե արդյոք ալևի՞ են, ապա նրանք միանշանակ կժխտեն դա:

Այսպիսով՝ Թուրքիայի Հանրապետության վարած երկակի քաղաքականությունը զազա-ալևիների նկատմամբ կարելի է բնորոշել հետևյալ կերպ.

Զազաների ցույց

1. Թուրքիան զազաներին դիտում է որպես հակակշռող գործիք քրդական PKK-ի դեմ պայքարում: Շեշտը հատկապես դրվում է այն զազաների վրա, որոնք գործուն աջակցություն են ցուցաբերում այդ կուսակցությանը: Նման գործելաոճի հետևանքով շուրջ երեք միլիոն զազաներ արդեն ոչ թե կուսակցության շահերն են պաշտպանում, այլ հանդես են գալիս նրա դեմ՝ ստեղծելով իրենց ազգային դիմադրության նոր ճակատը, որը վայելում է թուրքական իշխանությունների համակրանքը: Թուրքիան օգտագործում է զազաներին քրդերին պառակտելու նպատակով: Չնայած զազայական ազգայնական շարժումը կարծես հովանավորվում է թուրքական հետախուզության կողմից, այնուամենայնիվ, Թուրքիայում զազա համայնքի գոյությունը պաշտոնապես չի ճանաչվել: Եվ հենց դրա պաշտոնական ճանաչման հարցն է, որ Թուրքիան մշտապես խաղարկելու է զազա-քուրդ հակամարտության համար, և հնարավոր է ու նաև կանխատեսելի, որ այն այդպես էլ կմնա օդում կախված՝ լինելով երկրի ներսում էթնիկ փոքրամասնություններին վերահսկելու և նրանց ազգային շարժումները միմյանցով հակակշռելու Թուրքիայի որդեգրած քաղաքականության առանցքում:

2. Էթնիկական տեսանկյունից Թուրքիան զազաներին որոշակի արտոնություններ է տվել, բայց նույնը չի կարելի ասել նրանց կրոնական հայացքների վերաբերյալ: Սուննի Թուրքիան բնականաբար հանդուրժող չէ երկրի ներսում գոյություն ունեցող մեծաքանակ ալևի կրոնական համայնքի նկատմամբ, ինչի վառ ապացույցն են նախորդ դարից մինչև օրս շարունակվող բռնաճնշումներն ու դաժան վերաբերմունքը այդ համայնքի անդամների նկատմամբ: Եթե զազաներն այժմ որոշակի հանգստությամբ կարող են բարձրաձայնել իրենց էթնիկական պատկանելության մասին, ապա կրոնական ուղղվածության մասին նրանք նախընտրում են լռել: Այսպիսով՝ կարելի է հստակորեն եզրակացնել, որ Թուրքիան զազա-ալևիների նկատմամբ կիրառում է «մտրակի և բլիթի» քաղաքականություն՝ մերթ պաշտոնական համայնքի ստեղծման հույսեր տալով, մերթ զսպելով նրանց ազգային զարթոնքի շարժումները՝ շեշտը դնելով ալևիականության ժխտման և միատարրության ու միակրոնության դոկտրինի շարունակականության ապահովման վրա:

Հայկական ռազմական ուժի պատմությունից (մաս 1)

Անի Մելքոնյան
Պատմաբան

Հունվարի 28-ը Հայաստանի երրորդ հանրապետության զինված ուժերի կազմավորման օրն է: Այս տարի լրանում է Հայաստանի մերօրյա հանրապետության բանակի 30-ամյակը: Դա, սակայն, չի նշանակում, որ հայկական բանակը (ռազմական ուժերը) ընդամենը 30 տարեկան է:

Հայ ժողովուրդը աշխարհի հնագույն ժողովուրդներից է, և նրա ռազմական ուժերի պատմությունը սկսվում է վաղնջագույն ժամանակներից ու հասնում մինչև մեր օրերը: Այսպես՝ Ք.ա. 24-րդ դարում Միջագետքի կենտրոնում ստեղծված Աքքադ պետության բռնապետ Սարգոնը, նվաճելով Միջագետքը և դրան հարակից մի շարք շրջաններ, հասավ Հայկական լեռնաշխարհի փեշերին: Այստեղ նա հիշատակում է **Արմանի** երկիրը, որի բանակները պատասխան արշավանք են ձեռնարկում Աքքադի դեմ, և Սարգոնին հազիվ է հաջողվում փրկել իր գահը:

Ք.ա. 23-րդ դարում Աքքադի տերությունը կրկին հզորացավ Սարգոնի թոռան՝ Նարամ-Սուենի օրոք: Վերջինս դարձավ պատմության մեջ առաջինը, ով կենդանության օրոք իրեն հռչակեց «աստված», կործանեց աստվածների տաճարները և պարտադրեց, որ ժողովուրդը պաշտի իր անձը: Երբ նա պաշարեց շումերական գլխավոր պաշտամունքային կենտրոն Նիպպուտ սրբազան քաղաքը, շումերական քրմությունը օգնության խնդրանքով դիմեց Հայկական լեռնաշխարհի իշխանություններին՝ 17 երկրների համադաշնությանը, որի գլուխ կանգնած էր **Կուտիական (Կորդվաց) երկիրը** (17-ի համադաշնությունը աքքադական աղբյուրներում հիշատակվում է մեկ ընդհանուր **Արմանի/Արմանում** անվամբ): «Շուտով սրընթաց գրոհով Միջագետքի կենտրոն արշավեցին հայկական լեռնաշխարհի լեռնականները, որոնց դեմ պատերազմում ինքնակոչ «աստվածը» սպանվեց»[1]: Կործանելով աքքադական բռնապետությունը՝ Հայկական լեռնաշխարհի զորքերն իրենց իշխանությունը տարածեցին մինչև Պարսից ծոց: Նրանց տիրապետությունը տևեց շուրջ 100 տարի: Ք.ա. 2109 թ. ավարտվում է Կուտիական աշխարհակալության պատմությունը: Հատկանշական է, որ ազատագրական առաքելությամբ Միջագետք հասած կուտիական զորքերը չփորձեցին արյան մեջ խեղդել շումերների ազատագրական շարժումը, որը բարձրացել էր Ուրուկ քաղաքում:

Ք.ա. 21-րդ դարում Հայաստանը շարունակում էր մնալ Առաջավոր Ասիայի հզորագույն երկրներից մեկը: Այդ են վկայում միջագետքյան Շուլգի արքայի հետախուզական արձանագրությունները Արմանի երկրի մասին (այն հիշատակվում է նաև **Սուբուր** անվանումով), որոնցից տեղեկանում ենք նաև Արմանիի բանակի մասին: Նամակներից մեկից տեղեկանում ենք, որ «Սուբուր երկրի տիրակալն ուներ «արշավանքի տուն» (ներկայիս եզրութաբանությամբ՝

«գլխավոր շտաբ»), որի պատերը զարդարված էին թանկարժեք մետաղներից ու քարերից պատրաստված զինատեսակներով, ...կային զորակայաններ, որոնք կերակրվում էին արքունիքի կողմից, այսինքն՝ կար մշտական մասնագիտացված բանակ:

Օտարերկրյա դեսպանի ընդունելության ժամանակ արքայի աջում և ձախում կանգնում էին նրա կառավարիչները, որոնցից յուրաքանչյուրը պատասխանատու էր նշանակված հինգ հազար ծառայողների»[2]:

Ք.ա. 16-13-րդ դարերում Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում և Միջագետքի հյուսիսում հզորանում է Միտանիի թագավորությունը, որը եգիպտական աղբյուրներում հիշատակվում է Նահարինա (Նաիրի) ձևով: Միտանիին ուներ կանոնավոր բանակ, որի հրամանատարությունը սովորաբար հանձնվում էր արքայազնին: Բանակը կազմված էր հետևակից, հեծելազորից և մարտակառքերից:

Խեթական սեպագիր արձանագրություններում Ք.ա. 15-13-րդ դարերում հիշատակվում է Հայասա երկիրը, որը «ռազմադաշտ էր դուրս բերում 700 մարտակառքից և 10.000-անոց հետևազորից բաղկացած բանակ, որն այդ ժամանակաշրջանի համար նշանակալից ուժ էր»[3]:

Հայկական ռազմական ուժի պատմության տեսանկյունից կարևոր է հատկապես Վանի (Արարատյան) թագավորության ժամանակաշրջանը, երբ, ըստ էության, սկիզբ դրվեց կենտրոնացված հայկական պետության ստեղծմանը: Հենց այդ ժամանակ էր, որ սկսվեց կանոնավոր բանակի կազմավորումը. «Դեռևս Իշպուինիի և Մենուայի օրոք սկսվել էր դաշտային զորաջոկատների և աշխարհազորի փոխարինումն արհեստավարժ

զինվորականությամբ»[4]: Բանակը կազմված էր հետևակից, հեծելազորից և մարտակառքերից: Այն բաժանված էր 3.000-անոց գնդերի, որոնք էլ կազմված էին 50-ական զինվորներից բաղկացած վաշտերից: Տերության հզորացման և ընդարձակման տարիներին «զինված ուժերի ընդհանուր թիվը 352 հազար էր: Այս թվի մեջ ներառված են նաև նվաճված ու հարկատու երկրների զինված ուժերը»[5]: Զորքի գերագույն հրամանատարը արքան էր, որին օգնում էին առաջին և երկրորդ սպարապետները: Հիշատակվում են «գնդապետներ», «հարյուրապետներ», «հիսնապետներ» և «տասնապետներ»:

Հայկական կանոնավոր բանակի կազմավորումն ու հզորացումը շարունակվեցին Երվանդունյաց արքայատոհմի օրոք, հատկապես Տիգրան Ա Երվանդունի արքայի կառավարման շրջանում: Այդ մասին Պատմահայր Խորենացին հաղորդում է. «Հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողներն հաջող աղեղնավորներ, կոպալներով կռվողները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակներով. մերկերը պատսպարվեցին վահաններով և երկաթե զգեստներով: Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեցին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու զենքերի փայլմունքը բավական էր թշնամիներին հալածելու և վանելու»[6]: Երվանդունյաց թագավորության օրոք հայկական բանակն ուներ 40.000 հետևակ և 8.000 հեծելազոր: Ռուֆոսի վկայությամբ՝ «Իսսոսի ճակատամարտում (Ք.Ա. 333 թ.) մարտադաշտ բերված հայոց բանակի թիվը 47 հազար էր՝ 7 հազար հեծելազոր և 40 հազար հետևակ»[7]: Երբ Ալեքսանդր Մակեդոնացին արշավանք ձեռնարկեց Աքեմենյան տերության դեմ, Մակեդոնացու դեմ աքեմենյան բանակի կազմում պատերազմին մասնակցեցին նաև հայկական զորքերը: Հայերն աչքի ընկան Գավգամելայի ճակատամարտում (Ք.ա. 331 թ.) Օրոնտաս-Երվանդ 3-րդի և Միթրաուստեսի գլխավորությամբ, որոնք էլ այդ ճակատամարտից հետո վերականգնեցին Հայաստանի անկախությունը: «Մակեդոնական և հայկական բանակների հաջորդ և վերջին բախումը տեղի է ունենում 2-3 տարի անց, երբ Ալեքսանդրի զորաբանակներից մեկը Մենոն զորավարի գլխավորությամբ ուղարկվեց Բարձր Հայքի ոսկու հանքերի շրջանը: Ինչպես վկայում է հույն մատենագիր Ստրաբոնը, հայերը ոչնչացնում են նրա բանակը, իսկ զորավարին «խեղդամահ անում»: Դրանից հետո Ալեքսանդրը փորձ չարեց Հայաստան նոր զորք ուղարկելու, ինչը վկայում է, որ նա ստիպված էր հաշվի նստել հայկական զինուժի հետ և խուսափել է նոր առճակատումից»[8]:

Հայկական բանակի հզորացման պատմության մեջ մի նոր շրջան բացվեց Արտաշեսյան թագավորության, հատկապես պետության երկու հզորագույն արքաների՝ Արտաշես Ա Բարեպաշտի և Տիգրան Բ Մեծի օրոք: Ք.ա. 189 թ. Արտաշես Բարեպաշտը Մեծ Հայքում իրեն թագավոր հռչակեց և հայոց պատմության մեջ բացեց բարեփոխումների մի նոր շրջան: Այդ բարեփոխումները առնչվում էին երկրի կյանքի բոլոր ասպարեզներին, այդ թվում նաև՝ բանակին, որը թերևս բարեփոխումների համար ամենակարևոր ոլորտներից էր: Հայրենիքի պաշտպանությունը պատշաճ կերպով կազմակերպելու համար Արտաշես Բարեպաշտը ստեղծեց չորս զորավարություններ: Արտաշես արքայի բարեփոխումներից խոսելիս Պատմահայր Խորենացին հաղորդում է. «Զորքի իշխանությունն էլ չորս մասի է բաժանում. արևելյան կողմի զորքը թողնում է Արտավազդին, արևմտյանը տալիս է Տիրանին, հարավայինը հավատում է (հավանաբար «վստահում է» – Ա. Մ.) Սմբատին և հյուսիսայինը Զարեհին»[9]: Ռազմական բարեփոխումների, կանոնավոր, մարտունակ և լավ զինված բանակի շնորհիվ Արտաշես Ա-ն կարողացավ Մեծ Հայքին միացնել նրանից անջատված մի շարք տարածքներ և ստեղծեց տարածաշրջանի հզորագույն պետություններից մեկը, որի հետ ստիպված էր հաշվի նստել անգամ Հռոմը, որի ռխերիմ թշնամի, Կարթագենի հզոր զորավար Հաննիբալը ապաստան էր ստացել Մեծ Հայքում:

Հայոց պատմության հզորագույն տիրակալը Տիգրան Բ Մեծն էր, որի տերությունն իր տարածքով և ազդեցության գոտիներով կազմում էր շուրջ 3 մլն քառ. կմ: Տերության կառավարման գործում, բնականաբար, առանցքային դեր ուներ բանակը, որի բարեփոխմանը Տիգրան արքան ձեռնամուխ եղավ գահ բարձրանալուն պես: «Դատելով փաստերից՝ ռազմական բարեփոխումները եղել են նորահռչակ թագավորի առաջին ձեռնարկումներից: Սենատին ուղղված Լուկուլլոսի զեկուցագրում ներկայացված է Տիգրան Մեծի բանակի կազմը և թվաքանակը՝ 300 հազար, ինչը վերաբերում է ողջ տերությանը: Բուն հայոց զորքի թիվը, դատելով «Զորանամակից» և մատենագիտական այլ աղբյուրներից, եղել է շուրջ 120 հազար: Տիգրանյան բանակի գլխավոր հարվածային ուժը ծանրազեն հեծելազորն էր՝ հայոց փառապանծ այրուձին, որի փառքը հարատևեց դարեր շարունակ»[10]: Բարեփոխված բանակի շնորհիվ էր, որ

Արգիշտի Ա-ի արձանագրությամբ սաղավարտ և Սարդուրի Բ-ի արձանագրությամբ վահան՝ Վանի թագավորություն

Տիգրան Մեծը նախ վերադարձրեց իր ազատության դիմաց զիջված «յոթանասուն հովիտներն» ու Մեծ Հայքի այն տարածքները, որոնք նրա պապ Արտաշեսը չէր կարողացել միացնել իր թագավորությանը, ապա սկիզբ դրեց իր աշխարհակալությանը:

Հետագա իրադարձությունների վրա շատ կանգ չառնելու համար նշենք միայն, որ Ք.ա. 68 թ. Արածանիի ճակատամարտում հայոց բանակից կրած խայտառակ պարտությունից հետո Լուկուլլոսը պաշտոնանկ արվեց: Արածանիի ճակատամարտում հռոմեական բանակի պարտության մասին փոքրասիական ծագմամբ հռոմեացի պատմիչ Դիոն Կասիոսը գրում է. «Այս ընդհարման ժամանակ հռոմեացի հեծյալներին թշնամու հեծելազորը դժվար դրության մատնեց[11]... Թշնամիները որևէ վնաս չկրեցին, այլ նրանք, ետ դառնալով և հետապնդողներին նետահարելով, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին: Ու վերքերը ծանր էին և դժվար բուժելի. քանզի նրանք գործածում էին երկծայր նետեր, և ծայրերը այնպես էին իրար ագուցված, որ նետերը թե մարմնի որևէ մասում մնալու և թե դուրս քաշվելու դեպքում արագորեն սպանում էին, որովհետև երկաթյա ծայրերից մեկը, որը չէր ամրացված, մնում էր վերքի մեջ»[12]: Հայկական ավանդական պատմագիտական աղբյուրները այնքան անկարևոր են համարել Լուկուլլոսի արշավանքները, որ Պատմահայր Խորենացին նրան հիշատակում է որպես մի ելուզակի, որը «վրդովում է Հայոց աշխարհը»[13]:

Հայկական բանակը հզորությունը պահպանեց նաև Տիգրան Մեծի որդու՝ Արտավազդ Բ-ի կառավարման շրջանում: Վերջինս գահ էր բարձրացել հռոմեա-պարսկական պատերազմների թեժ ժամանակաշրջանում, երբ ստիպված էր դիմակայել կամ հաշտության եզրեր գտնել երկու պետությունների հետ: Ք.ա. 54 թ. գարնանը հռոմեացի եռապետներից Մարկոս Կրասոսը սկսեց իր պարթևական արշավանքը, որի ժամանակ Հռոմի դաշնակից հայոց արքան խոստացավ Կրասոսին տրամադրել 40.000-անոց ռազմական օգնություն և առաջարկեց Կրասոսին արշավել Մեծ Հայքի լեռնային գավառներով, ինչը Կրասոսի կողմից մերժվեց: Հայ-հռոմեական դաշինքը խափանելու համար պարթև Օրոդես 2-րդ արքան որոշեց հարձակվել Հայքի ծայրամասային բնակավայրերի վրա: Հայոց արքան բնականաբար պետք է պաշտպաներ սեփական երկիրը, ուստի Կրասոսին տեղեկացրեց, որ չի կարող նրան ռազմական օգնություն տրամադրել, և փոխարենը դաշինք կնքեց պարթև արքայի հետ: Հայ-պարթևական միացյալ զորքերը Կրասոսի հետ բախվեցին Ք.ա. 53 թ. մայիսի 6-ին Խառանում, որտեղ հռոմեական զորքերը խայտառակ պարտություն կրեցին, սպանվեց նաև Կրասոսը: Հռոմեական բանակին նույն ճակատագիրն էր սպասվում նաև Ք.ա. 36 թ. Մարկոս Անտոնիոսի պարթևական արշավանքների ժամանակ: Անտոնիոսը, սակայն, իր պարտության մեղքը բարդեց հայոց արքայի վրա և Ք.ա. 34 թ. դավադրաբար ձերբակալեց նրան ու Ք.ա. 31 թ. մահապատժի ենթարկեց:

Տիգրան Մեծը ազգային ընտրանու և ժողովրդի հետ

Ակցիումի ճակատամարտից հետո (Ք.ա. 31 թ.) հայ-պարթևական զորքերը, գահաժառանգ Արտաշես Բ-ի գլխավորությամբ, Մեծ Հայքից դուրս շպրտեցին հռոմեացիներին: Արտաշես Բ-ից հետո՝ մինչև Արտաշեսյան թագավորության անկումը՝ 1 թ., հայոց բանակը շարունակում էր պահպանել հզորությունը, իսկ Մեծ Հայքի ռազմական դաշնակիցը լինելն առավելություն էր համարվում թե՛ Պարթևստանի, թե՛ Հռոմի համար:

Արտաշեսյան արքայատոհմի անկումից հետո իր դրածոներին Մեծ Հայքի գահին բազմեցնել ցանկացող Հռոմը այնուամենայնիվ ստիպված էր հաշվի նստել հայկական ռազմական ուժի հետ: Արդեն 2 թ. տեղի ունեցավ հակահռոմեական հուժկու ապստամբություն նախ դրածո Արիոբարզանեսի, ապա՝ նրա որդի Արտավազդի դեմ: Շարունակական ապստամբություններից և դրածոներին Հայաստանից վոնդելուց կամ սպանելուց հետո հայերը 6 թ. դարձյալ գահ բարձրացրին Տիգրան 4-րդի քրոջը՝ Էրատոյին, իսկ նրանից հետո՝ 12 թ.՝ Պարթևստանի երբեմնի թագավոր Վոնոն Արշակունուն:

18 թ. հայերի պահանջով Հայաստանում գահ բարձրացավ հայկական միջավայրում դաստիարակված ու մեծացած պոնտական արքայազն Զենոնը, որը ստացավ Արտաշես գահանունը: Նա միակն էր օտար գահակալներից, որ գահընկեց չարվեց հայերի կողմից և մահացավ իր բնական մահով 34 թ.:

Արշակ Ա-ի կարճատև (34-35 թթ.) գահակալությունից հետո Հռոմը գահը հանձնեց վրաց արքայազն Միհրդատ Իբերացուն, որի դեմ սպարապետ Գիսակ Դիմարքյանի գլխավորությամբ բռնկվեց հակահռոմեական հուժկու ապստամբություն, ինչի շնորհիվ Միհրդատը վոնդվեց Հայաստանից, երկիրն էլ մինչև 43 թ. լիովին վերականգնեց իր անկախությունը: Հենց այս շրջանում էր, որ հռոմեացի բանաստեղծ Վերգիլիուսը տվեց հայ ժողովրդի դիպուկ նկարագիրը՝ «Կամուրջներ չհանդուրժող Արաքս»:

Հայկական հզոր զինական ուժը և անդադար շարունակվող ապստամբությունները ի վերջո տվեցին իրենց արդյունքը. Հռոմը ստիպված էր 66 թ. հայ-պարթևական միացյալ ուժերի պահանջով հայոց թագավոր ճանաչել Տրդատ Ա Արշակունուն: Արշակունյաց թագավորական դինաստիան

Հայաստանում գոյատևեց մինչև 428 թ.: Ավելի քան 300 տարվա ընթացքում և աշխարհաքաղաքական լարված դրության պայմաններում կանոնավոր, մարտունակ ու լավ զինված բանակի շնորհիվ հայոց պետությունը կարողացավ պահպանել իր կայունությունը և գրեթե միշտ տարածաշրջանային գործոն լինելու հանգամանքը, ինչի շնորհիվ էլ թե՛ Պարթևստանը և թե՛ Հռոմը ձգտում էին ձեռք բերելու Մեծ Հայքի դաշնակցությունը:

Արշակունյաց թագավորության շրջանում հայոց բանակը հիմնականում ղեկավարում էր Մամիկոնյան սպարապետական տոհմը, որի գլխավորությամբ հայկական բանակը բազմաթիվ փառահեղ հաղթանակներ տարավ թշնամիների դեմ պայքարում: Ահա հիշատակման արժանի մի քանի օրինակներ: 335 թ. իրեն Արշակունի հռչակած մազքթաց թագավոր Սանեսանը ներխուժում է Հայաստան ու գրավում Վաղարշապատը: 336 թ. Վաչե Մամիկոնյան սպարապետը Վաղարշապատից դուրս է շպրտում մազքութներին, այնուհետև՝ ջախջախում նրանց Օշականի՝ Ցլու գլուխ կոչվող լեռան մոտ:

Նույն՝ 336 թ. հայոց զորքը Վաչե Մամիկոնյանի գլխավորությամբ ջախջախում է Հայաստան ներխուժած Սասանյանների զորքին:

Մծբինի 40-ամյա պայմանագրի ժամկետը չլրացած՝ 337 թ., Սասանյան արքա Շապուհ 2-րդը պատերազմ է սկսում Հռոմեական կայսրության դեմ: Չկարողանալով գրավել Մծբինը՝ պարսիկները հարձակվում են Հայաստանի վրա, և հայոց զորքը Վաչե Մամիկոնյանի գլխավորությամբ դուրս է գալիս թշնամու դեմ: Տեղի ունեցած ճակատամարտում սպարապետն ու նրա մի շարք զինակիցներ զոհվում են, բայց թշնամին դուրս է շպրտվում երկրից:

Հայաստանի համար ճակատագրական էին հատկապես Արշակ Բ-ի և Պապի կառավարման շրջանները: 359 թ. սկսված պարսկա-հռոմեական պատերազմը 363 թ. վերաճեց հայ-պարսկական պատերազմի: Նույն թվականին Գանձակի սահմանագծից Հայաստան ներխուժելու պատրաստվող պարսից զորքերին դիմավորում է հայոց զորքը՝ սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորությամբ, և պարտության է մատնում թշնամուն: Հաջորդ արշավանքի ժամանակ Շապուհի մեծաթիվ զորքերը, չկարողանալով գրավել Անգեղ անառիկ բերդը, գրավում են Անի բերդը Դարանաղիում, որտեղ ամփոփված էին Արշակունի հայ արքաների մասունքները, բացում են հայոց արքաների գերեզմանները և գերեվարում նրանց ոսկորները, որպեսզի, ինչպես իրենք էին հավատում, հայոց արքաների զորությունն ու փառքը տեղափոխվեին իրենց երկիր:

Հայոց 60.000-անոց զորքը Վասակ Մամիկոնյանի գլխավորությամբ ջախջախում է թշնամուն, վերադարձնում հայոց թագավորների մասունքները և վերաթաղում Արագած լեռան լանջին՝ Աղձք գյուղում:

370 թ., հռոմեական զորքերի գլուխ անցած, Հայաստան է վերադառնում թագաժառանգ Պապը, սպարապետ է դառնում Վասակ Մամիկոնյանի որդին՝ Մուշեղը, և հայոց բանակը սկսում է երկրի ազատագրումը: 370 թ. Մուշեղ սպարապետը Ատրպատականում հայոց 40.000-անոց զորքով նախահարձակ է լինում: Շապուհը փախչում է, իսկ պարսից մեծամեծներից շատերը ձերբակալվում և Մուշեղի հրամանով մահապատժի են ենթարկվում:

371 թ. պարսից մեծաթիվ զորքը կրկին ներխուժում է Հայաստան և հասնում Միջնաշխարհ: Տեղեկանալով այս մասին՝ Պապ թագավորը հրամայում է հայոց զորքը հավաքել Այրարատ նահանգի Բագրևանդ գավառի Ձիրավի դաշտում: Լուսադեմին սկսվում է Ձիրավի ճակատամարտը. հայոց բանակը Մուշեղ սպարապետի գլխավորությամբ գրոհում է պարսիկների վրա: Հաղթանակը կատարյալ էր: Պարսից բանակի մնացորդները փախուստի են դիմում:

372 թ. սպարապետ Մուշեղը, լուր ստանալով Շապուհի բանակի առաջիկա ներխուժման մասին, զորքով շարժվում է դեպի Գանձակ:

Հայոց զորքը «Քաջ Արշակի համար» բացականչություններով մարտի է նետվում և ջախջախում պարսկական ուժերին:

374 թ. հռոմեացիների կողմից դավադրաբար սպանվում է Պապ թագավորը, և սկսվում է Արշակունյաց թագավորության անկումը, թեև հայկական ռազմական ուժը շարունակում է մնալ տարածաշրջանային վճռորոշ գործոն: ■

Հղումներ

1. Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը, Եր., 2016, էջ 14:
2. Նույն տեղում, էջ 13:
3. Նույն տեղում, էջ 19:
4. Նույն տեղում, էջ 27:
5. Նույն տեղում:
6. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981, էջ 132-133:
7. Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը, էջ 29:
8. Նույն տեղում, էջ 30:
9. Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 200:
10. Մովսիսյան Ա., Տիգրան Մեծ. թագավորներից մեծագույնը, Եր., 2010, էջ 73-74:
11. Նույն տեղում, էջ 50:
12. Նույն տեղում, էջ 62:
13. Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 163:

ա) Գրականություն
1. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ.՝ Գ. Գալոյան, Եր., 2000:
2. Միհնայան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Եր., 2013:
3. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981:
4. Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը, Եր., 2016:
5. Մովսիսյան Ա., Տիգրան Մեծ. թագավորներից մեծագույնը, Եր., 2010:
6. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ., Եր., 2009:
7. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:

բ) Մամուլ
1. Հարությունյան Վ., Կարսի հանձնումը: Ջինվորական դավադրության վարկածը, «ՎԷՄ» համահայկական հանդես, Եր., 2018, թիվ 4 (64):

գ) Համացանցային նյութեր
1. http://www.genocide-museum.am/arm/28.10.2020.php.
2. http://www.historyofarmenia-am.armin.am/am/Encyclopedia_of_armenian_history_Hayoc_azgayin_banak.

Միլլի շարժումը Կ. Պոլսի «Ճակատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերի էջերում (1919-1920 թթ.) (մաս 2)

Մարիամ Հովսեփյան
ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու

«Ճակատամարտ» օրաթերթում տպագրված թղթակցություններում, լուրերում և հայտարարություններում պարզորոշ երևում էին հայկական և թուրքական տեղեկատվական աղբյուրների ու հաղորդած տեղեկատվության կամ վերլուծությունների հակասություններն ու իրարամերժությունը: Հայկական հարցի վերաբերյալ երկու կողմերի տեսակետներն ու ասածները լրիվ հակասող են: Օրինակ, ի տարբերություն Արտաշես Վանարյանի, Մուստաֆա Քեմալն իր հայտարարություններում և ելույթներում առաջ էր տանում թուրքական այն տեսակետը, թե հայերն ապստամբել էին Առաջին աշխարհամարտի տարիներին, դավաճանել պետությանը՝ անցնելով հակառակորդ Ռուսաստանի կողմը, ուստի տեղահանվել էին իրենց բնակավայրերից, որ նաև ռազմական գործողությունների թատերաբեմից հեռու մնային: Օրաթերթում բազմաթիվ են Աթաթուրքի արած նման հայտարարությունները: Դրանցից մեկում նա, կեղծելով իրականությունը, նշում էր, թե իբր Հայաստանի առաջին հանրապետությունում բնակվող թուրքերին և իսլամադավանններին հալածում էին, իսկ Թուրքիայում իրենք ամեն կարգի օգնություն էին ցույց տալիս հայերին. «Այնպէս որ այն գորովալից ընթացքին առջև խելահաս հայերը կը զղջան, որ տեղահանութեան պատճառ եղող ապստամբութիւնը առաջ բերած են»[1]:

Քեմալականները Սեբաստիայի համաժողովում ներկայացրած՝ շարժման նախնական ծրագրում նշել էին, որ պայքարելու են իրենց «հայրենիքի» պատիվը հույների և հայերի սկսած անջատողական ձեռնարկներից պաշտպանելու համար[2]: Մուստաֆա Քեմալն իր ճառում մասնավորապես Հայկական հարցի դեմ պայքարն էր կարևորում. «Արևելքի մէջ հայերը սկսան պատրաստուիլ մինչև Ալիս տարածելու և իրենց ջարդի քաղաքականութեան, որ այժմէն մինչև մեր սահմանները եկած հասած են.... Արևելքի մէջ սահմանի մեր սգաւոր նահանգները, որոնք պատերազմին ամեն տեսակ չարիքներն ու վիշտերը կրած և մանաւանդ հայոց վայրագութեանց և զուլումներուն ասպարէզ եղած են, ազգային պատիւը փրկելու համար իրաւանց պաշտպան միութիւններ կազմեցին: Նոյնը ըրաւ Տիարպէքիր, որ արևելքէն ու հարաւէն վտանգ զգացած էր»[3]:

«Ճակատամարտ» օրաթերթի 1920 թ. հրապարակումների մեջ ավելի շատ էին Միլլի շարժման և թուրքական կառավարող շրջանակների, հակամիլլի ուժերի հարաբերություններին, Փարիզի համաժողովում Թուրքիայի բռնելիք դիրքին, Թուրքիայի «Ազգային ուխտին», Վուդրո Վիլսոնի

իրավարար վճռին վերաբերող վերլուծությունները, թարգմանական հոդվածներն ու լուրերը: Բերենք օրինակ: Երբ համաձայնական ուժերը մի պահ ցանկանում էին Կ. Պոլիսը դուրս բերել թուրքական վերահսկողությունից, Մուստաֆա Քեմալն իր զորքերը Սվազից տեղափոխում է Էսկյուրի, որտեղից երկաթգծով հեշտանում էր նրա անմիջական կապը մայրաքաղաքի հետ: «Դաշնակիցներու՝ թուրքերը Պոլսէն հեռացնելու ենթադրեալ որոշումը պատճառ եղած է, որ միլլիճիները կասկածոտ ըլլան հանդէպ դաշնակիցներու և կառավարութեան: Մուսթաֆա Քէմալ, Էսկիւրիի երևելիներու առջև բուռն ճառախօսութիւն մը ընելով, վերստին յիշած է Ուիլսընի 14 կէտերը և բողոքած է՝ ըսելով, որ իրենց շարժումը երբեք չպիտի ընդունի Թուրքիոյ բաժանումը և ստրկացումը: Քէմալ փաշա դեռ կը շարունակէ պաշտպանել Թուրքիան դաշնակիցներու այն ամբաստանութիւններուն դէմ, թէ թուրք կառավարութիւնը ոչ մահմետական փոքրամասնութիւններու դէմ բռնակալօրէն վարուած է և թէ ան չունի կառավարելու յատկութիւնը»[4],- կարդում ենք օրաթերթում «Մորնինգ փոստ» պարբերականի՝ հունվարի 12-ի համարից թարգմանաբար արտատպված վերլուծական հոդվածում: Թղթակիցը նաև գրում էր, որ այս ապստամբական քայլով Քեմալը հասկացնում էր, որ Միլլին կառավարությանը կաջակցեր կամ կմիանար միայն այն դեպքում, եթե հաշտության պայմանները գոհացնեին իրենց, հակառակ դեպքում քեմալականները կպատերազմեին[5]: Մեկ այլ օրինակ: Իր պահանջներն առաջ տանելու նպատակով Քեմալն Էսկյուրիում ստեղծում է սեփական կառավարությունը՝ հրահանգելով իրեն հավատարիմ բոլոր ուժերին և անձանց հարաբերությունները խզել Կ. Պոլսում հաստատված՝ երկրի իրական իշխանությունների հետ[6]: Այս ամենը, «Ճակատամարտի» համոզմամբ,

լուրջ սպառնալիքներ էր պարունակում հայերի և մյուս քրիստոնյաների կյանքի համար. «Հայ և յոյն բնակչութիւններուն կեանքը խաղալիք դարձած է»[7]: «Ընթացիկ կյանք» բաժնի լուրերից մեկից ընթերցողները տեղեկանում էին, որ Միլլի շարժումը, արագ քայլերով առաջ գնալով, իր կամքն էր պարտադրում Թուրքիայի կառավարող շրջանակներին՝ փոփոխություններ կատարելով Նախարարների պալատում: «Միլլին յաղթանակեց և յաջողեցաւ դահլիճէն դուրս նետել տալ իր չուզած նախարարները.... Միլլի խմբակը կը պահանջէր ներքին, արտաքին գործերու և դատական նախարարներու հրաժարումը»[8],- գրում էր պարբերականը՝ ավելացնելով, որ միլլիական «Հայրենիքի փրկության» խմբակը վարչապետին ներկայացրած վերջնագրով հասկացրել էր, որ իրենց պահանջը մերժելու պարագայում Միլլին «դահլիճին վստահութեան քուէ»[9] չէր տա: Թերթի հրապարակումները վկայում էին, որ միլլիականների բոլոր պահանջները բավարարվել էին, իսկ նորընտիր պատգամավոր[10] Մուստաֆա Քեմալին էլ ծափերով էին դիմավորել Թուրքիայի երեսփոխանական ժողովում[11]: Այդտեղ քեմալական պարագլուխներից պատգամավոր ընտրված Ռեուֆ բեյն իր ողջույնի խոսքում նշում է, որ իրենց շարժումը «ոչ մէկ արտաքին ուժի դրդումով չէ եղած, այլ ան Անատոլուի ժողովուրդին ինքնապաշտպանութեան ձայնն է»[12] եղել: Շերիֆ բեյն էլ վերահաստատում է համաթրքության իրենց ծրագիրը, որը ներառում էր Օսմանյան կայսրության նախկին տարածքները, որոնցից ոչինչ չէին պատրաստվում զիջել միջազգային ճնշման ներքո կամ որևէ միջազգային համաձայնագրով ու փաստաթղթով[13]: Մեջբերենք նրա ելույթից մի հատված. «Իզմիրը թուրք է և թուրք պիտի մնայ.... Պատերազմը կը շարունակուի, հօն մեր երկիրը ժառանգի նման չկրնար բաժնուիլ: Անատոլու մէկ է և մէկ պիտի մնայ»[14]: Այսինքն՝ նրանք հայերին չէին պատրաստվում տալ Արևմտյան Հայաստանը կամ, իրենց բնորոշմամբ, Արևելյան Անատոլիան: «Ճակատամարտ» օրաթերթը նաև հստակ մատնանշում էր, որ այս մոտեցումներն ամրագրված էին քեմալականների մշակած ու խորհրդարանի կողմից հաստատված Թուրքիայի «Ազգային ուխտ» փաստաթղթում: Խմբագրակազմն արտառոց էր համարում դրանում ներկայացված պահանջները[15]: Այնինչ Մուստաֆա Քեմալը վաղուց՝ դեռևս 1907 թ. էր մշակել այդ համաթուրանական պետության քարտեզը, ինչը վկայել էր նրա մտերիմ ընկերներից Ջեբեսոյը կամ Ալի Ֆուադը[16]: Ինչպես տեղեկանում ենք ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Հայոց պատմություն» բազմահատորյակից, Սևրի պայմանագրի մշակման և բանակցային փուլում Մուստաֆա Քեմալը հանդիպումների ընթացքում «պնդում էր, որ Թուրքիայի սահմաններում գոյություն չեն ունեցել ո՛չ Արևմտյան Հայաստան, ո՛չ էլ Հայկական հարց»[17]:

Եթե Փարիզի համաժողովի գործունեության առաջին փուլում և Միլլի շարժման ձևավորման սկզբնական շրջանում Մուստաֆա Քեմալը հանդես չէր գալիս թուրքական պետության ծավալապաշտական հայտարարություններով, բավարարվում էր Առաջին աշխարհամարտից հետո գրանցված սահմանային իրողություններով, ինչի մասին կարդում ենք օրաթերթի էջերում, որ 1919 թ. հուլիսի 23-ից օգոստոսի 6-ը «արևելեան նահանգներու համաժողովը գումարուեցաւ Էրզրումի մէջ.... և երդում ըրաւ զինադադարի կնքման պահուն գոյութիւն ունեցող սահմանին մէջ հաշտութիւն մը կնքելու համար»[18], ապա իշխանության գալու նախաշեմին նա գործում էր հանուն համաթուրքական հզոր պետություն կերտելու մաքսիմում ծրագրի իրականացման[19]: «Ճակատամարտի» էջերում Քեմալի այդ նպատակներին էր անդրադարձել Տիգրան Զավենը: Իր վերլուծական հոդվածում նա փաստում էր, որ Միլլի շարժումը «թրքական աշխարհին և թրքական ազգայնութեան զարթումին»[20] արտահայտությունն էր: Ահա թե հոդվածագիրն ինչպես էր հասկացել այդ շարժման առաջնահերթությունները. «Մուսթաֆա Քէմալները կը ջանան փլչող Օսմանեան կայսրութեան բեկորներուն վրայ բարձրացնել թրքական կայսրութիւն մը.... Թուրքիոյ մասնակցութիւնը պատերազմին ուրիշ նպատակ չունէր, եթէ ո՛չ ազատագրել Կովկասի թրքութիւնը և միացնել զայն իրեն: Թուրք ժողովուրդը կը ձգտի իր միութեան.... Թուրք վարիչները մինչև հիմա ազգային, տեղական պայքարին տուին անլուր բարբարոսութեան մը ձևերը: Կուի այս վայրագութենէն իսկ պէտք է հետևցնել, թէ որքան ուժգնօրէն կը ձգտին անոնք իրենց համաթրքական ու համիսլամական իտէալի

իրագործման: Որովհետև հայ ժողովուրդի ազգային միութեան գործը կը խանգարէ թուրք վարիչներու երազը, անոնք վճռեցին բնաջնջել հայութիւնը: Ու կը շարունակեն երթալ նոյն ճամփով: Հակառակ պարագային, ինչպէ՞ս բացատրել Միլլի շարժման ղեկավարներու անհաշտ վերաբերմունքը դէպի մեր ինքնորոշման իրաւունքը: Ինչպէ՞ս բացատրել այն ճիգերը, զոր գործ կը դնէ Ատրբէջանը, տիրանալու հրով ու սրով, հայկական այն հողամասերուն, որոնք կամուրջ կը կազմեն իր և Թուրքիոյ միջև»[21]: Տիգրան Զավենի այս խոսքերն առավել քան արդիական են: Այսօր Թուրքիայի Հանրապետությունը շարունակում է նախորդ վարչակարգերի համաթուրքական ծրագրի իրագործման քաղաքականությունը՝ ձգտելով մեջտեղից հանելու Հայկական հարցն ու հայոց պահանջատիրության խնդիրը: Թեև Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն ամեն կերպ փորձում է ստվերել Աթաթուրքի՝ իբրև այդ ծրագրի նախակարապետի ձեռքբերումները, սակայն հենվում է նրա մշակած սկզբունքների վրա:

Թուրքիայի ներքին ու արտաքին կյանքում Մուստաֆա Քեմալի և նրա ստեղծած Միլլի շարժման դերն անուրանալի և բացառիկ է: «Ճակատամարտ» օրաթերթի աշխատակիցներից Արտաշես Վանարյանը դեռևս 1919 թ. գրում էր, որ այդ կազմակերպված ուժն անգամ հարգանք էր ներշնչել իր նկատմամբ արտաքին աշխարհի հզոր տերություններին[22]: Հայերը, սակայն, քեմալականների գործողությունների հետևանքով ենթարկվեցին կոտորածների ու հիմնականում վտարվեցին իրենց հայրենիքից կամ մնացին այնտեղ՝ ստիպված դառնալով մահմեդական քուրդ կամ թուրք: Մուստաֆա Քեմալն ի սկզբանե պատերազմ էր հայտարարել հայությանը և Հայաստանին, քանի որ հայ ժողովուրդն ու պետականություն ունենալու նրա ձգտումը վտանգում էին Թուրքիա պետության տարածքային ամբողջականությունը: Չէ՞ որ Առաջին աշխարհամարտից հետո այդ պետության սահմանները հիմնականում ընդգրկում էին դարեր առաջ հայերից խլած հողատարածքները, որոնք վերջնականապես հայաթափվեցին հենց Աթաթուրք կոչված Մուստաֆա Քեմալի վարած քաղաքականության հետևանքով: Նա, իրոք, թուրքերի հայրն էր, որն իր զավակների համար ստեղծեց բնակավայրեր հայերի հողերի վրա, հայրենիք՝ հայերից բռնազավթած հայրենիքի հաշվին և բարեկեցիկ կյանք՝ արևմտահայերից խլված ու յուրացված հարստության և ունեցվածքի հիմքի վրա: Ժողովրդավարական արժեքների տեսանկյունից, սակայն, Աթաթուրքը հանցագործ հայր էր, որի հանցանքների թվարկումն ի չիք է դարձնում թուրքերի համար նրա ստեղծած բարիքներն ու կեղծ արժեքները: Նա անգամ իր՝ իշխանության գալուց առաջ էր խեղաթյուրել թուրքերի պատմությունը՝ 1919 թ. սեպտեմբերի 4-11-ը Սեբաստիայում տեղի ունեցած համաժողովում հայերին համարելով թուրքերին ջարդող ու երկրի դավաճան՝ մոռանալով, որ Թուրքիան հայերի հայրենիքը չէր, որ թուրքերը հարյուրավոր տարիներ առաջ գրավել էին հայոց հայրենի երկիրը և հայերին դարձրել իրենց ենթակա: Հայերը դա երբեք չեն մոռանա՝ հոգու խորքում վառ պահելով նաև ցեղասպանության վնասների փոխհատուցման պահանջ-պայքարի անմար կրակը: Հայկական հարցի լուծման բանալին դեռևս 1920 թ. տվել էր հասարակական գործիչ, լրագրող Տիգրան Զավենը «Ճակատամարտի» էջերում: Նրա համոզմամբ՝ հայության ազատագրական պայքարին խանգարել էր ոչ իրատեսական վերլուծություններ ու դրանցից բխող հետևություններ անելը. «Մեր դժբախտութեան աղբիւրը պէտք է փնտռել կարգ մը պատրանքներու մէջ: Շատեր այն համոզումն ունէին, թէ մենք մեր ազատագրութիւնը պիտի ստանայինք «ազատատենչ» պետութիւններէն, իբրև վարձատրութիւն մեր ըրած հսկայական զոհողութիւններուն, իբրև արդար հատուցում մը մեր դարաւոր մարտիրոսագրութեան: Անոնք կ'անգիտանային, որ պետութիւնները կ'երկրպագեն մէկ կուռքի մը՝ Շահին»[23]: Հայ քաղաքական գործիչների մեծամասնությունը, ըստ հոդվածագրի, իր պատրանքներով և վարած վերացական քաղաքականության մղումով սպասում էր, որ Անտանտի պետությունները հայությանը նվիրելու են միացյալ, անկախ Հայաստան[24]: Նրանք Հայկական հարցը բաժանել էին երկու մասի՝ արևելահայ և արևմտահայ դատի, այնինչ դա ավելորդ էր, եթե մեկ պետություն ստեղծելու հարցն էր քննարկվում միջազգային ատյաններում այն պարագայում, երբ հայ պետական ու հասարակական այրերից շատերը կատարված իրողություններից ավելի մեծ արժեք էին տալիս դիվանագիտական խաղերին[25]: ■

Հղումներ

1- Նույն տեղում, 1919, թիվ 323:
2- Տես նույն տեղում, 1919, թիվ 277:
3- Նույն տեղում:
4- Նույն տեղում, 1920, թիվ 367:
5- Տես նույն տեղում:
6- Տես նույն տեղում, 1920, թիվ 451:
7- Նույն տեղում:
8- Նույն տեղում, 1920, թիվ 376:
9- Նույն տեղում:
10- Տես նույն տեղում:
11- Տես նույն տեղում:
12- Նույն տեղում:
13- Տես նույն տեղում:
14- Նույն տեղում:
15- Տես նույն տեղում, 1920, թիվ 381:
16- Տես «Թուրքիայի Հանրապետության պատմություն», էջ 28:
17- «Հայոց պատմություն», հ. 4, Եր., «Զանգակ 97», 2010, էջ 152:
18- «Ճակատամարտ», 1919, թիվ 275: Տե՛ս նաև 1919, թիվ 287:
19- Տես «Թուրքիայի Հանրապետության պատմություն», էջ 24, 28:
20- «Ճակատամարտ», 1920, թիվ 380:
21- Նույն տեղում:
22- Տես նույն տեղում, 1919, թիվ 287:
23- Նույն տեղում, 1920, թիվ 380:
24- Տես նույն տեղում:
25- Տես նույն տեղում:

Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի պաշտամունքի կառուցարկումը և հետմահու պաշտամունքը Թուրքիայի քաղաքական համակարգում (հոդված 3)

Տիգրան Զանդոյան
Քաղաքագետ, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Անկախության պատերազմում Աթաթուրքի դերակատարությունը որպես առաջնորդ, հրամանատար և դիվանագետ վերջինիս դարձրեց ժողովրդական հերոս: Սակայն Մուստաֆա Քեմալի հերոսական կերպարի կերտումը՝ «խարիզմատիկ առաջնորդության» ձևավորումը, սկսվել է ոչ Դիմադրության շարժման, ոչ էլ Անկախության պատերազմի ընթացքում: Այն սկսվել է Գալիպոլիի ճակատամարտից[1] հետո, որի ժամանակ նա դրսևորեց իրեն որպես ռազմական գործիչ: Կարելի է պնդել, որ հենց այդ ժամանակ սկսվեց Քեմալի հերոսական կերպարի կերտումը, որն աստիճանաբար լայն տարածում գտավ հասարակական տարբեր խմբերի շրջանում:

Ըստ ավանդույթի՝ Գալիպոլիի ճակատամարտի ընթացքում Քեմալը, տեսնելով փախչող օսմանյան զինվորներին, հարցնում է նրանց, թե ուր են վազում: Զինվորները պատասխանում են, որ թշնամին հարձակվում է.

«–Դուք չպիտի փախչեք թշնամուց:
– Մենք զինամթերք չունենք:
–Զինամթերք չունեք, բայց ունեք սվիններ»:

Դրանից հետո Քեմալը հրամայեց զինվորներին ամրացնել սվինները հրացաններին, հետո գնալ ընդդեմ թշնամու[2] ու պարտության մատնել նրան: Այս պատմությունը լայն տարածում գտավ, տպագրվեց օսմանյան մամուլում:

Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ Մուստաֆա Քեմալը երբևէ չի արժանացել այն ժողովրդական պաշտամունքին, որին արժանացել էին 1908 թ. հեղաշրջման երիտթուրք ռազմական առաջնորդները, ինչպիսիք էին, օրինակ, Էնվեր փաշան, Նիյազի բեյը[3]: Հանրապետության հիմնադրումից հետո Մուստաֆա Քեմալի՝ աշխարհիկացման և արևմտականացման կտրուկ քաղաքականությունը հանրության լայն շերտերի համար առավել ևս անընդունելի էր[4], և դա անշուշտ չէր կարող նպաստել Քեմալի պաշտամունքի՝ բնական հունով ձևավորմանը:

Անկախության պատերազմի առաջնորդի համբավը Քեմալը հետագայում օգտագործեց իր նախագծած բարեփոխումների իրագործման համար՝ հանրային աջակցություն ձեռք բերելու նպատակով: Հերոսի և ուժեղ առաջնորդի կերպարն առանցքային նշանակություն ուներ Քեմալի քաղաքական գործունեության մեջ, քանի որ բարեփոխումների մեծագույն մասը ավանդական թուրք հասարակության համար անընդունելի էր[5]: Ուստի հանրապետության հիմնադրումից անմիջապես հետո Քեմալը և իր

մերձավոր շրջապատը լծվեցին իր անձի շուրջ խարիզմատիկ առաջնորդի պաշտամունք ձևավորելու գործին:

Խարիզմատիկ առաջնորդության տարրերը, որ մեկնաբանվել են Վեբերի կողմից, պարզորեն նկատելի են այն հանգամանքներում, որոնցում Մուստաֆա Քեմալը և նրա ռեժիմի ներկայացուցիչները պատկերվում են, և նա կարող է կոչվել խարիզմատիկ, եթե, իհարկե, խարիզման նախ և առաջ ընդունենք որպես որևէ բան՝ կառուցված որպես քաղաքական գործընթացի կարևոր մաս: Սակայն եթե խարիզմատիկ առաջնորդությունն ընկալենք առավել «մաքուր վեբերյան» ձևով, այն է՝ առաջնորդի բնավորության գծերի կամ անհատական հատկանիշների վրա (հատկանիշներ և գծեր, որոնց առաջնորդը պարտական է իր «հայտնությամբ») հիմնված հարաբերություն առաջնորդի և նրա հետևորդների միջև, ապա պատկերը բոլորովին այլ կլինի[6]: Վեբերի խարիզմատիկ առաջնորդության տեսության մեջ հատկապես շեշտվում է, որ առաջնորդը, որպես այդպիսին, ճանաչվում է իր արտասովոր, գերբնական և անգամ մոգական հատկանիշների շնորհիվ և ոչ թե ռացիոնալ-իրավական կամ ավանդական հիմքերից ելնելով: Խարիզմատիկ առաջնորդի ձևավորումը ավելի շուտ մարտահրավեր է արդեն գործող համակարգին, քան թե դրա արդյունքը: Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի պարագայում այս կետերից ոչ մեկը կիրառելի չէ[7]:

Մեր կարծիքով՝ Քեմալի՝ իշխանության հասնելը խարիզմայի այս տիպի հետ որևէ կապ չունի: Ոչ մի հիմք չկա ենթադրելու, որ նա իր ժամանակակիցների կողմից համարվում էր խարիզմատիկ առաջնորդ նախքան Թուրքիայի պետական գործիչ դառնալը:

1919 թ. Մուստաֆա Քեմալը բարձրաստիճան սպա էր, Օսմանյան կայսրության ռազմական էլիտայի ներկայացուցիչ, որը կանոնավոր ընթացակարգով առաջխաղացում էր ունեցել ռազմական ոլորտում: Նա նշանակվել էր 9-րդ բանակի ռազմական տեսուչի պաշտոնում սուլթանի և նրա կաբինետի կողմից: Երբ Քեմալը հեռացվեց օսմանյան բանակից, շարունակեց մնալ Դիմադրության շարժման առաջնորդ, որովհետև Անատոլիայի օսմանյան բանակի բարձրագույն սպայակազմն ընդունեց նրան որպես այդպիսին, սակայն նրանք այդպես վարվեցին ոչ թե Քեմալին վերագրված գերմարդկային ինչ-ինչ հատկանիշներից ելնելով, այլ որովհետև տեղյակ էին, որ նա եկել է «ազգային» պայքարի շարժում կազմակերպելու նպատակով, և ընդունում էին դա[8]: 1919 թ. Մուստաֆա Քեմալն ուներ արդեն իսկ ձևավորված, կայուն համբավ որպես ռազմական առաջնորդ և լավ հայտնի էր երիտթուրքերի ներքին շրջանակներում, սակայն նա հեռու էր լայն հասարակության համար ճանաչված լինելուց: Մուստաֆա Քեմալը 1919 թ. ընտրվեց «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության ընկերության» նախագահ, իսկ 1923 թ.՝ նաև երկրի նախագահ, սակայն այս ամենը տեղի ունեցավ օրենքների և ընթացակարգերի, ապա նաև Սահմանադրության համաձայն, այլ ոչ թե նրա անձնային խարիզմատիկ հատկանիշների հիման վրա: Ավելին, չնայած ավտորիտար կառավարման մեթոդներին, իր քաղաքական գործունեության ընթացքում Քեմալն ինքը կողմնակից էր իրավական ձևակերպումների և ընթացակարգերի մանրամասնությունների պահպանմանը[9]:

Ինչպես արդեն տեսանք, Աթաթուրքի՝ իշխանության գալն ու երկրի առաջնորդ ընտրվելը չեն կարող խարիզմատիկ համարվել վեբերյան իմաստով, սակայն անհատի պաշտամունքը պարուրել էր նրա կերպարը՝ ստեղծված իր իսկ կողմից, և շարունակվում էր անգամ իր մահից հետո՝ պարզորոշ կերպով կրելով խարիզմատիկ առաջնորդության բնութագիր: Ուստի խարիզման կարևոր դեր է խաղացել Թուրքիայի Հանրապետության «քաղաքական թատերաբեմում»: Անհատի պաշտամունքը, որում օգտագործվում է անգամ մահացած առաջնորդի խարիզման, արտառոց կերպով արդյունավետ է՝ պատկառանք առաջացնելու Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի նկատմամբ[10]:

Խարիզմատիկ առաջնորդության կառուցարկման սկզբնական փուլը, որը համընկավ հանրապետության վաղ տարիների հետ, նշանավորվում է հանրապետության տարբեր շրջանների խոշոր քաղաքներում արձանների և հուշարձանների կանգնեցմամբ: Իսլամում նկարչության ու քանդակագործության միջոցով անձի պատկերումը համարվում է Ալլահի հանդեպ գործած մեղք[11], և այս քայլով քեմալականները զուգահեռաբար փորձում էին պայքարել իսլամական ավանդույթների և կարծրատիպերի դեմ:

Առաջին արձանը կանգնեցվեց 1926 թ. Ստամբուլի Սարայբուրնու թաղամասում (Նկ. 1), որի ավստրիացի

Նկ. 1. Աթաթուրքի առաջին արձանը, Սարայբուրնու, Ստամբուլ, 1926 թ.

հեղինակն այդ նպատակով հրավիրվել էր Թուրքիա[12]: Հաջորդ տարի Անկարայում կանգնեցվեց ևս երկու հուշարձան՝ իտալացի քանդակագործ Պետրո Կանոնիկայի հեղինակությամբ: Վերջինս իր ժամանակների լավագույն քանդակագործ-հուշարձանագործներից էր, և Քեմալն անձամբ էր հրավիրել նրան՝ ստանձնելու հուշարձանների կառուցման գործը[13]: Նույն քանդակագործի հեղինակած երկու այլ հուշարձաններ կանգնեցվեցին հաջորդ տարի: Դրանք էին Ստամբուլի Թաքսիմ հրապարակի «Հանրապետության հուշարձանը» և Քեմալի արձանը Կայսերի քաղաքում[14]: Թաքսիմ հրապարակում կանգնեցված «Հանրապետության հուշարձանը» (Նկ. 2) մի արձանախումբ է, որտեղ Մուստաֆա Քեմալն անդիմադրելիորեն ու անշեղորեն ընթանում է առաջ՝ իր ետևից տանելով անկախության պայքարի մյուս առաջնորդներին և իր համախոհներին[15]: 1931 թ. Քեմալի արձանը (քանդակագործ՝ Հ. Կիպպել) կանգնեցվեց Սամսունում, որտեղ 1919 թ. Քեմալի ժամանումով սկիզբ դրվեց Անկախության պատերազմին[16]:

Հետագայում ևս բազմաթիվ արձաններ և հուշարձաններ կանգնեցվեցին Թուրքիայի տարբեր վայրերում՝ հաճախ դրանց տալով մոդեռնիստական լուծումներ, ինչպիսին, օրինակ, 1970 թ. Ստամբուլի Հաջեթեփե համալսարանում կանգնեցված Աթաթուրքի արձանն է[17] (Նկ. 3, քանդակագործ՝ Հուսեյին Գեզեր):

Քեմալ Աթաթուրքն արտաքնապես տարբերվում էր անատոլիացի թուրքերից իր խարտյաշ մազերով ու կապտավուն աչքերով: Սակայն ավելի ուշ շրջանի նկարներում այս արտաքին հատկանիշները չափազանցված են: Դրանցում Աթաթուրքը պատկերված է շողացող ոսկե մազերով և թափանցող կապույտ աչքերով: Հանրապետության համեմատաբար վաղ շրջանում ցածր դասարաններում սովորող աշակերտներին սա ներկայացվում էր հետևյալ կերպ. «Երբ նա (Քեմալը) ծնվեց, նրա աչքերը վերցրին երկնքի գույնը, իսկ մազերը՝ արևինը»[18]: Նման պատումի նպատակը առաջնորդին առավելագույնս տարբերվող և գերմարդկային ներկայացնելն էր՝ այդպես կառուցարկելով նրա խարիզման:

Աթաթուրքի խարիզմայի, նրա անձնային

արտասովոր գրավչության և գերմարդկային որակների հիշատակումները գրականության մեջ վերաբերում են ուշ 30-ականներին և դրանից հետո[19] ընկած ժամանակաշրջանին: Դրանք մեծավ մասամբ հանդիպում են գեղարվեստական գրականության էջերում, և առաջին օրինակը Յաքուբ Ք. Քարաօսմանօղլուի «Անկարա» վեպն է, որը լույս տեսավ 1934 թ.[20]: Հետագայում նմանատիպ գեղարվեստական երկեր ավելի շատ գրվեցին և հրատարակվեցին:

Քեմալ Աթաթուրքի խարիզմատիկ առաջնորդության կառուցարկման նպատակով ստեղծվեցին նրան վեհացնող դերեր, որոնց օգնությամբ փորձ էր արվում ահռելի նշանակություն և կշիռ տալու Քեմալի ծավալած գործունեությանը:

Ըստ թուրքագետ Է. Ջյուրխերի՝ կարելի է առանձնացնել չորս հիմնական դերեր, որոնք վերագրվում են Քեմալին՝ ռազմական հերոս, ուսուցիչ, հայր և արդիականացման նախակարապետ:

Քեմալի՝ վաղ շրջանի գրեթե բոլոր արձանները պատկերում են նրան որպես ռազմական առաջնորդի՝ հեծյալ կամ հետիոտն: Առաջին բացառությունը Սարայբուրնուում՝ Ստամբուլի թաղամասերից մեկում կանգնեցված արձանն է, որում Աթաթուրքը պատկերված է որպես ուժեղ, վճռական առաջնորդ՝ մեկուսի քայլելով առաջ, հեռուն նայելով, ձախ ձեռքը բռունցք արած, սակայն քաղաքացիական հագուստով, առանց ռազմական խորհրդանիշների: Նկարներում ևս, որպես կանոն, Աթաթուրքը պատկերված է որպես ռազմական առաջնորդ՝ առաջ ընթացող, մարդկանց առաջնորդող, դեպի առաջ ուղղված ձեռքով, աչքերը հորիզոնին հառած: Քեմալի հանրահայտ և տարածված լուսանկարներից առանձնանում է Քոջաթեփեում արված մի լուսանկար, որում Քեմալը պատկերված է մտքերից հակված, մյուս զինվորականներից առանձին, մտախոհ քայլելիս[21] (Նկ. 4): Այս լուսանկարը դարձավ հեղափոխության առաջնորդի խորհրդանիշներից մեկը:

Վաղ 30-ականներին՝ արաբատառ գրից լատինատառ գրին անցնելուց և թուրքերին որպես քաղաքակրթության տարածողների ներկայացնող՝ թուրքական պատմության և լեզվի նոր տեսությունները ներկայացնելուց հետո, որում Քեմալ Աթաթուրքն ակտիվ դերակատարում ուներ, նա սկսեց պատկերվել որպես ազգի ուսուցիչ: Մասնավորապես շատ հայտնի դարձավ մի լուսանկար, որում Քեմալ Աթաթուրքը Ստամբուլի Գյուլհանե այգում գրատախտակի վրա ցուցադրում է լատինատառ այբուբենը (Նկ. 5): Այն բազմաթիվ օրինակներով տարածվեց՝ դառնալով Քեմալի ամենահայտնի նկարներից մեկը[22]:

Հաջորդը հոր դերն է, որով Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը հանդես է գալիս մասնավորապես 30-ականների կեսից հետո: Հանրապետության երիտասարդ սերնդի և երեխաների նկատմամբ նրա վերաբերմունքը առանձնակի ուշադրության է արժանացել: 1927 թ. իր վեցօրյա ճառում Աթաթուրքը բացորոշ կերպով դիմում է թուրք երիտասարդությանը՝ նրան կտակելով ու նրա պահպանությանը հանձնելով իր ժառանգությունը (հանրապետությունը) և հայրաբար պատգամելով նրան պաշտպանել այն. *«Հեյ թուրք երիտասարդություն, առաջին պարտքդ է ընդմիշտ պահպանել ու պաշտպանել Թուրքիայի անկախությունն ու Թուրքիայի Հանրապետությունը»*[23]: Այս պատգամը, որը հետագայում ստացավ «Կոչ երիտասարդությանը» անվանումը, փակցված է բազմաթիվ հանրային վայրերում և Թուրքիայի Հանրապետության կրթության նախարարության բոլոր դպրոցներում: Այն կրկնվում է դպրոցներում դասերի ժամանակ, տպագրված է դասագրքերում և մաս է կազմում «Երիտասարդի երդման» տեքստին, որն արտասանում են թուրք դպրոցականները ամեն օր: Աթաթուրքի նկատմամբ սերը նույնացվում է ծնողի նկատմամբ սիրո հետ: Քեմալ Աթաթուրքը երեխա չի ունեցել, սակայն որդեգրել է տասներեք երեխայի՝ մեկ տղա ու տասներկու աղջիկ: Իր որդեգրյալ կրտսեր աղջկա՝ Ուլքյուի հետ լուսանկարներից մեկը լայն ճանաչում է գտել և շրջանառվում է՝ ցուցադրելով նրա հայրական սերը:

Վերջինը, որով ներկայացվում էր Քեմալի խարիզմատիկ կերպարը, արդիականացման նախակարապետի կերպարն է: Չնայած արդիականացումը դեռևս Օսմանյան կայսրության ժամանակներից ձեռնարկվել էր տարբեր ոլորտներում՝ բանակ, կառավարման համակարգ և այլն, այնուամենայնիվ, Քեմալը առաջինն էր, ով սկսեց արդիականացնել թուրք հասարակությունը: Այս դերում Քեմալը հանդես է գալիս շատ անբռնազբոս կերպով եվրոպական զգեստներ հագած և այնպիսի գործողությամբ զբաղվելիս, որը քեմալականների համար արևմտյան խորհրդանիշներ է պարունակում (ինչպիսին են վալս պարելը, լողալը, մեքենա վարելը, գոլֆ խաղալը և գնացքով ճամփորդելը): Աթաթուրքի՝ որպես ժամանակակից քաղաքակիրթ մարդու և քաղաքակրթող առաքելությամբ գործչի կերպարը հատկապես հոգեհարազատ էր քաղաքական ուղղվածությամբ անձանց համար՝ որպես քարոզչության նյութ:

Նկ. 2. «Հանրապետության հուշարձանը»

Գիտության և տեխնոլոգիաների զարգացումն իր հետ բերեց քարոզչության և, ըստ այդմ, նաև խարիզմատիկ առաջնորդության կառուցարկման նոր հնարավորություններ ու մեթոդներ: Հետագայում ստեղծվեցին և շրջանառության մեջ մտան Աթաթուրքի պատկերով կրծքանշաններ, շապիկներ, մեծածավալ պաստառներ, անգամ ժամացույցներ և կոշիկներ, իսկ արդեն թվային դարաշրջանում գովազդային հոլովակները, հեռուստացույցի էկրանին հայտնվող տարբեր տեսաուղերձները[24] սկսեցին աճող դեր ունենալ Աթաթուրքի անձի պաշտամունքի շարունակական ամրապնդման և դրա կենսունակության գործում:

Ելնելով Թուրքիայի Հանրապետության պատմության նորագույն շրջանի իրադարձություններից՝ կարելի է պնդել, որ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի պաշտամունքը «անմահ» է: Սա ամրագրված է նրա «հավերժ առաջնորդ» տիտղոսով, որը նրան շնորհվեց 1938 թ. դեկտեմբերի 26-ին Ժողովրդահանրապետական կուսակցության համագումարում[26]: ԺՀԿ-ն Աթաթուրքի թողած ժառանգության կարևոր բաղադրիչներից էր, որը շարունակեց երկրի ղեկավարումը մինչև 1950 թվականը: Աթաթուրքը հեղափոխական էր, ով «վեր է բարձրացնում սովորական թուրք մարդուն առօրյա միապաղաղ հոգսերից» և «մատնանշում է ապագայի տեսլականը[26]»: Նա «ճշմարիտ ուղեկից է, ով առաջնորդեց իր ժողովրդին մթությունից դեպի լույս և այսօր էլ շարունակում է առաջնորդել[27]»: Այսպիսին էր Աթաթուրքի կերպարը արդեն իր կյանքի վերջին տարիներին, և իդեալականացման այս գործընթացը շարունակվեց նաև նրա մահից հետո:

Քանի որ ի սկզբանե Աթաթուրքի իշխանության հիմքում դրված չէր բնական խարիզման, նրա իշխանության վերջին տարիներին և նրա մահից հետո կարիք չկար առօրեականացնելու նրա խարիզման՝ քեմալիզմի իշխանությունը հարատև դարձնելու համար, ինչպես պետք է ենթադրել, եթե հետևենք Վեբերի տեսությանը: Փաստ է, որ Աթաթուրքն ու նրա աջակիցները ստեղծեցին Թուրքիայի Հանրապետությունն ու դրա բաղկացուցիչ մաս կազմող այլ ինստիտուտներ, սակայն բոլոր այդ ինստիտուտները, որ զուգորդված էին պետությանը, և պետությանն առնչվող այլ ինստիտուտներ լայն իմաստով Աթաթուրքը կամ հանրապետությունը չէին ստեղծել, այլ ուշ շրջանի Օսմանյան կայսրության ժառանգությունն էին[28]: Անշուշտ, որոշ աստիճանական փոփոխություններ տեղի ունեցան, սակայն պետության ու կուսակցության կառուցվածքը և գաղափարը կայուն էին ու անփոփոխ[29]: Իսմեթ Ինյոնյուն, ով հաջորդեց Քեմալին նախագահի պաշտոնում, պահպանեց արդեն ձևավորված անհատի պաշտամունքի ինստիտուտը, սակայն, աստիճանաբար նվազեցնելով Աթաթուրքի պաշտամունքը, փորձում էր այն փոխարինել սեփականով:

Շրջանառության մեջ դրվեցին նոր թղթադրամներ՝ Ինյոնյուի դիմանկարով, նոր փոստային նամականիշներ թողարկվեցին նրա նկարներով[30]: Սակայն, 1950 թ. Դեմոկրատական կուսակցության՝ իշխանության գալով, Ինյոնյուի անհատի պաշտամունքը շատ արագ փլվեց: Երկրի միանձնյա ղեկավարումը կորցնելով՝ նա ստանձնում է ընդդիմության առաջնորդի դերը, ինչը, սակայն, անհանգստացնում էր օրվա իշխանություններին, քանի որ վտանգ կար, որ այդ «դերում» Ինյոնյուն հնարավորություն կունենար մոբիլիզացնելու բանակի և բյուրոկրատիայի շարքերում գտնվող ընդդիմադիրներին ընդդեմ իշխանության: Այս խնդրի լուծման համար «հարություն տրվեց» Աթաթուրքի պաշտամունքին[31]: Ձևավորվեց մի մոտեցում, ըստ որի՝ քեմալիզմի բոլոր նվաճումները վերագրվում էին Քեմալ Աթաթուրքին, իսկ ձախողումները՝ Իսմեթ Ինյոնյուին[32]: Կանխելու համար ցանկացած ոտնձգություն Աթաթուրքի և նրա հիշատակի նկատմամբ՝ դեմոկրատական խորհրդարանն ընդունեց մի օրենք, որով հանցագործություն էին որակվում Աթաթուրքին ուղղված վիրավորանքը, նրա հիշատակի պղծումը[33]:

Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի ժառանգության պահպանումը, առանց այդ մասին հայտարարելու, իր պարտականությունն էր դարձրել թուրքական բանակի էլիտան, որն այն համարում էր քեմալիզմի հիմքը, և Թուրքիան ալեկոծած ռազմական հեղաշրջումներին միշտ հաջորդում էին Քեմալ Աթաթուրքի անձի պաշտամունքի ուժեղացումն ու ժառանգության նորովի վերարժևորումը:

Քեմալ Աթաթուրքի ժառանգությունն այսօր էլ շարունակում է ապրել Թուրքիայում, որոշ չափով էլ՝ իսլամական աշխարհում: Աթաթուրքի մտավոր գործունեության արդյունքը հավասարազոր չէ ամբողջական գաղափարախոսության, սակայն նրա գործունեության տարբեր դրվագների և աշխատությունների տարբեր մեկնաբանությունների հիման վրա ձևավորվել և զարգացել է մի գաղափարախոսություն՝ քեմալիզմ, իսկ ավելի ուշ՝ աթաթուրքիզմ անվամբ:

Չնայած որ թուրք կառավարող վերնախավը ներդրել է զգալի ջանքեր քեմալիզմի զարգացման մեջ՝ որպես պաշտոնական գաղափարախոսության (հատկապես

Նկ. 3. Հաջեթեփե համալսարանում կանգնեցված Աթաթուրքի ածանը

1960 թվականից հետո), հաճախ դժվարանում ենք կապել քեմալիզմի՝ գնալով աճող պետական դոկտրինը Աթաթուրքի ժառանգության հետ: Սակայն այս փաստերից և ոչ մեկը չի նվազեցնում այն կտրուկ փոփոխությունների նշանակությունը, որոնք առաջ բերեց Աթաթուրքը, ինչպես նաև չի նվազեցնում դրանց մերօրյա անսպասելի հետևանքները: Իր ուտոպիայի իրականացմանը միտված ջանքերով Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը արմատական վերաձևումների ենթարկեց թուրքական պետությունն ու հասարակությանը, և այս ամենի հետևանքով ո՛չ Թուրքիան, ո՛չ էլ անգամ իսլամական աշխարհը երբևէ կրկին չեն լինի այնպիսին, ինչպիսին էին Քեմալ Աթաթուրքից առաջ[34]:

Քեմալիզմը՝ որպես մի յուրօրինակ պետական հավատքի համակարգ, դարձել է հանրապետության հիմնադրի ամենաճկուն ժառանգությունը[35]: Այսօր Թուրքիայի Հանրապետության ռազմական կրթության հաստատություններում դասավանդվում է կառավարության կողմից հաստատված և երաշխավորված «Աթաթուրքիստական մտածողության համակարգ»[36] առարկան, որը սպայակազմի կողմից ընդունված է համարել ռազմական կրթության ոգի[37]: Բոլոր համալսարաններում, անկախ մասնագիտական ուղղվածությունից, ավարտական կուրսի ուսանողները դիպլոմ ստանալու համար պարտավոր են հանձնել «Թուրքիայի հեղափոխության պատմություն» և «Աթաթուրքի սկզբունքներ» առարկաներից քննություն (սա մեզ հիշեցնում է ԽՍՀՄ ուսումնական հաստատություններում տիրող նույն վիճակը «ՍՄԿԿ պատմության», «Գիտական կոմունիզմի» և կուսակցական-գաղափարախոսական այլ առարկաների առումով): Հանրապետության նախագահն ու խորհրդարանի պատգամավորները իրենց պաշտոնները ստանձնելիս երդվում են «հավատարիմ մնալ Աթաթուրքի սկզբունքներին և բարեփոխումներին»[38]:

Սակայն ժամանակի ընթացքում «հավերժական ղեկավարի» ժառանգությունը ցուցաբերում է իր հիմնական բնութագիրը կորցնելու միտում[39]: Այսօր

Նկ. 5. Քեմալը ցուցադրում է լատինատառ այբուբենը

Նկ. 4. Քեմալը՝ Քոջաթեփեում

քեմալիզմը ավելի շուտ կարող է դիտվել Թուրքիայի կառավարող վերնախավի մի հատվածի կողմից օգտագործվող գործիք՝ մեկնաբանելու երկրում տիրող դրությունը Աթաթուրքի ասույթների ու գործերի վկայակոչմամբ, և յուրաքանչյուր ոք այս դժվարըմբռնելի մեջբերումների էությունը հասկանում է յուրովի: Հետևաբար դրա էությունը կախված է համատեքստից և այն մեջբերողից: Քեմալիզմը կարելի է օգտագործել՝ աջակցելու և՛ էտատիստական կամ լիբերալ, և՛ ազգայնական կամ սոցիալիստական, և՛ կրոնական կամ գիտական, ինչպես նաև էլիտիստական կամ պոպուլիստական գաղափարներին: ■

Հղումներ

1- Տես Andrew Mango, Atatürk, New York, 2002 էջ 156:
2- Տես նույն տեղում, էջ 146:
3- Տես Erik-Jan Zürcher, In the name of the father, the teacher, and the hero: the Atatürk personality cult in Turkey, New York, 2012 էջ 4:
4- Տես նույն տեղում, էջ 4:
5- Տես նույն տեղում, էջ 4:
6- Տես նույն տեղում, էջ 10:
7- Տես նույն տեղում, էջ 12:
8- Տես նույն տեղում, էջ 11:
9- Տես նույն տեղում, էջ 12:
10- Տես նույն տեղում, էջ 12:
11- Տես Walter B. Denny, Atatürk and Political Art in Turkey, Turkish Studies Association Bulletin, Vol. 6, No. 2 (September, 1982), էջ 17:
12- Տես Erik-Jan Zürcher, նշվ. աշխ., էջ 3:
13- Տես նույն տեղում, էջ 3:
14- Տես նույն տեղում, էջ 3:
15- Տես Walter B. Denny, նշվ. աշխ., էջ 18:
16- Տես Erik-Jan Zürcher, նշվ. աշխ., էջ 3:
17- Տես Walter B. Denny, նշվ. աշխ., էջ 20:
18- Տես Erik-Jan Zürcher, նշվ. աշխ., էջ 10:
19- Տես նույն տեղում, էջ 11:
20- Տես Yakup Kadri Karaosmanoğlu, Ankara, Ankara: Akba, 1934:
21- Տես Walter B. Denny, նշվ. աշխ., էջ 17:
22- Տես Erik-Jan Zürcher, նշվ. աշխ., էջ 8:
23- Nutuk, Gazi Mustafa Kemal Tarafindan, Ankara: n.p., 1927, էջ 430.
24- Տես Erik-Jan Zürcher, նշվ. աշխ., էջ 11:
25- Տես նույն տեղում, էջ 11:
26- Տես նույն տեղում, էջ 11:
27- Տես նույն տեղում, էջ 11:
28- Տես նույն տեղում, էջ 11:
29- Տես նույն տեղում, էջ 11:
30- Տես նույն տեղում, էջ 5:
31- Տես նույն տեղում, էջ 5:
32- Տես նույն տեղում, էջ 5:
33- Տես նույն տեղում, էջ 5:
34- Տես M. Şükrü Hanioğlu, Atatürk: An Intellectual Biography, Princeton, 2013, էջ 198:
35- Տես նույն տեղում, էջ 198:
36- Տես նույն տեղում, էջ 198:
37- Տես նույն տեղում, էջ 198:
38- T. C. 1982 Anayasasi: 1993 Değişiklikleriyle, ed. A. Şeref Gözübüyük, Ankara: Turhan Yayinevi, n.d. [1993], s. 88, 71.
39- Տես M. Şükrü Hanioğlu, նշվ. աշխ., էջ 198:

Մշակութային ժառանգութեան տարրերը արդիականացնելով հաստատուն քայլերով ուղղուիլ դէպի երաշխաւորեալ ապագայ:

Հարցազրոյց «Համազգային» հայ կրթական և մշակութային միութեան կեդրոնական վարչութեան ատենապետ Մկրտիչ Մկրտիչեանի հետ

«Դրօշակ» – Ընկեր Մկրտիչեան, մամուլէն տեղեկացանք, որ վերջերս այցելած էք Մոսկուա՝ այնտեղ «Համազգայինի» շրջան մը կեանքի կոչելու համար: Կրնա՞ք մանրամասնել:

Մկրտիչ Մկրտիչեան – Առաջին անգամ չէր, որ Մոսկուա կ՚երթայինք: Անցեալ մայիսին այնտեղ էինք «Համազգայինի» կառոյց հիմնելու մտադրութեամբ: Կորիզ մը կազմուած էր արդէն բոլորովին ինքնաբուխ կերպով: Մայիսին նշանակուեցաւ ժամանակաւոր վարչութիւն մը՝ նախնական աշխատանքները տանելու առաքելութեամբ: Այս անգամ յաւելեալ խորհրդակցութիւններով կարելի եղաւ կազմակերպել միութեան հիմնադիր ժողովը, որուն աւարտին ընտրուեցաւ մայրաքաղաքի վարչութիւնը: Նոյնը տեղի ունեցաւ Ս. Փեթերսպուրկի մէջ:

«Դ.» – Չէ՞ք կարծեր, որ բաւական ուշացումով կը ձեռնարկէք Ռուսիոյ մէջ «Համազգայինը» կազմակերպելու գործին:

Մ. Մ. – Իրաւունք ունի՞ք: «Համազգայինը» շատոնց պէտք է այնտեղ հաստատուած ըլլար: Այդպէս ալ նախատեսուած էր: Արդարև, ԱՊՀ միջպետական կառոյցին մէջ «Համազգայինը» կազմակերպելու որոշումը առնուած է երկրորդ պատգամաւորական ժողովին՝ դեռ 1994-ին: Յապաղումի հիմնական պատճառներէն մէկը այդ ժամանակաշրջանին միութեան՝ իր համահայկական աշխատանքը հունաւորելու ճիգն էր: Չմոռնանք, որ «Համազգայինը» միայն 1990-ին համագաղութային կառոյցով կազմակերպութիւն դարձաւ: Ատկէ անկախ, սակայն, խոչընդոտ էր նաև այն, որ «Համազգայինի» պատասխանատուները բոլորովին անծանօթ էին ԱՊՀ-ի և Արևելեան Եւրոպայի երկիրներու հայկական համայնքներուն: Պէտք է միաժամանակ խոստովանիլ, որ Ռուսիոյ պարագային ալ նախաձեռնողները Մոսկուայի մեր ընկերները եղան: Այս հանգամանքը մեզի կը ներշնչէ վստահութիւն, որ գործը ի սկզբանէ կը դրուի ամուր հիմերու վրայ: Մոսկուայի մէջ վերջին մէկ տարուան ընթացքին կեանքի կոչուած են բազմաթիւ մշակութային ձեռնարկներ, աւելին՝ արդէն կը գործեն շաբաթօրեայ երկու դպրոցներ, իւրաքանչիւրը՝ շուրջ յիսուն աշակերտներով: Նոյնպիսի աշխատանքներ սկսած են Ս. Փեթերսպուրկի մէջ:

«Դ.» – Վերջին երկու տարիներուն համայն աշխարհը ցնցուեցաւ մինչև այսօր շարունակուող թագաժառիրի համավարակով: «Համազգայինի»՝ աշխարհով մէկ տարածուած կառոյցը ինչպէ՞ս կրցաւ գործել այս մթնոլորտին մէջ:

Մ. Մ. – Անխուսափելիօրէն մեծ դժուարութիւններ ունեցանք: Սկզբնական շրջանին մեր մտահոգութիւններուն հիմնական առարկան կրթական մարզն էր: Հետևելով համավարակի վերիվայրումներուն՝ որդեգրուեցան հեռավար կամ ընթացիկ ուսուցման տարբերակները: Այս ձևով Պէյրութի «Մելանքթոն և Հայկ Արսլանեան» և Մարսէյի «Համազգային» երկլեզու մեր ճեմարանները գործեցին գրեթէ անխափան: Մեր կրթական զոյգ հաստատութիւններու ուսուցչական կազմերու և ընդհանրապէս պաշտօնէութեան նուիրումը անգամ մը ևս յստակօրէն երևաց: Տարեվերջի պետական պաշտօնական քննութիւններուն մեր աշակերտութեան բացարձակ յաջողութիւնը ապացոյցն է անոնց տարած աշխատանքին: Անշուշտ, պէտք է նկատի ունենալ, որ դպրոցական մակարդակին հեռավար ուսուցումը դիւրաւ հասկնալի պատճառներով նոյնքան արդիւնաւէտ չէ, որքան ուսուցիչի և դաստիարակի ֆիզիքական ներկայութեամբ դասաւանդութիւնը: Կրնանք երևակայել, թէ ինչքան դժուարացաւ ուսուցչական կազմի գործը այսպիսի պայմաններու մէջ. անոնց թափած ճիգը անգնահատելի է: Նոյնը կարելի է ըսել Սիտնիի Համազգայինի «Արշակ և Սօֆի Գոլստըն» ճեմարանին համար, որ կը գործէ Աւստրալիոյ շրջանային վարչութեան հովանիին տակ, նաև Փարիզի շրջանի Իսսի-լէ-Մուլինոյի մէջ գործող Համազգային-Թարգմանչաց նախակրթարանի պարագային:

«Դ.» – Վստահ ենք, որ Լիբանանի մէջ գործող ճեմարանը, համավարակի պարտադրած դժուարութիւններու կողքին, երկրի իրապատուկ վիճակը նկատի ունենալով, նաև այլ տեսակի մարտահրաւէրներու դիմաց գտնուած է:

Մ. Մ. – Անշուշտ, և ոչ միայն ճեմարանը: Կեդրոնական վարչութիւնը (ԿՎ) և իր բոլոր հաստատութիւնները, Շրջանային վարչութիւնը և իր հաստատութիւնները, ողջ լիբանանահայութիւնը 2019-ի հոկտեմբերէն սկսեալ մինչև այսօր ենթարկուած են հետզհետէ մագլցող տնտեսական դժուարութիւններու, սահմանափակումներու: Սկսելով ճեմարանէն՝ հասցուած վնասը զգալի դարձաւ Լիբանանի մէջ գործող մեր բոլոր կառոյցներուն համար: Ամէնէն կարևորը՝ ԿՎ-ի ֆինանսական կարողականութիւնը ոչ միայն արժեզրկուեցաւ, այլև իր այդ արժեզրկուած վիճակին մէջ իսկ սահմանափակումներով միայն օգտագործելի եղաւ: Դպրոցի պարագային, վճարողական կարողականութիւնը զգալիօրէն պակսած ըլլալով, ծնողները դժուարութիւն ունեցան նոյնիսկ արժեզրկուած դրամանիշով վճարելու իրենց զաւակներուն թոշակները: Պէտք է ըսել, սակայն, որ մեր ծնողները ամէն ճիգ կը թափեն իրենց պարտաւորութիւնները լրիւ կատարելու համար: Ատիկա, ի շարս այլոց, մասամբ արդիւնք է հաստատութեան ընկերային գրասենեակի արդար ու արհեստավարժ մօտեցումներուն: Նիւթական մարզէն ներս նշելի է համաշխարհային ներկայ տխուր վիճակին մէջ Մարսէյի ճեմարանի յաջողութիւնը: Խնամակալութիւնը ի վիճակի եղաւ Մարսէյի քաղաքապետութեան կողմէ տրամադրուած դպրոցի հողամասը սեփականացնելու: Միւս կողմէ՝ տնտեսական առողջ յանձնանձումին շնորհիւ խնամակալութիւնը այս տարեշրջանի աւարտին պիտի սկսի շինարարական աշխատանքի՝ երկու հարիւր յաւելեալ աշակերտի համար տեղ պատրաստելու նպատակով. վերջին տասնամեակին տնօրէնութիւնը պարտադրուած էր իւրաքանչիւր վերամուտին տեղի պակասութեան պատճառով աշակերտ մերժելու: Եթէ ամէն ինչ լաւ ընթանայ, 2023-ի վերամուտէն սկսեալ դպրոցը ի վիճակի պիտի ըլլայ ընդունելու մինչև վեց հարիւր աշակերտ:

«Դ.» – Բոլորս տեղեակ ենք, որ «Համազգայինը» սերտ գործակցութեան մէջ է Երևանի պետական համալսարանին հետ: Կրնա՞ք այդ մարզէն և ընդհանրապէս Հայաստանէն ներս «Համազգայինի» գործունէութեան մասին տեղեկութիւններ տալ:

Մ. Մ. – Այլ կերպ չէր կրնար ըլլալ հարկաւ. ԵՊՀ-ն և «Համազգայինի» Պէյրութի ճեմարանը նոյն կնքահօր՝ Նիկոլ Աղբալեանի սաներն են. Ն. Աղբալեան երկուքին ալ հասարակաց հիմնադիրներէն է:

Երևանի մեր գրասենեակը շարունակեց կազմակերպել տարեկան գիտաժողովները ԵՊՀ-ի հետ գործակցաբար: Իսկ ԵՊՀ-էն ներս հայագիտական նիւթերու ուսուցիչներու պատրաստութեան մեր նախաձեռնութիւնը տուած է արդէն իր առաջին պտուղները. ատենէ մը ի վեր հնգեակ մը շրջանաւարտներ կը պաշտօնավարեն Լիբանանի, Կիպրոսի և Ֆրանսայի հայկական վարժարաններուն մէջ:

«Դ.» – Կ՚ենթադրեմ, որ ուսուցչութեան ձեր թեկնածուները առաւելաբար արևմտահայերէն ուսուցանելու կը պարտաւորին: Հնարաւո՞ր է արևելահայերէնի իշխող մթնոլորտի մը մէջ հանգիստ արևմտահայերէն սորվիլ կամ ուսումնասիրել:

Մ. Մ. – Սփիւռքեան որոշ շրջանակներ արդէն կը քննադատեն մեր այս նախաձեռնութիւնը ճիշդ այդ պատճառով: Կը կարծենք, որ այդ մտավախութիւնը տեղին չէ: Այժմ, երբ շրջանաւարտները ասպարէզ իջած են, աւելի առարկայական կարծիք կարելի է կազմել իրենց կատարած գործը տեսնելով: Ամէն պարագայի, անկախ այս խնդիրէն, հայերէնն ու հայագիտութիւնն ընդհանրապէս հայրենի հողին վրայ սորվիլը ունի այլ առաւելութիւններ, որ կարելի չէ գտնել այլ մայրաքաղաքներու մէջ. ջուրն ու հողը, ժողովուրդը, յուշարձանները կը կազմեն կենդանի իրականութիւնը, մեր թեկնածուները ոչ միայն ուսում կը ստանան, այլև կ՚ընկալեն հայկական հոգին ու ոգին, հայրենի միջավայրը: Հիմնական փաստարկը անշուշտ այն է, թէ մեր թեկնածուները ԵՊՀ կը ժամանեն հետերնին բերելով արևմտահայերէնի ամուր պաշար: Ի դէպ, մենք շրջանաւարտ ունեցած ենք նաև արևմտահայերէնի ծնունդավայր Պոլիսէն: Եթէ չեմ սխալիր, հինգ տարիներէ ի վեր Երևան կ՚ապրի: Երբ հետը կը խօսիս, այն տպաւորութիւնը կ՚ունենաս, թէ ան օդանաւէն նոր իջած է:

«Դ.» – Այդպէս ուրեմն: «Համազգայինը» Ստեփանակերտի մէջ ալ գրասենեակ ունէր: Կը պահէ՞ք տակաւին այդ գրասենեակը:

Մ. Մ. – Անշուշտ: Հիմա՝ աւելի՛ով: Ստեփանակերտի մեր գրասենեակը անցեալ տարուան պատերազմէն ետք առաւելաբար զբաղեցաւ տեղահանուած մանուկներու և պատանիներու խմբակներու համար մշակութային զբաղումներ հայթայթելով, նախ՝ Երևանի, ապա՝ Արցախի մէջ: Այդ գործը կը շարունակուի: Համավարակի շրջանին թէ՛ Երևանի,

Բեյրութի «Մելանքթոն և Հայկ Արպլանեան» ճեմարանը

թէ՛ Ստեփանակերտի գրասենեակները ունեցան հրատարակչական գնահատելի գործունէութիւն:

«Դ.» – Քանի որ հրատարակչական գործին մասին խօսք բացիք, կրնամ խօսիլ ընդհանրապէս ԿՎ-ի հրատարակչական գործին մասին:

Մ. Մ. – Անպայման: Հրատարակչական գործը սկսած է «Համազգայինի» առաջին գործով՝ հայկական ճեմարանի հիմնադրութեամբ, քանի որ անհրաժեշտ էր նոր դասագիրքերու հրատարակութիւն: Ներկայ պայմաններուն մէջ, իհարկէ, հրատարակչական աշխատանքը տուժեց. տեղական դրամանիշի արժեզրկման զուգակցող անկայունութիւնը, պետական ծառայութիւններու՝ ժամանակի ընթացքին զգալի դարձող համեմատական քայքայումը, գրավաճառքի անկումը բնականոն զարգացման առջև լուրջ խոչընդոտներ ստեղծեցին: Փոխարէնը առաջ տարուեցան ելեկտրոնային գրավաճառքի (e-Library) համակարգ ստեղծելու աշխատանքները: Այսօր արդէն կը գործէ «Համազգայինի» ելեկտրոնային գրախանութը: Քանի մը ամիսէն կ՚աւարտի հրատարակչականի գրացուցակի բոլոր գիրքերու ելեկտրոնային տարբերակների պատրաստութիւնը: Անխուսափելիօրէն պակսեցաւ նոր հրատարակութիւններու և վերատպումներու թիւը:

Շարունակուեցաւ մանկապարտէզի նոր դասագիրքերու շարքի պատրաստութիւնը, և շուտով լոյս կը տեսնէ երկրորդ հատորը:

«Բագինը» ունեցաւ իր արդիական կայքէջը, որ ժամանակ մը փորձարկուելէ ետք յաջորդիւ կ՚իջնէ հրապարակ:

Հրատարակչական աշխատանքի ելեկտրոնային արդիականացումը կարելի կը դառնայ «Համազգայինի» գրասէր անհատներու և ի մասնաւորի «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան նիւթական շօշափելի օժանդակութեամբ:

«Դ.» – Մեզ վրայ շատ դրական տպաւորութիւն ձգող ձեռնարկը «Համազգայինի» ուսանողական հաւաքն է՝ ֆորումը: Դժբախտաբար, վերջին երկու տարիներուն ան տեղի չունեցաւ: Կրցաք զայն այլ գրաղումով փոխարինել:

Մ. Մ. – Համավարակի ընթացքին ֆորումը կազմակերպուեցաւ առցանց: Հարկաւ, նոյն տարողութիւնը չունեցաւ, բայց կարևոր է նաև ճիգը շարունակել ապագային հետ կապի թելը պահել կարենալու համար: Ատկէ դուրս՝ արդէն ատենէ մը ի վեր ԿՎ-ն որոշ շրջաններու հետ գործակցաբար կը կազմակերպէ երիտասարդական այլ հաւաքներ ևս: «ArtLinks»-ը Հիւսիսային Ամերիկայի երեք շրջանային վարչութիւններու կազմակերպութեամբ տեղի ունեցող եռօրեայ մշակութային հաւաք մըն է, իսկ «Youthlinks Europe»-ը՝ նոյնը եւրոպական ցամաքամասի վրայ:

«Դ.» – Իսկ ինչո՞ւ նոյնանման աշխատանքի մը չէք ձեռնարկեր աւելի փոքր տարիքի պատանիներու համար:

Մ. Մ. – Կամ կանոնաւոր կերպով տեղի ունեցող աշխատանքներ տարիքային այդ խումբին և ալ աւելի փոքրերու համար: «Լալան ու Արան» փոքր տարիքի խմբերի համար նախատեսուած՝ հաճելի գոյներով գծագրուած փոքր հերոսներու և անոնց ձայներու օգտագործումով տարրական հայերէնի վարժեցման ելեկտրոնային «գործակ» (app) է: Իսկ Միացեալ Նահանգներու Արևելեան շրջանի մէջ ԿՎ-ի հովանաւորութեամբ երկու տարիներէ ի վեր կը կազմակերպուի «Փեթակը», որ ցարդ տեղի ունեցած է միայն առցանց և կը միտի պատանիներուն հայերէնը հաճելի մեթոտով սորվեցնելու: Կը յուսանք, որ համավարակը, այլևս մէկ կողմ քաշուելով, կ՚արտօնէ, որ «Փեթակը» կազմակերպուի ճամբարային ջերմ մթնոլորտի մէջ:

«Դ.» – «Համազգայինի»՝ վերջին տարիներու նորութիւնը համացանցային բեմն է՝ www.h-pem.com-ը: Այս ձեռնարկը ինչպէ՞ս դիմակայեց տագնապներուն:

Մ. Մ. – Համացանցային բեմը հրապարակ իջաւ տարիներու բծախնդիր պատրաստութենէ ետք՝ 2019-ի մայիսին: Ատկէ վեց ամիս ետք սկսաւ Լիբանանի տնտեսական տագնապը: Ատկէ ալ կարճ ատեն ետք՝ համավարակի քաշքշուող ոդիսականը: Համավարակի պարտադրած մեկուսացման ժամանակ www.h-pem.com-ի այցելուներու թիւը բնականաբար աւելի կը մեծնար: Բայց տնտեսական կարողականութեան տկարացումը պատճառ դարձաւ, որ ատեն մը ետք պիտճէական պատշաճեցումով ձեռնարկը զրկուի իր արտալիբանանեան թղթակիցներէն, որոնք անհրաժեշտ էին ձեռնարկի լիակատար արդիւնաւէտութեան համար: Երեք լիաժամ աշխատող մասնագէտներով կատարուող գործը ներկայիս կը կատարուի մէկ հոգիով: Հասկնալի է, որ այդ պատճառով ձեռնարկի գոնէ աշխուժութիւնը պակսած ըլլայ:

«Համազգային»ի Մարսելի ճեմարանի բակը

«Դ.» – Ձեր խօսքէն յայտնի է, որ համացանցային բեմը ձեր սրտին խօսող աշխատանք է: Սակայն գիտենք նաև, որ այս ծրագիրը ունի նաև իր ընդդիմադիրները: Ինչո՞ւ է այդպէս:

Մ. Մ. – Դժգոհներու գոյութեան և անոնց փաստարկներուն մասին տեղեակ եմ: Անոր մէջ անբնական ու տարօրինակ ոչինչ կայ. դասական՝ հինի և նորի միջև պայքարի մէկ արտայայտութիւնն է: Ի՞նչ է, վերջիվերջոյ, հ-բեմ ծրագրի փիլիսոփայութիւնը: Հ-բեմը միջազգային լեզուով՝ անգլերէնով, հայկական մշակոյթի ներկայացումը և անոր շուրջ խօսակցութիւնն ու քննարկումն է: Ան ուղղուած է օտարալեզու հայ երիտասարդութեան, որ այս կամ այն պատճառով պատեհութիւնը չէ ունեցած հայերէնը սորվելու: Մէկ խօսքով՝ հ-բեմ ձեռնարկը դիմադրութեան գործիք մըն է այն ճնշումին դէմ, որ յատուկ ծրագրումով կամ ոչ կը բանեցուի փոքր հաւաքականութիւններու մշակոյթներուն վրայ՝ սպառնալով անոնց գոյութեան իսկ: Հ-բեմով կը հետապնդուի հայ երիտասարդութիւնը հայութեան ծիրին մէջ պահելու նպատակը՝ անոր մէջ վառ պահելով հայկական ինքնութեան ցցուն տարրերը: Այս իմաստով հ-բեմը ազգային ծրագրի մէկ մասնիկն է: Թերևս մասնակի, բայց սփիւռքեան պայմաններու մէջ կարևոր ձեռնարկ է. մեր պայմաններուն մէջ ամէն մարդ հայկական վարժարան յաճախելու կարելիութիւնը կամ կամքը չունի:

«Դ.» – Կրնա՞ն ըլլալ, որ այս ծրագրի քարոզչութիւնը բաւարար չափով տարածում չգտա:

Մ. Մ. – Կրնայ ըլլալ: Պէտք է ըսել, որ կարծես թէ «Համազգայինը» և իր լայն շրջանակը ի բնէ ինքնաքարոզչութեան հանդէպ իւրօրինակ հակակրանք մը ունին, որ յաճախ ձախողութեան կը մատնէ այս կամ այն լաւ գործը: Սակայն գոյութիւն ունի նաև հայապահպանման պահպանողական մօտեցում մը՝ յաճախ ինքզինքին անգիտակցաբար վնաս հասցնելու աստիճան: Օրինակ՝ երբ աղուամազոտ նորընծայ երիտասարդ էի, մեզի ներշնչած էին այն համոզումը, որ Միացեալ Նահանգներու մէջ հայկական դպրոց ունենալը անիմաստ է, թէ այդ ցամաքամասը արհեստավարժ խառնարան մըն է, ուր անկարելի է ազգային ինքնութիւն ու նման բաներ պահելը, թէ պէտք է հրաժարիլ այնտեղ հայկական վարժարան ունենալէ և փոխարէնը այդ նպատակին համար միջոցները պէտք է ներդնել Միջին Արևելքի միջավայրին մէջ: Կասկած չկայ, որ Միջին Արևելքը լաւագոյնս արդարացուց իր վրայ դրուած յոյսերը, սակայն այդ քաղաքականութենէն ամերիկահայութիւնը զգալաբար տուժեց: Այսօր կը տեսնենք, որ անհատական նախաձեռնութեան մը շնորհիւ փաստուեցաւ, որ այնտեղ ալ հայկական վարժարանը վերապրելի է, պարզապէս, ինչպէս որևէ այլ ոլորտի մէջ, կրթական գործադաշտին մէջ ալ նիւթական անհրաժեշտ ներդրումը աւելի բարձր

«Համազգային»ի Արցախի մասնաճիւղի ցուցահանդեսը նուիրուած 44 օրյա պատերազմին

է: Կը կարծեմ, թէ հ-բեմի պարագան ալ նոյնն է: Անհրաժեշտ է, բայց համեմատաբար թանկ է, սակայն ակնկալուած արդիւնքը՝ թանկագին. ան փրկութեան լաստ է ամերիկեան համալսարաններուն մէջ մխրճուող, այնտեղ հալողգացող հայկականութեան համար: Հ-բեմի ծրագիրը ոչ միայն հայ մշակութասէր երիտասարդութիւնը հայկական որակաւոր մշակոյթի շուրջ համախմբելու ծառայութիւնը կը մատուցէ, այլև այդ մշակոյթը օտար հասարակութիւններու ներկայացնելու և սիրցնելու: Փորձը ցոյց տուաւ, որ այսպիսի ծրագիր մը անհրաժեշտ է Հայ դատի աշխատանքներուն մէջ նետուած երիտասարդներուն համար և ոչ միայն:

«Դ.» – Ձէ՞ք կարծեր, որ այդ իսկ պատճառով այս աշխատանքին ուղղութիւնը դէպի քաղաքականութիւն կ՚առաջնորդէ:

Մ. Մ. – Մարդկային կեանքի բոլոր ոլորտները հեռուէն կամ մօտէն քաղաքականութեան առնչուած են: Միշտ այդպէս եղած է: Ժամանակին հողը, ջուրը, օդն ու կրակը արիստոտելեան բնագիտութեան ու փիլիսոփայութեան հիմնաքարերն էին: Մեր օրերուն ինչո՞վ կը զբաղին բնապահպանման նախաբարութիւնները:

«Դ.» – Փիլիսոփայութի՞ւն: Կրնա՞ք մեզի մէկ նախադասութեամբ բացատրել «Համազգայինի» նման միութիւններու գործունէութեան «փիլիսոփայութիւնը»:

Մ. Մ. – Փորձենք: Մշակութային ժառանգութեան տարրերը արդիականացնելով հաստատուն քայլերով ուղղուիլ դէպի երաշխաւորեալ ապագայ:

«Դ.» – Ընկեր Մկրտիչեան, շնորհակալ ենք համապարփակ ներկայացումին համար:

Մ. Մ. – Ես եմ ձեզի շնորհակալ ընձեռած առիթին համար: ■

Անմահները

Արմեն Առուստամյան

Ծնվել է 2001 թ. հունվարի 19-ին Երևանում: Նախնական կրթությունը ստացել է Երևանի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 52 դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել է Մանուկ Աբեղյանի անվան թիվ 3 դպրոցում: 2016 թ. անդամակցել է ՀՄԸՄ-ՀԱՄԿ-ի Նոր Նորք համայնքի «Յովհաննէս Հինդլեան» մասնաճյուղին:

2017-2019 թթ. սովորել է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի համակարգչային գիտության բաժանմունքում: 2019 թ. զորակոչվել է և ծառայել Արցախի Հանրապետության պաշտպանության բանակում: Մարտական գործողության ժամանակ վիրավորվել է, սակայն վիրավոր վիճակում ձգտել է փրկելու ընկերներին:

2020 թ. արցախյան պատերազմի առաջին իսկ օրից մասնակցել է մարտական գործողություններին և հմտորեն ղեկավարել իրեն վստահված անձնակազմի գործողությունները: Հերոսաբար նահատակվել է նոյեմբերի 9-ին՝ հավատարիմ մնալով իր դավանած սկաուտական երդմանը:



Ալբերտ Խառատյան

Ծնվել է 1995 թ. սեպտեմբերի 3-ին Կոտայքի մարզի Պռոշյան գյուղում: Սովորել է Պռոշյանի Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցում: Ուսումը շարունակել է Երևանի Ձարդարվեստի պետական արհեստագործական ուսումնարանում ընտրելով մանրանկարչությունը:

2014-2016 թթ. ծառայել է հայոց բանակում որպես տանկի վարորդ-մեխանիկ և ստացել կրտսեր սերժանտի կոչում: Մասնակցել է նաև 2016 թ. ապրիլյան պատերազմին:

2020 թ. հոկտեմբերի 2-ին «Կամավորական շարժում» ՀԿ 2-րդ հրաձգային վաշտի կազմում մեկնել է առաջնագիծ:

Հերոսաբար զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 6-ին Վարանգաթաղի բարձունքում Մատաղիսի մատույցներում, իր 21 նվիրյալ ընկերների հետ:

Ալբերտ Խառատյանը Արցախի նախագահի հրամանագրով հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Մավրիկ Գրիգորյան

Ծնվել է 1983 թ. Արցախի Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում:

1990-2000 թթ. սովորել է հայրենի գյուղի Վարդան Ջիվանշիրյանի անվան դպրոցում:

2001-2003 թթ. ժամկետային զինծառայություն է անցել Մադաղիսի զորամասում:

2013-2016 թթ. եղել է պայմանագրային զինծառայող: Ծառայության ընթացքում աչքի է ընկել պատրաստակամությամբ ու խիզախությամբ, հանձն է առել ամենադժվար ու վտանգավոր մարտական առաջադրանքները: 2015 թ. Արցախի նախագահ Բակո Սահակյանի կողմից արժանացել է «Մարտական ծառայության համար» մեդալի:

Մասնակցել է նաև 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմին:

2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված Արցախյան 3-րդ պատերազմի ժամանակ կրկին մարտական առաջին շարքերում էր: 10 օր դիրքերում գտնվելուց հետո տեղափոխվել է հարազատ գյուղ, որը, լինելով խոր թիկունքում, վերածվել էր առաջնագծի և հայտնվել թշնամու՝ դեպի Շուշի տեղաշարժի ճանապարհին: Զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 29-ին գյուղի մատույցներում թշնամու նշանառուի դավադիր գնդակից:

Հերոս հայորդու աճյունը ամփոփված է Եռաբլուր զինվորական պանթեոնում: ՀՅԴ անդամ էր: Ուներ երեք զավակ:

Արմո Ավանեսյան

Ծնվել է 1967 թ. դեկտեմբերի 15-ին Մարտունու շրջանի Կոլխոզաշեն գյուղում: 1985 թ. ավարտելով գյուղի միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Կիրովաբադի ժողտնտեսության ինստիտուտի էլեկտրաֆիկացիայի բաժինը: Ուսումը կիսատ թողնելով՝ ծառայության է մեկնել խորհրդային բանակ: Զորացրվելուց հետո ուսումը շարունակել է Երևանում:

Հենց սկզբից ակտիվորեն մասնակցել է Արցախյան շարժմանը: Մասնակցել է Արցախյան առաջին պատերազմին, որի ընթացքում եղել է գյուղի նախագահը: 2003 թ. ընտանիքով տեղափոխվել է Ստեփանակերտ, աշխատել է տնտեսության տարբեր բնագավառներում:

Զոհվել է 2020 թ. նոյեմբերի 1-ին վիրավորներին տեղափոխելիս, հակառակորդի անօդաչուի հարվածից:

Ամուսնացած էր, ուներ երեք զավակ: ՀՅԴ անդամ էր:

Հանգչում է Ստեփանակերտի հուշահամալիրում:

Սուրեն Հովսեփյան

Ծնվել է 1979 թ. հունիսի 17-ին: Մինչև 9-րդ դասարանը հաճախել է Պոռշյանի միջնակարգ դպրոց, այնուհետև տեղափոխվել է Արցախ՝ հայրենի Չլդրան գյուղ, որտեղի դպրոցում ուսանել է մեկ տարի: 10-րդ դասարանում վերադարձել է Պոռշյան գյուղ և ավարտել տեղի դպրոցը:

1997-98 թթ. ծառայել է հայկական բանակում:

2020 թ. սեպտեմբերի 27-ին անդամագրվել է ՀՅԴ «Կամավորական շարժում» ՀԿ-ին և գումարտակի 2-րդ վաշտի կազմում հոկտեմբերի 2-ին մեկնել է Արցախ ու անմիջապես ընդգրկվել պատերազմական գործողություններում Վարանգաթաղի (Լուլասազ) բարձունքի շրջանում: Հերոսաբար զոհվել է հոկտեմբերի 6-ին՝ Մարտակերտի շրջանի համար մղված մարտերի ժամանակ՝ կյանքի գնով պաշտպանելով Վարանգաթաղի բարձունքը:

Մարտական գործողությունների ընթացքում ցուցաբերած արիության համար ԱՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Հ.Յ.Դ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂԵԳԻԾ ԵՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Հայաստանը համայն հայութեան հայրենիքն է: Առ այդ, Հայաստանի Հանրապետութիւնը իր հոգածութիւնը պէտք է տարածէ հայրենաբնակ ու արտերկրի հայութեան վրայ...

Հողատարածքը, որուն վրայ կերտուած է հայոց հայրենիքը, միշտ ենթակայ եղած է աշխարհագրական, քաղաքական, ռազմական և տնտեսական անբարեյաջող պայմաններու, որոնց իրրև հետևանք՝ ազգի ու հայրենիքի լինելիութեան և գոյութեան ճիգը տիրապետած է հայ ժողովուրդի նկարագրի կազմաւորման մէջ: Հողին կառչող կամ հողը լքող, մարտունակ կամ երկչոտ, ազնուասիրտ կամ անձնապաշտ՝ հայը իր դիմադրութեամբ կամ իր նահանջով գրած է հայութեան պատմութիւնը և գծած է Հայաստանի սահմանները:

Կարելի է թերևս յուսալ, որ ապագայ վերիվայրումները կը ստեղծեն հայ ազգային նպատակներուն իրականացման նպաստող պայմաններ, սակայն նոյն տարերային փոփոխութիւնները կրնան նաև կործանել շրջափակուած երկիրն ու ժողովուրդը՝ պատճառելով տնտեսական ճգնաժամ, արտագաղթի աճ և նոյնիսկ տարածքային կորուստներ: Գալիք անկայուն իրավիճակներէն անվտանգ դուրս գալու համար երկիրը՝ ժողովուրդը և պետութիւնը, պէտք է ըլլան առաւելագոյն չափով պատրաստ ու միասամ՝ քաղաքական, տնտեսական, ռազմական, հասարակական և հոգեմտաւոր իմաստով:

Հայաստանի Հանրապետութիւնը կը գտնուի աշխարհաքաղաքական, տնտեսական և ռազմական սուր մրցակցութեան խաչմերուկներուն վրայ, ենթակայ՝ շրջանային և մեծապետական վտանգաւոր ճնշումներու: Երկրի ամբողջականութեան և քաղաքական անկախութեան պահպանման համար կենսական պայման են Հայաստանի պետականութեան ամրապնդումը, երկրի տնտեսական վերելքը, ժողովուրդի հաւաքական կամքի գոյացումը և ազատագրուած Արցախի հզօրացումը:

Սփիւռքի համայնքներ և պետական քաղաքականութիւն

Ազգին համար սփիւռքահայութիւնը ունի բարոյական և քաղաքական անժամանցելի արժէք ու կարևորութիւն: Հիմնականին մէջ իրրև Հայոց Ցեղասպանութեան հետևանք տարագիր դարձած հայերու անհատական և հաւաքական վերականգնումը, ինքնակազմակերպումը և քաղաքականացումը ազգային պատմական իրագործում է: Սփիւռքեան համայնքները կերտած են քաղաքական, տնտեսական և կազմակերպական իրայատուկ ներուժ, որ պէտք է հունաւորուի դէպի Հայաստանի հզօրացումը և համայն հայութեան ինքնահաստատումը:

Հայաստանի և Սփիւռքի համայնքներուն միջև յարաբերութիւնները կը բխին ազգի ամբողջականութեան և հայրենիքի հզօրացման՝ զիրար ամբողջացնող սկզբունքներէն: Հայաստանը ազգի տունն է և անոր գոյապայքարի կռուանը: Սփիւռքի հայութեան քաղաքական գիտակցութիւնը և ազգային ինքնութիւնը կը հիմնուին Ազատ և Անկախ Հայաստանի իրողութեան ու Միացեալ Հայաստանի տեսլականին վրայ:

Հ.Յ.Դ. 33-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԲԱՆԱՁԵՒԵՐ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
ԵՐԵՒԱՆ, 2019 թ.

ԴՐՕՇԱԿ

Հունվարի 28-ը
ՀՀ զինված ուժերի օրն է